



## Հիմնադիր և հրատարակիչ՝

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱՋՈՒԹՅՈՒՆ

# ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

## № 107 2018

ՀՀ ԴԱՏԱԽԱՋՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

Տպագրվում է 1997 թվականից, ՀՀ գլխավոր դատախազ Հենրիկ Խաչատրյանի նախաձեռնությամբ

### ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

**Դավիթ Մելքոնյան** Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ, իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ջրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ (խորհրդի նախագահ)

**Աշոտ Եսայան** Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի օգնական, Խ.Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի պատմության և իրավագիտության ֆակուլտետի դասախոս, դոցենտ (գլխավոր խմբագիր)

**Գևորգ Բաղդասարյան** Երևան քաղաքի դատախազ, իրավ. գիտ. թեկնածու

**Արմեն Մարուխյան** Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչության պետ, իրավ. գիտ. թեկնածու

**Գևորգ Դանիելյան** Հայաստանի Հանրապետության Բարձրագույն դատական խորհրդի անդամ, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ)

**Հովհաննես Սրբեկանյան** Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի պետաիրավական հետազոտությունների բաժնի վարիչ, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ)

**Գառնիկ Սաֆարյան** Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի հնստիտուտի առաջատար գիտաշխատող, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ)

**Արման Թաթոյան** Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպան, իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ջրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ (համաձայնությամբ)

**Ռուբեն Մելիքյան** Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպան, իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ջրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ

### Գլխավոր խմբագիր՝ Ա. ԵՍԱՅԱՆ

Հանդեսը ՀՀ բարձրագույն որակավորման հանձնաժողովի (ԲՈՀ) կողմից ընդգրկված է թեկնածուական (1999թ.) և դոկտորական (2002թ.)ատենախոսությունների հիմնադրույթների հրապարակման համար ընդունելի գիտական պարբերականների ցանկում:

Գլխավոր խմբագրի հասցեն.  
0010 ք. Երևան, Վ. Սարգսյան 5  
Հեռախոս՝ 511-640  
Էլ. հասցե՝ ashot@yessayan.am,  
orinakanutyun@prosecutor.am  
www.prosecutor.am  
ISSN 1829-4219

© Համակարգչային շարվածքը,  
ոճը, տառաձևերը և էջադրումը՝  
«ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ»

Հանձնված է արտադրության՝ 07.09.2018թ.  
Ֆորմատ՝ 60x84 1/8  
Տպաքանակը՝ 500  
Շավաղը՝ 4 պայմ. մամուլ  
Գրանցման վկայական՝ N 688

Տպագրված է «Աստղիկ Գրատուն»  
հրատարակչության տպարանում  
Երևան, Գ. Քոչարի 21

© «ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ», 2018թ.

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

## ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

ՀՀ գլխավոր դատախազ Արթուր Դավթյանն ընդունել է Հայաստանում Իրանի Իսլամական Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպանին ..... 3

## ԱՅՅԵԼՈՒԹՅՈՒՆ

ՀՀ գլխավոր դատախազ Արթուր Դավթյանն աշխատանքային այցով մեկնել է Հարավաֆրիկյան Հանրապետություն ..... 4

## ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

**Հովսեփ Քոչարյան** Հարբաժության վիճակում հանցանք կատարած անձանց քրեական պատասխանատվության որոշ հիմնախնդիրներ ..... 7

## ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

**Աշխեն Գալստյան** Գրավը որպես ինքնուրույն խափանման միջոց ..... 11  
**Արիփ Լազարյան** Նախաքննության ընթացքում տված ցուցմունքների հրապարակումը դատաքնության փուլում  
ՀՀ քրեական դատավարությունում ..... 17

## ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

**Թամարա Շաքարյան, Արտակ Խանամիրյան** Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման առանձնահատկությունները բարեփոխված Սահմանադրության համատեքստում ..... 22  
**Լիլիթ Մելիքսեթյան** Տեղական հանրաքվեի սահմանադրական և օրենսդրական կարգավորման էվոլյուցիան Հայաստանի Երրորդ Հանրապետությունում ..... 31

## ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

**Մարիամ Չոյան** Преимущественное право покупки доли в рамках права общей собственности в Республике Армения ..... 44

## ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

**Արթուր Նազարեթյան** Վճարելի վարույթի նպատակները և խնդիրները ըստ ՀՀ նոր քաղաքացիական դատավարության օրենսգրքի ..... 51

## ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

**Աննա Հակոբյան** Դատական նախադեպի իրավունքի տեսության տեսանկյունից ..... 57

## ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

**Գրիգոր Ներսիսյան** Բյուջետային վերահսկողություն. էությունը և նշանակությունը ՀՀ պետական կառավարման համակարգում ..... 63

## ՍԵՂՄԱԳՐԵՐ

Սեղմագրեր / Абстракты / Abstracts ..... 68

## ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՀՀ դատախազության «Օրինականություն» գիտազործական և ուսումնամեթոդական հանդեսում տպագրվող հոդվածներին ներկայացվող պահանջները ..... 76

## ՀՀ ՂԵՍԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՉ ԱՐԹՈՒՐ ԴԱՎԹՅԱՆՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԻՆՉ ԱՐՏԱԿԱՐԳ ԵՎ ԼԻԱԶՈՐ ԴԵՍԴԱՆ ՍԵՅԵՂ ՔԱԶԵՄ ՍԱԶԱԴԻՆ

Դեսպանը շնորհավորել է ՀՀ դատախազության համակարգի հիմնադրման 100-ամյա հոբելյանի կապակցությամբ՝ բարձր գնահատել Հայաստանի անկախացումից ի վեր երկու բարեկամ երկրների դատախազությունների միջև իրավական օգնության, դատապարտյալ-



ների հանձնման կառուցակարգերի կատարելագործման ուղղությամբ արձանագրված ձեռքբերումները, ինչպես նաև միջազգային հանցավորության դեմ պայքարում Հայաստանի և Իրանի իրավապահ մարմինների միջև ձևավորված սերտ համագործակցությունը:

ՀՀ գլխավոր դատախազն իր հերթին կարևորել է ՀՀ գլխավոր դատախազության հետ դեսպան Սեյեղ Քազեմ Սաջադիի կողմից ակտիվ շփումները, որոնք նպաստում են իրավական փոխօգնության ոլորտում ի հայտ եկող

աշխատանքային խնդիրների օպերատիվ լուծմանը: Արթուր Դավթյանը նաև նշել է, որ միջազգային և երկկողմ տարբեր ձևաչափերով երկու երկրների դատախազությունների միջև պարբերական բնույթ ստացած բարձր մակարդակի հանդիպումները, ակտիվ երկխոսությունը համագործակցության ավելի մեծ հեռանկարներ և հնարավորություններ են ստեղծում՝ նկատի ունենալով երկու հարևան երկրների քաղաքացիների ակտիվ փոխայցելություններով պայմանավորված՝ նրանց իրավական պաշտպանության ապահովման, ինչպես նաև թմրամիջոցների ապօրինի շրջանառության, անդրազգային այլ հանցագործությունների դեմ պայքարում առավել արդյունավետ մեխանիզմների գործադրման անհրաժեշտությունը:

Հանդիպման ընթացքում քննարկվել են ԻԻՀ գլխավոր դատախազ Մոհամադ Ջաֆար Մոնթազերիի հրավերով առաջիկայում ՀՀ գլխավոր դատախազ Արթուր Դավթյանի՝ Իրանի Իսլամական Հանրապետություն կատարելիք այցին, ինչպես նաև 2017թ. նոյեմբերին Սանկտ Պետերբուրգում կայացած Շանհայի համագործակցության կազմակերպության անդամ երկրների գլխավոր դատախազների նիստերի շրջանակներում տեղի ունեցած ՀՀ և ԻԻՀ գլխավոր դատախազների հանդիպման ընթացքում քննարկված՝ համագործակցության խորացմանը վերաբերող հարցեր:



# ՀՀ ՂԵՄԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՉ ԱՐԹՈՒՐ ԴԱՎԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՅՈՎ ՄԵԿՆԵԼ Է ՀԱՐԱՎԱՖՐԻԿՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀՀ գլխավոր դատախազ Արթուր Դավթյանը սեպտեմբերի 9-ից 13-ը Յոհաննեսբուրգում մասնակցել է Դատախազների միջազգային ասոցիացիայի (ԴՄԱ) 23-րդ ամենամյա կոնֆերանսին և համաժողովին, որին մասնակցել են մոտ 100 երկրի դատախազությունների և միջազգային կազմակերպությունների պատվիրակություններ:



Համաժողովը հրավիրվել է «Դատախազական անկախությունը. հասարակության մեջ արդարադատության անկյունաքար» խորագրի ներքո և այս տարի նվիրված է դատախազական համակարգի անկախության՝ աշխարհում կիրառվող կառուցակարգերի արդյունավետությանը, դատախազական ծառայության ղեկավարման և հաշվետվողականության, դատախազի անձի պաշտպանության, դատախազական համակարգի նկատմամբ հանրային վստահության հիմնախնդիրներին:

Համաժողովի շրջանակներում քննարկվել են սահմանադրաիրավական բավարար երաշխիքներով դատախազական համակարգերի նկատմամբ քաղաքական ազդեցությունների չեզոքացմանը, հասարակական տարբեր շրջանակների հետ հաղորդակցման արդյունավետ գործիքակազմի կիրառմամբ դատախազությունների անկախության վերաբերյալ հանրային իրական պատկերացումների ձևավորմանը, վերջինս տարատեսակ հնարավոր ճնշումներին դիմակայելու միջոց դարձնելուն

առնչվող ժամանակակից մարտահրավերները:

Մտքեր են փոխանակվել նաև դատախազների վարքագծի և կարգապահական կանոնների, առաջխաղացման, խրախուսման կառուցակարգերի կատարելագործման, դատախազների մասնագիտական ու որակական չափորոշիչների, ինչպես նաև էլեկտրոնային հանցագործությունների դեմ պայքարում անդրազգային համագործակցության, դատախազական տարբեր միջազգային ցանցերի գործունեության արդյունավետության բարձրացման ակտուալ հարցերի շուրջ:

ՀՀ գլխավոր դատախազ Արթուր Դավթյանը համաժողովին հանդես է եկել հաշվետվողականության և ինքնուրույնության սկզբունքների շրջանակներում դատախազական համակարգի կառավարման հիմնախնդիրների վերաբերյալ ելույթով: Արթուր Դավթյանը ողջունել և խիստ արդիական է համարել աշխարհում հանրային հաղորդակցության և քաղաքական ազդեցության տեխնոլոգիական զարգացման ներկայիս ժամանակաշրջանում դատախազական համակարգի անկախության ա-



պահովման մարտահրավերը գլոբալ ֆորումի քննարկման առարկա դարձնելու հանգամանքը:

Նա նշել է, որ ցանկացած երկրում արդյունավետ, վստահելի և լեգիտիմ արդարադատության համակարգի կայացման համար չա-

փազանց կարևոր է քաղաքական և տարատեսակ այլ ճնշումներից, ներգործություններից դատախազական համակարգի պաշտպանվածության, քաղաքացիական վերահսկողության իրավական երաշխիքների ներդրումն ու գոր-



ծաղրման պայմանների ապահովումը, ընդհանրական միջազգային ստանդարտների տեղայնացումը:

ՀՀ գլխավոր դատախազն ընդգծել է, որ այս ուղղությամբ Հայաստանում վերջին մի քանի տարիներին իրականացվել են նշանակալի գործնական քայլեր: «Հայաստանում կատարված սահմանադրաիրավական բարեփոխումները կանխորոշել են դատախազության զարգացման ուղիները, իսկ 2017թ. ընդունված և այս տարվա ապրիլից ուժի մեջ մտած «Դատախազության մասին» ՀՀ օրենքն ստեղծել է դատախազության համակարգային և գործառույթային անկախության, հաշվետվողականության շարունակական ամրապնդման իրավական հիմքեր, որոնք ներկայումս ստանում են գործնական կիրառություն: ՀՀ դատախազությունը շարունակում է պարբերաբար կատարելագործել վերոնշյալ սկզբունքների իրականացման մեխանիզմները, որոնք առանցքային նշանակություն ունեն դատախազության կայուն զարգացման համար», - իր ելույթում նշել է Արթուր Դավթյանը:

Մանրամասն ներկայացվել են իրականացված բարեփոխումներով Հայաստանի դատախազության հաշվետվողականության, դատախազության գործունեությանը միջամտելու անթույլատրելիության սկզբունքների իրագործման ներդրված կառուցակարգերը՝ ՀՀ գլխավոր դատախազին պաշտոնի նշանակելու և պաշտոնից ազատելու նոր ընթացակարգերից սկսած մինչև դատախազների թեկնածուներին ներկայացվող պահանջների, նրանց պաշտոնի նշանակման, պաշտոնեական առաջխաղացման, խրախուսման և կարգապահական պատասխանատվության ենթարկելու առավել թափանցիկ և հստակ լուծումները, հանցագործությունների քննությունների տարեկան արդյունքների հրապարակման, ԱԺ-ին դատախազության գործունեության մասին տարեկան հաղորդումներ ներկայացնելու օրենսդրական պահանջները:

Համաժողովի շրջանակներում ՀՀ գլխավոր դատախազ Արթուր Դավթյանը հանդիպումներ է ունենում մասնակից տարբեր երկրների պատվիրակությունների ղեկավարների հետ: Քննարկվում են իրավական փոփոխության և այլ ոլորտներում դատախազական կառույցների միջև գործակցությանն առնչվող փո-



խադարձ հետաքրքրություն ներկայացնող հարցեր:

Մասնավորապես՝ Շվեյցարիայի գլխավոր դատախազ Միշել Լաուբերի հետ կայացած երկկողմ հանդիպման ընթացքում Արթուր Դավթյանը մեծապես կարևորել է Հայաստանում իրականացվող կոռուպցիայի դեմ պայքարի ներկայիս ակտիվացման համատեքստում Շվեյցարիայի իրավապահ մարմինների հետ

ամենաօպերատիվ և սերտ համագործակցությունը: ՀՀ գլխավոր դատախազի կողմից առանձնահատուկ շեշտադրվել է հատկապես փողերի «լվացման», հանցավոր ճանապարհով ձեռք բերված գումարները համապատասխան բանկային համակարգերի ներգրավմամբ Հայաստանի սահմաններից դուրս, հատկապես՝ օֆշորային գոտիներ տեղափոխելու հանգամանքների բացահայտման գործում Հայաստանի և Շվեյցարիայի դատախազությունների միջև անհրաժեշտ տեղեկատվության փոխանակման, փոխադարձ իրավական օժանդակության ցուցաբերման գործընթացների խթանման անհրաժեշտությունը:

Ընդգծելով Հայաստանի հետ համագործակցությունը միջազգային հանցավորության դեմ պայքարում՝ Շվեյցարիայի գլխավոր դատախազը պատրաստակամություն է հայտնել անհրաժեշտ աջակցություն ցուցաբերել վերոնշյալ ուղղություններով ՀՀ իրավապահ մարմինների նախաձեռնություններին:

Հանդիպման արդյունքով՝ երկու երկրների գլխավոր դատախազների միջև ձեռք են

բերվել գործնական և առարկայական պայմանավորվածություններ, մասնավորապես՝ հանցավոր ճանապարհով ձեռք բերված ակտիվների հայտնաբերման և վերադարձման հարցում համագործակցության շուրջ:

Արթուր Դավթյանը երկկողմ հանդիպում է ունեցել նաև Արաբական Միացյալ Էմիրությունների դատախազության պատվիրակության ղեկավար Ալի Ալալեեյի հետ: Կողմերն ընդգծել են, որ տարբեր ոլորտներում երկու երկրների միջև համագործակցության ընդլայնումը խթանել է քաղաքացիների փոխայցելությունները, ինչով պայմանավորված՝ վերջին շրջանում նշանակալիորեն ինտենսիվացել է նաև Հայաստանի և ԱՄԷ դատախազությունների միջև փաստաթղթաշրջանառությունը: Գոհունակություն հայտնելով այս առումով ձևավորված գործակցության նախադրյալների կապակցությամբ՝ հանդիպման ընթացքում կողմերը պայմանավորվածություններ են ձեռք բերել իրավական փոխօգնության շրջանակներում փոխադարձ շփումներն առավել դինամիկ, օպերատիվ, համակարգված և արդյունավետ դարձնելու շուրջ:



**ՀՈՎԱՏՓ ՔՈՉԱՐՅԱՆ**

Հայ-ռուսական համալսարանի իրավագիտության  
ֆակուլտետի երկրորդ կուրսի մագիստրանտ

**ՀԱՐՔԱԾՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿՈՒՄ ՀԱՆՁԱՆՔ ԿԱՏԱՐԱԾ ԱՆՁԱՆՑ  
ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ**

Հարբածության վիճակում հանցագործություն կատարած անձանց քրեական պատասխանատվության հարցը լուրջ քննարկումների առարկա է դարձել իրավաբանական գրականության մեջ՝ չստանալով, սակայն, միանշանակ լուծում: Որոշ իրավաբան-գիտնականներ հանցագործության կատարելիս հարբածության վիճակում գտնվելու փաստը դիտարկում են որպես քրեական պատասխանատվությունը ծանրացնող հանգամանք՝ հիմնավորելով նշված տեսանկյունն այն փաստարկով, որ հարբածության վիճակում գտնվող անձը ստեղծում է վտանգավորության առավել բարձր աստիճան իրեն շրջապատող մարդկանց համար:<sup>1</sup> Այսպես՝ Ա.Ա. Գրեբենկովը նշում է, որ հարբածության վիճակում անձի ագրեսիվության դրսևորումը չի կարելի դիտարկել որպես մեղքը և պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք, չնայած ակոհուլը կամ թմրեցնող այլ նյութերը ունեն մարդու համար արտաքին բնույթ:<sup>2</sup> Վերոնշյալ դիրքորոշմանն է հակված նաև ՀՀ օրենսդիրը, ով քրեական օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետում նախատեսել է անձի հարբածության վիճակում հանցանք կատարելու փաստը որպես պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանք:

Իրավաբաններից որոշներն էլ իրենց աշխատությունների մեջ արտահայտում են տրամազորեն հակառակ տեսակետ՝ նշելով, որ հարբածության վիճակում հանցագործություն կատարելը պետք է դիտարկել որպես քրեա-

կան պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք:<sup>3</sup> Որպես նշված կարծիքը հիմնավորող փաստարկ՝ նշվում է այն, որ հարբածության վիճակում գտնվող անձն ի զորու չէ հասկանալու իր գործողությունների նշանակությունը և ղեկավարել դրանք: Հիմնվելով նշված փաստարկի վրա՝ Նորվեգիայի կամ Սան-Մարինոյի օրենսդիրներն իրենց երկրների քրեական օրենսգրքերում անձի հարբածության վիճակում հանցանք կատարելու փաստը դասել են մեղմացնող հանգամանքների ցանկը:<sup>4</sup>

Քրեական իրավունքի տեսության մեջ կարելի է հանդիպել այնպիսի դիրքորոշման, որի համաձայն՝ չնայած հարբածությունը հանգեցնում է մեղսունակության կորստի, սակայն նման պարագայում անձը պետք է ենթարկվի քրեական պատասխանատվության, քանի որ այդպիսի անձը դիտավորյալ իրեն հասցրել է հարբածության վիճակի, որի հետևանքով էլ կատարել է հանրորեն վտանգավոր արարք: Սակայն նշված դիրքորոշումը ենթարկվում է քննադատության՝ հիմնվելով այն փաստարկի վրա, թե այդպիսի մոտեցումը չի տարանջատում սովորական ֆիզիոլոգիական հարբածությունը պաթոլոգիական հարբածությունից, որի հետևանքով մարդու գիտակցության մեջ տեղի է ունենում հոգեկան վիճակի վատացում: Հետևաբար՝ պետք է հստակ տարանջատել ֆիզիոլոգիական և պաթոլոգիական հարբածության վիճակում հանցագործություն կատարած անձանց քրեական պատասխանատվության ենթարկելու դեպքերը: Այդ կարծիքին են նաև ո-

<sup>1</sup> Стрилец О.В., Черникова Ю.И. Состояние опьянения как обстоятельство, отягчающее вину и наказание. «Теория и практика общественного развития (2013, N 11)». С. 548-550.  
<sup>2</sup> Гребеньков А.А., Уголовная ответственность лиц, совершивших преступление в состоянии опьянения. М., 2009.  
<sup>3</sup> Сулейманова С.Т., Горбунова К.А. Состояние опьянения как обстоятельство, смягчающее наказание//m.cyberleninka.ru/article/n/sostoyanie-opyaneniya-kak-obstoyatelstvo-smagchayuschee-nakazanie  
<sup>4</sup> Додонов В. Н. Сравнительное уголовное право. Общая часть / под общ. ред. С. П. Щербы. М.: Юрлитинформ, 2009. С. 358.

● ՕՐԻՆԱԿԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ № 107 2018

րոշ երկրների օրենսդիրները, ովքեր քրեական օրենսգրքերում ամրագրել են հարբածության վիճակում մեղսունակությունը ժամանակավոր կորցրած անձանց քրեական պատասխանատվությունից ազատելու մասին դրույթներ: Օրինակ՝ Իսլանդիայի քրեական օրենսգրքի 17-րդ հոդվածը նախատեսում է, որ քրեական պատիժ չի կարող կիրառվել այն դեպքում, երբ անձը հարբածության հետևանքով լիովին կորցրել է իր ինքնակառավարումը (մեղսունակությունը), բացառությամբ այն դեպքի, երբ անձն ի սկզբանե նախատեսել էր, կամ առկա են հիմքեր՝ ենթադրելու, որ այդպիսի հարբածության հետևանքով անձի կողմից կատարվելու է հանցագործություն:<sup>5</sup> Նմանատիպ դրույթ սահմանված է նաև Իսպանիայի քրեական օրենսգրքի 21-րդ հոդվածում, որի համաձայն՝ անձը ենթակա չէ քրեական պատասխանատվության, եթե հանցագործություն կատարելու պահին նա գտնվել է ակոհոլային ծանր թունավորման վիճակում և չի նախատեսել ու չէր կարող նախատեսել հանցագործություն կատարելու հնարավորությունը կամ գտնվել է աբստինենցիայի սինդրոմի ազդեցության ներքո:<sup>6</sup>

Մեր կարծիքով՝ անձը, ով կամավոր հարբածության հետևանքով հասել է ժամանակավոր անմեղսունակության վիճակի, չի կարող ազատվել քրեական պատասխանատվությունից: Պատճառն այն է, որ այդպիսի անձն իր կամքով կատարված գործողությունների հետևանքով է հասել անմեղսունակության վիճակի, հետևաբար՝ տվյալ պարագայում ՀՀ քրեական օրենսգրքի 25-րդ հոդվածի առաջին մասի դրույթը ենթակա չէ կիրառման, իսկ վերոնշյալ դրույթը պետք է կիրառվի այն դեպքում, երբ անձն իր կամքից անկախ է գտնվել անմեղսունակության վիճակում: Այսպիսի դիրքորոշմանն են հակված նաև Շվեյցարիայի, Գերմանիայի և Ավստրիայի օրենսդիրները, ովքեր քրեական օրենսգրքի հատուկ մասում առանձին հանցակազմ են նախատեսել, որով սահմանվում է կամավոր հարբածության հետևանքով ինքնակառավարումը (մեղսունակությունը) կորցրած անձի քրեական օ-

րենսգրքով նշված ցանկացած հանցագործություն կատարելու համար:<sup>7</sup> Մեր կարծիքով՝ ՀՀ քրեական օրենսգրքի դեպքում ավելի ընդունելի որոշում կլինի ոչ թե Հատուկ մասում նոր հանցակազմ ընդգրկելը, այլ՝ Ընդհանուր մասում գտնվող մեղսունակությանը վերաբերող դրույթներում փոփոխություններ իրականացնելը:

Բացի այդ, մեր կարծիքով՝ հնարավոր է այնպիսի մի իրավիճակ, երբ անձն իր կամքից անկախ է հայտնվում հարբածության վիճակում, որի հետևանքով էլ կատարում է հանցագործություն, մինչդեռ այս իրավիճակում հանցագործություն կատարած անձանց քրեական պատասխանատվության մասին ՀՀ օրենսդիրը լռում է: Տվյալ խնդրի կարգավորման հետ կապված յուրօրինակ քայլ են ձեռնարկել Բրազիլիայի և Մեծ Բրիտանիայի օրենսդիրները, ովքեր իրենց պետությունների քրեական օրենսդրությունում տարանջատել են «կամավոր հարբածություն» և «ակամա հարբածություն» հասկացությունները՝ նշելով, որ չի բացառվում այն անձի քրեական պատասխանատվությունը, ով կատարել է հանցագործություն կամավոր հարբածության վիճակում: Ինչ վերաբերում է ակամա հարբածության վիճակում հանցագործություն կատարած անձի քրեական պատասխանատվության հարցին՝ դա կապված է այն հանգամանքի հետ, թե որքանով է դրա հետևանքով անձը կորցրել իր ինքնակառավարումը: Եթե ակամա հարբածության վիճակում գտնվող հանցանք կատարած անձը հասել է այնպիսի հարբածության վիճակի, որի հետևանքով լիովին կորցրել է ինքնակառավարումը, այսինքն՝ դարձել է անմեղսունակ, ապա այդ անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, իսկ եթե ակամա հարբածության վիճակում գտնվող հանցանք կատարած անձը չի հասել ինքնակառավարումը կորցնելուն, ապա անձը ենթարկվում է քրեական պատասխանատվության, սակայն ստանում է ավելի մեղմ քրեական պատիժ:

Մեր կարծիքով՝ ՀՀ օրենսդիրը նույնպես պետք է հետևի վերոնշյալ երկրների օրենս-

<sup>5</sup> General Penal Code, Act No. 19 of 12 February 1940.

<sup>6</sup> Уголовный кодекс Испании 1995 года //http://crimpravo.ru/page/zar-uk

<sup>7</sup> Лейкина Н.С. Личность преступника и уголовная ответственность. Л., 1968. С. 57.



դիրների օրինակին՝ սահմանելով քրեական օրենսգրքում «կամավոր հարբածության» և «ակամա հարբածության» հասկացությունները: Այսպես՝ Ավստրալիայի քրեական օրենսգրքի 8.1 հոդվածի համաձայն՝ ակամա հարբածություն է համարվում այնպիսի հարբածությունը, որն առաջացել է անձի կամքից անկախ, այսինքն՝ խաբեության, ֆիզիկական հարկադրանքի կամ անմիջական բռնություն գործադրելու հետևանքով առաջ եկած հարբածությունը:<sup>8</sup> Այդպիսի օրենսդրական փոփոխություններն ավելի քան անհրաժեշտ են, քանի որ գործնականում չեն բացառվում ակամա հարբածության վիճակում հանցագործություն կատարելու դեպքերը: Այդպիսի անձանց չի կարելի ենթարկել քրեական պատասխանատվության, քանի որ նրանք իրենց կամքից անկախ են հասել անմեղսունակության վիճակի:

Ակամա հարբածությունը որպես քրեական պատասխանատվությունից ազատվելու հանգամանք նախատեսվում է ոչ միայն որոշ արտասահմանյան պետությունների քրեական օրենսգրքերում, այլ նաև միջազգային պայմանագրերում և դատական պրակտիկայում: Այսպես, քննելով Prosecutor v. Kvočka<sup>9</sup> դատական գործը՝ նախկին Հարավսլավիայի միջազգային տրիբունալը հանգել էր այն եզրակացության, որ ինտոքսիկացիայի վիճակում գտնվելու փաստը կարող է հանդիսանալ քրեական պատիժը մեղմացնող կամ բացառող հանգամանք միայն այն դեպքում, եթե այդպիսի հարբածության անձը հասել է հարկադրաբար: Ինչ վերաբերում է կամավոր ինտոքսիկացիայի փաստին՝ տվյալ պարագայում քրեական պատժից ազատվելու խոսք անգամ լինել չի կարող:

Բացի այդ՝ Միջազգային քրեական դատարանի Հռոմի ստատուտի 31-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի համաձայն՝ անձը ենթակա չէ քրեական պատասխանատվության, եթե հանցագործություն կատարելու պահին գտնվել է ինտոքսիկացիայի վիճակում, որը զրկում է նրան իր արարքի հանցավոր բնույթը հասկանալու հնարավորությունից, եթե այդպիսի անձը չի ենթարկվել կամավոր ինտոքսիկացիայի այն-

պիսի իրավիճակում, երբ անձը գիտակցում էր, որ այդպիսի ինտոքսիկացիայի հետևանքով իր կողմից կարող է կատարվել հանցագործություն հանդիսացող արարք, որն ընդդատյա է Միջազգային քրեական դատարանին, կամ հաշվի չի առել այդպիսի արարքի կատարման վտանգավորությունը:

Այսպիսով, ելնելով վերոգրյալից՝ կարելի է հանգել այն եզրակացության, որ Հայաստանի Հանրապետության օրենսդրության մեջ նշված ինստիտուտը կանոնակարգող նորմերը պահանջում են հետագա կոնկրետացում: Մեր կարծիքով՝ ՀՀ քրեական օրենսգրքում պետք է կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Նախ և առաջ՝ ՀՀ քրեական օրենսգրքում պետք է ամրագրել այնպիսի նորմ, որը կտարանջատի կամավոր և ակամա հարբածության հասկացությունները՝ սահմանելով այդ հասկացությունների օրենսդրական եզրույթները:

2. Փոփոխության ենթարկել ՀՀ քրեական օրենսգրքի 27-րդ հոդվածը՝ շարադրելով հետևյալ խմբագրությամբ.

«1. Ալկոհոլի, թմրամիջոցների կամ թմրեցնող այլ նյութերի կամավոր օգտագործման հետևանքով հարբած վիճակում հանցանք կատարած անձը՝ ընդհուպ մինչև անմեղսունակության վիճակի հասնելը, քրեական պատասխանատվությունից չի ազատվում:

Քրեական պատասխանատվությունից չի ազատվում ալկոհոլի, թմրամիջոցների կամ թմրեցնող այլ նյութերի ակամա օգտագործման հետևանքով հարբած վիճակում հանցանք կատարած անձը, եթե դա մեղսունակության լրիվ կորստի չի հանգեցրել:»

3. ՀՀ քրեական օրենսգրքի 25-րդ հոդվածի 1-ին մասն առաջարկվում է շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Քրեական պատասխանատվության ենթակա չէ այն անձը, ով հանրության համար վտանգավոր արարք կատարելու պահին գտնվել է անմեղսունակության վիճակում, այսինքն՝ քրոնիկական հոգեկան հիվանդության, հոգեկան գործունեության ժամանակավոր խանգարման, տկարամտության կամ հոգեկան այլ հիվան-

<sup>8</sup> Закон о федеральном уголовном кодексе Австралии 1995 г.//http://crimpravo.ru/page/zar-uk

<sup>9</sup> Prosecutor v. Kvočka Judgment Case No.IT-98-30/1-T ICTY Trial Chamber 2, November 2001.

դագին վիճակի հետևանքով չէր կարող գիտակցել իր գործողության (անգործության) վտանգավորությունը կամ ղեկավարել դա՛ բացառությամբ կամավոր հարբածության հետևանքով անմեղսունակության վիճակի հասնելու դեպքում»:

4. Ալկոհոլի, թմրամիջոցների կամ թմրեցնող այլ նյութերի ակամա օգտագործման հետևանքով հարբած վիճակում հանցանք կատարելը, եթե դա մեղսունակության լռիվ կորըստի է հանգեցրել, ՀՀ քրեական օրենսգրքում դիտարկել որպես արարքի հանցավորությունը բացառող հանգամանք:

5. ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվա-

ծի առաջին մասում սահմանել նոր 11-րդ կետ հետևյալ ձևակերպումով.

«11. Հանցանքն ալկոհոլի, թմրամիջոցների կամ թմրեցնող այլ նյութերի ազդեցության տակ կատարելը, եթե դա ակամա հարբածության հետևանք է և մեղսունակության լռիվ կորստի չի հանգեցրել»:

6. ՀՀ քրեական օրենսգրքի 63-րդ հոդվածի առաջին մասի կետ 14-ով նախատեսված դրույթը փոփոխել հետևյալ կերպ.

«Հանցանքն ալկոհոլի, թմրամիջոցների կամ թմրեցնող այլ նյութերի ազդեցության տակ կատարելը, եթե դա կամավոր հարբածության հետևանք է»:



**ԱՇԽԵՆ ԳԱԼՍՅԱՆ**

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության  
 Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժնի քննիչ,  
 արդարադատության երրորդ դասի խորհրդական,  
 ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և  
 իրավունքի ինստիտուտի հայցորդ

**ԳՐԱՎԸ ՈՐՊԵՍ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԽԱՓԱՆՄԱՆ ՄԻՋՈՑ**

Օրինականության ապահովման և իրավակարգի ամրապնդման տեսանկյունից՝ պետության կողմից կիրառվող միջոցների համակարգում կենտրոնական տեղ է հատկացվում անձի և քաղաքացու իրավունքների և ազատությունների պաշտպանությանը: Առավելապես դա վերաբերում է քրեական դատավարությանը, երբ հանցագործություն կատարելու համար անձին մեղադրանք է առաջադրված, և նրա նկատմամբ կիրառվում են խափանման միջոցներ, քանի որ նախաքննության և դատաքննության օրինականությունը որոշվում է նաև անձի նկատմամբ կիրառվող խափանման միջոցի հիմնավորվածությամբ և նպատակահարմարությամբ:

1995թ. հուլիսի 5-ին ընդունված ՀՀ Սահմանադրությունը Հայաստանը հռչակել է ժողովրդավարական և իրավական պետություն՝ հայտարարելով խաղաղ փոխհարաբերությունների զարգացման իր նպատակի մասին, ճանաչել է մարդու իրավունքներն ու ազատությունները որպես բարձրագույն արժեք:

Այսօր մեր երկրում մարդու իրավունքների պաշտպանությանն իրավացիորեն մեծ տեղ է հատկացվում, և հատկապես խոցելի հատվածում գտնվող անձանց՝ կալանավորների և դատապարտյալների խնդիրներն անհապաղ լուծումներ են պահանջում<sup>1</sup>: Հարկ է արձանագրել, որ Հայաստանի Հանրապետության քրեակատարողական հիմնարկները գերծանրաբեռնված են, և այս անհերքելի փաստը մտահոգում է թե՛ իրավապահ մարմիններին, թե՛ հանրությանը, ուստի հրամայական է անհապաղ լու-

ծումներ գտնել ծառացած խնդրին: Իրավապաշտպանները, նախաքննական մարմինները, դատախազությունը և դատարաններն ունեն իրենց մոտեցումները՝ նշված խնդիրների հետ կապված, սակայն, անխոս, ամենից էականն այստեղ մարդասիրական մոտեցումներն են, քանզի կալանավորված և դատապարտված անձինք լոկ վիճակագրություն չեն: Իրավապահ մարմիններն անձի ազատագրված վերաբերյալ որոշումներ կայացնելիս պարտավոր են հաշվի նստել և՛ մարդասիրական, և՛ օրենքի ու օրինական շահերի տեսանկյունից, քանի որ միատեսակ մոտեցումը կծառացնի նորանոր խնդիրներ: Սակայն լոկ «մարդասիրական» գաղափարներից դրդված բացել քրեակատարողական հիմնարկների դռները և, բոլորին ազատելով, վտանգել հանրային շահը ևս ընդունելի չէ: Հարկավոր են անհատական մոտեցումներ: Ազատագրված և նախնական կալանքի կիրառման հարցերը լուծելու համար բարձրաձայնվում են տարբեր տեսակետներ, մինչդեռ կարևոր է անդրադառնալ նախաքննության օրենսդրական կանոնակարգման տեսանկյունին:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում հստակ սահմանված են խափանման միջոցների 7 տեսակները՝ կալանավորում, գրավ, ստորագրություն չհեռանալու մասին, անձնական երաշխավորություն, կազմակերպության երաշխավորություն, հսկողության հանձնելը և հրամանատարության հսկողության հանձնելը<sup>2</sup>: Նշված խափանման միջոցների կիրառման վերաբերյալ նախաքննության մարմնի վիճակա-

<sup>1</sup> Կալանավորված և դատապարտված անձանց իրավունքները Հայաստանում: Ուղեցույց – Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության երևանյան գրասենյակ – Երևան, 2009թ. – URL: <https://www.osce.org/hy/yerevan/74924?download=true>  
<sup>2</sup> ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, հոդված 134 – էլեկտրոնային հղում՝ <http://www.arlis.am/>

● ՕՐԻՆԱԿԱՆՆՈՒԹՅՈՒՆ № 107 2018

գրության վերլուծությունը վկայում է, որ առանձին խափանման միջոցներ իրականության մեջ գրեթե չեն գործածվում՝ տարբեր օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով:

Մինչդեռ տական վարույթների ուսումնասիրությունները վկայում են, որ քրեական գործերով առավել կիրառվող խափանման միջոցներն են ստորագրությունը չհեռանալու մասին՝ 72%, և կալանքը՝ 24%: Քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված այլ խափանման միջոցների կիրառումը գործնականում չի գերազանցում 4%:<sup>3</sup>

Ակնհայտ է, որ գոյություն ունի զգալի անջրպետ օրենքի կիրառման և նպատակների միջև, ինչն անհրաժեշտաբար հանգեցնում է օրենսդրական փոփոխությունների: Մասնավորապես՝ բացակայում է խափանման միջոցների այն միջին օղակը, որը կարող է գործածվել, երբ ստորագրությունը չհեռանալու մասին բավարար չէ, իսկ կալանավորումը՝ չափազանց խիստ:

Վերոնշյալ խնդրի լուծումները բազմաթիվ են, և բոլոր առաջարկներն արժանի են իրավական քննարկման, սակայն, այժմ չքննարկելով բարդ և ծախսատար փոփոխությունները, հարկ է անդրադառնալ արդիական խնդիրներից մեկին՝ ներկայումս որպես այլընտրանքային խափանման միջոց գործող գրավի կիրառման վերաբերյալ իրատեսական փոփոխություններին և դա որպես ինքնուրույն խափանման միջոց կիրառելու տեսլականին:

Ինչպես հայտնի է քրեական դատավարությունում՝ գրավը գույքային բնույթի հարկադրանքի միջոց է, որը կիրառվում է մեղադրյալի նկատմամբ՝ քրեական վարույթն իրականացնող մարմնի տրամադրության տակ նրա գտնվելն ապահովելու նպատակով<sup>4</sup>:

Հայոց իրավունքի հուշարձաններում գրավը հայտնի է եղել դեռևս Մխիթար Գոշի 12-րդ դարի «Գիրք Դատաստանի» աշխատությունում և Սմբատ Սպարապետի (Գունդստաբլի) 1265թ. Դատաստանագրքում:

Այսպես՝ Մխիթար Գոշի Դատաստանա-

գիրքը միջնադարյան Հայաստանի ֆեոդալական իրավունքի ժողովածու է, որի գործադրության վերաբերյալ հայագիտության մեջ իշխող կարծիքը բացասական է, քանի որ Դատաստանագիրքը չի բխել լիազոր իշխանությունից, այլ եղել է մասնավոր անձի նախաձեռնության արդյունք: Համենայն դեպս՝ Դատաստանագրքում փորձ է կատարվել կանոնակարգել հասարակական հարաբերությունները ժամանակի ոգուն համահունչ: Քննարկելով գրավը՝ հարկ է նշել, որ Դատաստանագրքի Գլուխ ՃԻԵ-ն, որը վերնագրված է «Պարտքերի և գրավների մասին», դիտարկում է գրավը որպես գույքային փոխհարաբերությունների կարգավորման եղանակ՝ սահմանելով. «Եթե քո ընկերը ինչ-որ բան է պարտք քեզ, ապա նրա տուն ինչ-որ բան գրավ վերցնելու համար չմտնես, այլ կանգնես դրսում, և պարտք ունեցող մարդը թող ինքը գրավը դուրս հանի: Եվ եթե աղքատ է այդ մարդը, ապա նրա գրավ դրած զգեստը թող գիշերը քեզ մոտ չմնա, այլ՝ արևը մայր մտնելու ժամանակ նրա գրավը կվերադարձնես: Նա թող պառկի իր զգեստով և օրինի քեզ, և այդ քո Տեր Աստծո առջև քո կատարած բարությունն ու ողորմածությունը պիտի համարվի: /Բ Օրենք. ԻԴ 10-13/:

Թույլ չի տալիս ներս մտնել և գրավ առնել, որպեսզի բռնություն չլինի, այլ՝ իր կամքով դուրս հանի, դարձյալ, որ գրավը գոյատևման առաջին անհրաժեշտության բան չլինի: Իսկ թե աղքատության պատճառով գոյատևման համար անհրաժեշտության բան է գրավը, հրամայում է մայրամուտից առաջ վերադարձնել, այս կերպ կամենում է, որ մարդը ողորմածություն դրսևորի: Այս վարմունքի կատարումն էլ մեզ համար ևս ընտրելին է դատաստանի ժամանակ:»<sup>5</sup>

Վերոնշյալ դրույթների վերլուծությունը թույլ է տալիս եզրահանգել, որ դեռևս հայ իրավունքի ստեղծման ակունքներում իսկ գրավը դիտարկվել է որպես անձի պատշաճ վարքագիծն ապահովելուն ուղղված գույքային հարկադրանքի միջոց, որը որևիցե պարագայում չի նույնա-

<sup>3</sup> 2014-2018թթ. ՀՀ քննչական կոմիտեի վիճակագրական հաշվետվություններ:

<sup>4</sup> Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն: Մաս 1, Հեղ. խումբ: Գիտ. խմբ. Ա.Ղամբարյան, Երևան, Տիգրան Մեծ, 2016, էջ 532:

<sup>5</sup> Մխիթար Գոշ. Դատաստանագիրք, Գ խմբագրություն, Երևան, 2001թ., էջ 104:

կանացվել պատժի տարրեր պարունակող դատաստանի հետ:

Անդրադառնալով Սմբատ Գունդստաբլի Դատաստանագրքին՝ հարկ է նշել, որ դա որոշակի փոփոխություններով ներկայացնում է Մխիթար Գոշի աշխատությունը, որը, սակայն, ընդունվել է որպես օրենքի ուժ ունեցող իրավունքի աղբյուր Կիլիկիայի հայկական թագավորությունում: Դա բազմաթիվ նորմեր է պարունակում, որոնք նվիրված են գույքային և գրավադրման իրավունքին: Գրավի ինստիտուտը վկայում է սեփականության իրավունքի զարգացման մասին: Օրենքը տարբերակել է անշարժ գույքի գրավադրումը շարժական գույքի գրավադրումից: Որպես գրավի առարկա կարող էր հանդես գալ ցանկացած գույք՝ բացառությամբ ձեռքի աղացի (հոդված 99), ցուլերի և դրանց թամբի (հոդված 100), քանի որ դրանք անհրաժեշտ են գյուղացիական տնտեսության համար, ինչպես նաև ձիու և սպառազինության, որոնք անհրաժեշտ են «պատերազմի և ծառայության» համար (հոդված 100): Հարկ է նշել, որ Սմբատ Սպարապետի Դատաստանագրքի գրավի մասին գլուխը (§101) կտրուկ կերպով տարբերվում է Մխիթար Գոշի Դատաստանագրքի համապատասխան կարգավորումներից: Եթե Գոշը պարտատիրոջն օժտում է գրավի նկատմամբ սահմանափակ իրավունքներով, ապա Սմբատը, ընդհակառակն, ընդգծում է վերջինիս իրավունքը դրա նկատմամբ: Ընդ որում՝ Սմբատը սահմանում է, այսպես կոչված՝ «կոշտ գրավի» սկզբունքը, որի համաձայն՝ պարտատերն իրավունք ունի օգտագործել գրավի առարկան մինչև պարտքի մարումը՝ ի տարբերություն «հիփոթեքային իրավունքի», որի համաձայն՝ հիփոթեքը (վարկի գրավի առարկան) չի փոխանցվում պարտատիրոջը, այլ մնում է պարտապանի մոտ, սակայն արգելադրվում է<sup>6</sup>: Հարկ է նշել, որ վերոնշյալ Դատաստանագրքերի ընդհանրությունը գրավի պարագայում այն է, որ դրանցով կարգավորվել են քաղաքացիաիրավական բնույթ ունեցող փոխհարաբերություններ, ինչը, սակայն, հետագա պատմական զարգացումների լուսի ներքո՝ քրեաիրավական հարաբե-

րությունների ոլորտում, ապացուցելով իր արդյունավետությունը, վերածվել է խափանման միջոցի:

Այսպիսով՝ ՀՀ-ում գրավը որպես ինքնուրույն խափանման միջոց կիրառելու արդիականությունը հասկանալու համար անհրաժեշտ է պարզել, թե ինչն են մինչդատական վարույթ իրականացնող մարմիններն այդքան հաճախ միջնորդում որպես խափանման միջոց կիրառել կալանավորումը, իսկ դատական ատյաններն էլ՝ մոտ 85% դեպքերում բավարարում նշված միջնորդությունները<sup>7</sup>: Առավել բանական դրդապատճառն այն է, որ բացակայում է վերոնշյալ՝ այդքան պիտանի միջանկյալ լուծումը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 134-րդ հոդվածը սահմանում է. «խափանման միջոցները հարկադրանքի միջոցներ են, որոնք կիրառվում են կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ՝ քրեական գործով վարույթի ընթացքում նրանց ոչ պատշաճ վարքագիծը կանխելու և դատավճռի կատարումն ապահովելու նպատակով»:

Հոդվածի նախաբանում արդեն իսկ ներկայացված են խափանման միջոցների տեսակները: Այժմ, հիմք ընդունելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքը, անդրադարձ կատարենք խափանման միջոց կիրառելու հիմքերին: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածը սահմանում է, որ դատարանը, դատախազը, քննիչը կամ հետաքննության մարմինը խափանման միջոց կարող են կիրառել միայն այն դեպքում, երբ քրեական գործով ձեռք բերված նյութերը բավարար հիմք են տալիս նման որոշում կայացնելու համար:

Խափանման միջոց կիրառելու անհրաժեշտության և կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ դրա տեսակն ընտրելու հարցը լուծելիս հաշվի են առնվում մի շարք հանգամանքներ և, մասնավորապես՝ վերագրվող արարքի բնույթը և վտանգավորության աստիճանը, կասկածյալի կամ մեղադրյալի անձը, տարիքը և առողջական վիճակը, սեռը, զբաղմունքի տեսակը, ընտանեկան դրությունը և խնամարկյալնե-

<sup>6</sup> Судебник Смбата Спарапета (Гундстабля) 1265г. Издательство Ереванского университета, Ереван 1971 г., С. 136-139.

<sup>7</sup> ՀՀ դատախազության 2017թ. գործունեության վերաբերյալ հաղորդում:

րի առկայությունը, գույքային դրությունը, բնակության մշտական վայրի առկայությունը և այլ էական հանգամանքներ:

Անդրադառնալով գրավին՝ պետք է նշել, որ դա ՀՀ օրենսդրության մեջ կիրառվում է որպես կալանավորման այլընտրանքային խափանման միջոց և միայն դատարանի կողմից, սակայն, ելնելով ներկայումս դատական ատյանների գերծանրաբեռնվածությունից, անհրաժեշտ է նշված խափանման միջոցը կիրառելու իրավասությամբ օժտել նաև մինչդատական վարույթ իրականացնող մարմին, ինչը միանգամայն ծանրակշիռ փաստարկ է, երբ, ելնելով հանցագործության բնույթից, գործի հանգամանքներից, անձի վերաբերյալ բնութագրող տեղեկություններից, բավարար չէ համարել, որ ստորագրությունը չհեռանալու մասին խափանման միջոցը կարող է ապահովել մեղադրյալի պատշաճ վարքագիծը, կիրառել գրավ, մասնավորապես՝ գրավը դիտարկել որպես լիարժեք ինքնուրույն խափանման միջոց:

Ինչպիսի՞ դրական արդյունքներ է հնարավոր արձանագրել տվյալ դեպքում: Նախ՝ որպես գրավ փոխանցված գումարները պետք է դիտարկել որպես կարճաժամկետ ավանդներ, որոնց շրջանառությունից գոյացած գումարները նախաքննության կամ դատաքննության ավարտական փուլում անձի նկատմամբ քրեական հետապնդումն արդարացնող հիմքերով դադարեցնելու դեպքում կարող են վերադարձվել որպես սահմանափակումների պատճառով կորցրած եկամտի փոխհատուցում, իսկ մեղադրական դատավճիռ կայացնելու պարագայում նշված դրամական միջոցներից որպես ավանդ գոյացած գումարները կարող են օգտագործվել դատական ծախսերը, ինչպես նաև հանցավոր արարքի հետևանքով տուժած անձանց պատճառված գույքային և բարոյական վնասները մասամբ կամ ամբողջապես վերականգնելու երաշխիքներ:

Բացի այդ՝ գրավի նշված եղանակով կիրառումը հնարավորություն կընձեռնի թոթափելու

քրեակատարողական հիմնարկների ծանրաբեռնվածությունը, որպես արդյունք՝ զգալիորեն կրճատել պետական միջոցներից նշված հիմնարկներում գտնվող անձանց հոգսերի համար ծախսվող գումարների չափը, միևնույն ժամանակ՝ բարելավել նրանց կենսապայմանները<sup>8</sup>, ինչպես նաև առավել արդյունավետ դարձնել վերջիններիս նկատմամբ իրականացվող հսկողությունը՝ զերծ մնալով կոռուպցիոն ռիսկերից և մարդու իրավունքների ոտնահարումից և, ամենակարևորը՝ նշված գաղափարը համահունչ է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի այն գաղափարին, որ կալանավորումը բացառիկ դեպքերում կիրառվելիք խափանման միջոց է:

Գրավը հնարավոր է կիրառել որպես պայմանագրային խափանման միջոց, քանի որ, «Կալանքի հետ չկապված այլ միջոցների մասին» ՄԱԿ-ի նվազագույն չափանիշների (ընդունվել է 14.12.1990թ.) 3.4 կետի համաձայն՝ կալանքի հետ չկապված այլ միջոցները, որոնցով մեղադրյալի վրա դրվում են որոշակի պարտականություններ, կարող են կիրառվել նրա համաձայնությամբ<sup>9</sup>: Սույն պայմանագիրը կնքելիս մեղադրյալին պարզաբանվում է, որ, համաձայնություն տալով իր նկատմամբ գրավը որպես խափանման միջոց կիրառելուն, իր նկատմամբ որպես երաշխիքային խափանման միջոց դատական ատյանի կողմից կիրառվում է կալանավորումը, որը պայմանականորեն հետաձգվում է վերջինիս կողմից պատշաճ վարքագիծ դրսևորելու դրույթով, այսինքն՝ այս դեպքում կալանավորումը հանդես է գալիս որպես այլընտրանքային խափանման միջոց:

Գրավի կիրառման մասին «պայմանագրում» որպես իմպերատիվ դրույթ անհրաժեշտ է սահմանել նաև կասկածյալի կամ մեղադրյալի կողմից ՀՀ պետական սահմանները հատելու արգելանք և այդ մասին անհրաժեշտ տեղեկատվությունը տրամադրել ՀՀ ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչությանը՝ ՀՀ սահմանային էլեկտրոնային կառա-

<sup>8</sup> Հեյսինկյան ասոցիացիայի գեկույցը «Մարդու իրավունքների իրավիճակը Հայաստանում» ծրագրի շրջանակներում ՀՀ քրեակատարողական հիմնարկներում, հոգեբուժական հաստատություններում և դատարաններում 2009-2010թթ. իրականացված մոնիտորինգի վերաբերյալ, II հատոր, Երևան, 2011թ.:

<sup>9</sup> Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն: Մաս 1, Հեղ. խումբ: Գիտ. խմբ. Ա.Ղամբարյան, Երևան, Տիգրան Մեծ, 2016, էջ 541:

վարման տեղեկատվական համակարգում մուտքագրելու համար, ինչպես նաև գրավոր հայտնել ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչություն:

Խուսափելու համար նաև «կեղտոտ» գումարների լվացման գործընթացից՝ խելամիտ է ոչ միայն ստուգել մեղադրյալի կամ գրավատուի գույքային դրությունը, այլ նաև վճարվող դրամական միջոցների գոյացման աղբյուրները՝ սահմանելով համապատասխան հայտարարագրերի ձևաչափեր<sup>10</sup>:

Վերոնշյալ պայմանագիրը կնքելու պարագայում նվազեցվում է դատական ատյանի ծանրաբեռնվածությունը, քանի որ տվյալ մարմնի կողմից պարզապես կայացվում է դատական ակտ՝ ի հաստատումն կողմերի փոխհամաձայնության: Այդ կերպ նվազում է վտանգն առ այն, որ մեղադրյալը, մնալով ազատության մեջ, կարող է թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից, խոչընդոտել մինչդատական վարույթում կամ դատարանում գործի քննությունը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու, գործի համար նշանակություն ունեցող նյութերը թաքցնելու կամ կեղծելու, քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով առանց հարգելի պատճառների չներկայանալու կամ այլ ճանապարհով, կատարել քրեական օրենքով չթույլատրված արարք, խուսափել քրեական պատասխանատվությունից և նշանակված պատիժը կրելուց և խոչընդոտել դատարանի դատավճռի կատարումը, քանի որ նշված դեպքում անմիջապես զրկվում է իր իսկ ազատությունից և ինքնաբերաբար նաև ֆինանսական միջոցներից: Միևնույն ժամանակ՝ հարկ է նշել, որ երբ առկա է նախաքննական մարմնի և դատախազության մերժումը մեղադրյալի նկատմամբ որպես խափանման միջոց գրավը կիրառելու

հարցում, դատարանը կաշկանդված չէ մինչդատական վարույթ իրականացնող մարմնի կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու միջնորդության քննարկման հետ մեկտեղ անդրադառնալ նաև մինչդատական վարույթ իրականացնող մարմնի կողմից գրավի մերժման համար առաջ քաշված հիմքերին:

Սույն տարբերակի իրագործումը պետությունից չի պահանջում ավելորդ ռեսուրսների ներդրում, հնարավոր է իրականացնել բավականին արագ և զուտ օրենսդրական փոփոխությունների շնորհիվ:

Հատկանշական է, որ ԱՄՆ-ում, Ֆրանսիայում, Գերմանիայում և ռոմանագերմանական իրավահամակարգի այլ պետություններում ևս սկզբնական շրջանում գրավը դիտարկվել է որպես կալանավորման այլընտրանքային խափանման միջոց<sup>11</sup>, սակայն նշված խափանման միջոցի գիտական մշակվածության աստիճանի կատարելագործումը և գրավը որպես ինքնուրույն, այսինքն՝ անկախ կալանավորման կիրառման անհրաժեշտության, գործադրելու հիմնավորվածությունը, ներկայումս առաջացրել է նշված երկրների պրակտիկայում որպես ինքնուրույն խափանման միջոց կիրառելու պահանջարկը: Այսպես՝ ԱՄՆ-ում գրավ կիրառելու իրավասությամբ են օժտված ոչ միայն դատավորները, այլ նաև ոստիկանության աշխատակիցները<sup>12</sup>, ինչի շնորհիվ, ձերբազատվելով բյուրոկրատական քաշքշուկից, խնայվում են պետական միջոցները, ավելին՝ կասկածյալը կամ մեղադրյալը, մնալով ազատության մեջ, հնարավորություն է ստանում շարունակելու աշխատել՝ ապահովելով իր և ընտանիքի անդամների կարիքները, միևնույն ժամանակ՝ աշխատանքի արդյունքով ձեռք բերված միջոցներով հատուցել տուժողին պատճառված գույքային վնասը<sup>13</sup>:

<sup>10</sup> Григорьев В.Н. Совершенствование нормативного регулирования залога в качестве меры пресечения по уголовным делам как одно из направлений в борьбе с отмыванием денежных средств, приобретенных незаконным путем. URL: <http://legislature.ru/>

<sup>11</sup> Коряковцев В.В. Залог как мера пресечения в уголовном процессе Российской Федерации. Правоведение. 2000. - 14. - С. 120-131.

<sup>12</sup> United States Code, Title 18, Sections 3141-3150, URL: <https://www.law.cornell.edu/uscode/text/18/part-II/chapter-207>

<sup>13</sup> Андроник Н.А. Сравнительный анализ применения залога в России и зарубежных странах. Вестник Уральского института экономики, управления и права. - URL: <https://cyberleninka.ru/article/n/sravnitelnyy-analiz-primeneniya-zaloga-v-rossii-i-zarubezhnyh-stranah>

Նշված կատարելագործման ուղիները հաշվի առնելով՝ գրավի ինստիտուտը պետք է ՀՀ-ում առավել լայն կիրառություն ստանա և մոտենա միջազգային ստանդարտներին, քանի որ անձին քրեական պատասխանատվության ենթարկելիս որպես նպատակ է դիտարկվում կարգազանց սուբյեկտին ուղղելը և հասարակությանն օրինապաշտ քաղաքացի վերադարձնելը: Ի վերջո՝ հարկ է արձանագրել, որ քրեական դատավարությանը՝ որպես հանցավորության դեմ պայքարի միջոց, փոխարինելու է

գալիս քրեական դատավարությունը՝ որպես քաղաքացիների իրավունքների երաշխիքների համակարգ, առաջին հերթին՝ նրանց, ովքեր ենթարկվում են քրեական հետապնդման, երկրորդ՝ ում իրավունքներն ու օրինական շահերը ոտնահարվել են, և երրորդ՝ նրանց, ովքեր օրենքի ուժով քրեական հետապնդման մարմիններ են, և որոնց պարտականությունները և պատասխանատվությունը պետք է հստակ ու առանց երկակի մեկնաբանությունների սահմանված լինեն օրենքով<sup>14</sup>:



<sup>14</sup> Мизулина Е.Б. Новое уголовное производство – надежная система гарантий прав граждан // Библиотека «Российской газеты». Вып. ' 58, М., 2002, С. 5.



**ԱՐՓԻ ԼԱԶԱՐՅԱՆ**

ԵՊՀ իրավագիտության մագիստրանտ

## **ՆԱԽԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՏՎԱԾ ՉՈՒՅՄՈՒՆՔՆԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՓՈՒՈՒՄ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Դատաքննությունը քրեական գործի քննության հիմնական (երկրորդ) փուլն է, որին մասնակցում են մեղադրողը, ամբաստանյալը, պաշտպանը և դատավարության այլ մասնակիցներ: Այս փուլը համարվում է հիմնական՝ ելնելով այն հանգամանքից, որ հենց այս փուլում են հետազոտվում այն բոլոր ապացույցները, որոնք հավաքվել են նախաքննության մարմնի կողմից<sup>1</sup>:

Դատաքննության փուլում կատարվող մի շարք գործողությունների շարքն է դասվում նաև նախաքննական ցուցմունքների հրապարակումը:

Օրենսդրական ոչ միանշանակ լուծումները հանգեցրել են այն իրավիճակին, որ պրակտիկայում այս ինստիտուտի հետ կապված առաջանում են բազմաթիվ հիմնախնդիրներ: Սակայն դրանց առավել մանրակրկիտ անդրադարձնալուց առաջ փորձենք ներկայացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով (այսուհետ նաև՝ Օրենսգրքը) և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծով (այսուհետ նաև՝ Նախագիծ) նախատեսված կարգավորումները:

Նախ՝ նշենք, որ, ի տարբերություն Օրենսգրքի, որն առանձին հոդվածներով է կարգավորում մեղադրյալի, ամբաստանյալի և վկաների ցուցմունքների հրապարակման կանոնները, Նախագիծը՝ 336 հոդվածի շրջանակներում, որն ունի «Ցուցմունքների հրապարակում» վերտառությունը, կարգավորում է դատաքննության փուլում ցուցմունքների հրապարակման ընդհանուր կարգը, որը վերաբերում է թե՛ ամբաստանյալի, թե՛ վկաների և տուժողի նախաքննական ցուցմունքների հրապարակմանը:

Փորձելով վերլուծել այս հարցի կապակցությամբ առաջացող գործնական մի քանի հիմնախնդիր՝ նախ և առաջ՝ անհրաժեշտ ենք համարում ներկայացնել մի քանի իրավիճակ,

որոնց ականատես է եղել հեղինակը դատական պրակտիկայի ուսումնասիրության ընթացքում: Այսպես.

Թիվ ԵԱՆԴ/0042/01/15 քրեական գործի դատաքննության ընթացքում հեղինակը ականատես եղավ մի իրադրության, երբ գործով վկան դատարանում հրաժարվեց ցուցմունք տալ՝ նշելով, որ օգտվում է իր մերձավորի դեմ ցուցմունք չտալու իրավունքից, քանզի գործով մեղադրյալը նրա եղբայրն էր, իսկ մեղադրողն առաջարկեց հրապարակել վկայի նախաքննական ցուցմունքները, մինչդեռ պաշտպանն առարկեց՝ հայտնելով, որ օրենսդրությամբ նախաքննության ցուցմունքների հրապարակման նման հիմք նախատեսված չէ:

Նախագահող դատավորը որոշում կայացրեց՝ հրապարակել վկայի նախաքննության ընթացքում տված ցուցմունքները և որպես հիմնավորում նշեց, որ Օրենսգրքի 342-րդ հոդվածի 1-ին մասում, ի թիվս այլ հիմքերի, սահմանված է նաև «*ինչպես նաև սույն օրենսգրքով նախատեսված այլ դեպքերում*» պահանջը, որը դատարանը մեկնաբանում է սույն դեպքի առումով:

Կարծում ենք՝ այս հարցի առավել հստակ կարգավորման և գործնականում նախագահողի, մեղադրանքի ու պաշտպանության կողմերի միջև առաջացող բանավեճը բացառելու և իրավական որոշակիության ապահովման տեսանկյունից անհրաժեշտ է հստակ կանոն սահմանել նաև դատարանում վկայության անձեռնմխելիությունից օգտվելու դեպքում վկայի և տուժողի նախաքննական ցուցմունքները հրապարակելու մասով: Այս մոտեցումն իրավաչափ է այնքանով, որ չի կարող լինել այնպես, որ ամբաստանյալը, ունենալով լռելու իրավունք, եթե օգտվում է իր այդ իրավունքից, ապա նրա ցուց-

● ՕՐԻՆԱԿԱՆՆՈՒԹՅՈՒՆ № 107 2018

<sup>1</sup> Барихин А.Б. Большой юридический энциклопедический словарь.– М.: Книжный мир, 2004.– С. 614.

մունքները հրապարակվում են (ինչը, մեր կարծիքով՝ ևս ոչ արդարացված է), իսկ վկայի և տուժողի դեպքում նրանց նախաքննության ընթացքում տված ցուցմունքները չհրապարակվեն: Ի վերջո՝ մենք այն կարծիքին ենք, որ ապացուցման սահմանները, որոնք ընդգծված են եղել նախաքննության փուլում, որի հիման վրա նախաքննության մարմինը կայացրել է որոշումներ և մեղադրական եզրակացությամբ գործն ուղարկել է դատարան, չի կարող նեղացվել վկայության անձեռնմխելիության ինստիտուտի հաշվառմամբ: Այլ կերպ ասած՝ չի կարող լինել այնպես, որ վկաները նախաքննության ընթացքում հրաժարվեն իրենց անձեռնմխելիությունից և ցուցմունքներ տան քրեական գործի հանգամանքների վերաբերյալ, ինչը հիմք ընդունելով՝ նախաքննության մարմինն անձին մեղադրանք առաջադրի, իսկ դատարանում վկաները վկայակոչեն իրենց անձեռնմխելիությունը և դրանով իսկ «ջարդեն» քրեական գործը, քանի որ այդ մոտեցումը հաճախ կդառնա գործուն միջոց անբարեխիղճ պաշտպանների կողմից տարբեր մանիպուլյացիաների և խորամանկությունների միջոցով դատարանում քրեական գործերով արդարացման դատավճիռների կայացման հիմքեր ստեղծելու համար: Այս մոտեցումը մեզ համար անընդունելի է հատկապես հայ իրականության պայմաններում, երբ նախաքննության ընթացքում համագործակցած վկաները, անգամ տուժողները դատարանում հրաժարվում են իրենց նախաքննության ընթացքում տված ցուցմունքներից, պարբերաբար մեղադրում են ոստիկանության և քննչական մարմինների աշխատակիցներին կեղծիքների կատարման մեջ, հարկադրանք կիրառելու մեջ և այլն: Մեր կողմից Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանում տարբեր քրեական գործերով իրականացրած դիտարկումները ցույց տվեցին, որ գրեթե բոլոր գործերով դատարանը հրապարակում է նախաքննության ընթացքում տված ցուցմունքները, քանի որ անընդհատ առաջանում են հակասություններ, կամ վկաները հայտնում են, որ չեն հիշում և այլն, ինչը հիմք ընդունելով՝ դատարանը հրապարակում է նախաքննության ընթացքում տված ցուցմունքները:

Առավել ուշագրավ է այն հանգամանքը, որ նման մոտեցումը հատկապես խոցելի կարող է դարձնել ընտանեկան բռնությունների վերաբե-

րյալ գործերով արդարադատության իրականացումը, քանի որ այդ գործերով անցնող վկաները, տուժողը և ամբաստանյալը գտնվում են ազգակցական և բարեկամական կապերի մեջ, և եթե բոլորը վկայակոչեն իրենց վկայության անձեռնմխելիությունը և հրաժարվեն ցուցմունքներ տալուց, դատարանին չի մնալու ոչ այլ ինչ, քան արդարացման դատավճիռ արձակելը, որի հետևանքը լինելու է ռեաբիլիտացիան և այլն: Կարծում ենք՝ նաև ռեաբիլիտացիայի տեսանկյունից չի կարող իրավաչափ համարվել վկայության անձեռնմխելիության հիմքով ցուցմունք տալուց հրաժարվելու դեպքում նախաքննական ցուցմունքները հրապարակելու արգելքը:

Պետք է նկատել, որ այս հարցին լուծում չի տրվել նաև Նախագծում:

Այս խնդրին՝ իր նախադեպային որոշումներով բազմից անդրադարձել է նաև ՄԻԵԴ-ը, որը, մասնավորապես, նշել է. «Դատարանը կրկին նշում է, որ 6-րդ հոդվածի կիրառությունը կարգավորող հիմնական սկզբունքն արդարացիությունն է: Արդար դատաքննության իրավունքը ժողովրդավարական հասարակության մեջ այնքան կարևոր տեղ է զբաղեցնում, որ 6-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված երաշխիքները նեղ իմաստով մեկնաբանելը որևէ կերպ չի կարող արդարացվել (տե՛ս Մորեյրա դե Ազևեդոն ընդդեմ Պորտուգալիայի [Մորեյրա դե Ազևեդո վ. Պորտուգալ], 1990 թվականի հոկտեմբերի 23, §66, շարք Ա թիվ 189, Գրեգաչևիչսն ընդդեմ Խորվաթիայի [Գրեգաչևիչ վ. Գրոատիա], թիվ 58331/09, §49, 2012 թվականի հուլիսի 10):

Արդար դատաքննություն հասկացությունը ենթադրում է, ինտերալիա, մրցակցային դատավարության իրավունքը, ինչը քրեական գործի պարագայում նշանակում է, որ և՛ մեղադրանքի, և՛ պաշտպանության կողմերին պետք է տրվի մյուս կողմի ներկայացրած փաստարկներին ու ապացույցներին ծանոթանալու և դրանք մեկնաբանելու հնարավորություն (տե՛ս Բրանդշթեթերն ընդդեմ Ավստրիայի [Բրանդշթեթեր վ. Աուստրիա], 1991 թվականի օգոստոսի 28, §67, շարք Ա թիվ 211):

Այս առնչությամբ Դատարանը նշում է. հնարավոր է, որ դատավարական այնպիսի իրավիճակը, որի դեպքում մի կողմի համար հակառակ կողմի համեմատ անբարենպաստ պայմաններ չեն ստեղծվում, այնուամենայնիվ, հանդի-

սանա մրցակցային դատավարության իրավունքի խախտում, եթե տվյալ կողմին չի տրվել ներկայացված բոլոր ապացույցներին կամ փաստարկներին ծանոթանալու և դրանք մեկնաբանելու հնարավորություն, ինչը թույլ կտար ազդել դատարանի որոշման վրա (տես Կրչմարը և այլք ընդդեմ Չեխիայի Հանրապետության [Կրչմար անդ Ոթերս վ. թե Ցզեչ Ռեպուբլից], թիվ 35376/97, §§38-46, 2000 թվականի մարտի 3 և Գրեգաչևիչի գործը՝ վերևում հիշատակված, §50):

Դատարանն այնուհետև նշում է, որ որպես ընդհանուր կանոն՝ 6-րդ հոդվածի 1-ին կետով և 3-րդ կետի «դ» ենթակետով պահանջվում է, որ ամբաստանյալին տրվի վկայի՝ իր դեմ տված ցուցմունքի թույլատրելիությունը վիճարկելու կամ իր դեմ ցուցմունք տված վկային հարցաքննելու համարժեք և պատշաճ հնարավորություն՝ վկայի կողմից ցուցմունք տալիս կամ հետագա փուլերում (տես Ալ-Խավաջան և Թահերին ընդդեմ Միացյալ Թագավորության [ՄՊ] [Ալ-Խավաջա անդ Տահերյ վ. թե Ունիտեդ Կինգդոմ [ԳՑ]], թիվ 26766/05 և թիվ 22228/06, §118, ՄԻԵԴ 2011, Պոլետանը և Ազիրովիկն ընդդեմ Մակեդոնիայի նախկին Հարավսլավական Հանրապետության [Պոլետան անդ Ազիրովիկ վ. թե Ֆորմեր Յուգոսլավ Ռեպուբլից ոֆ Մացեդոնիա], թիվ 26711/07, 32786/10 և 34278/10, §81, 2016 թվականի մայիսի 12):

Ոստիկանության կողմից հետաքննության կամ դատական քննության փուլերում ստացված ցուցմունքները որպես ապացույց օգտագործելն ինքնին չի հակասում վերոնշյալ դրույթներին՝ պայմանով, որ, որպես հետևանք՝ պաշտպանության կողմի իրավունքները չեն խախտվել (տես Սայիդին ընդդեմ Ֆրանսիայի [Սաիդի վ.Ֆրանցե], 1993 թվականի սեպտեմբերի 20, §43, շարք Ա թիվ 261-Գ):

Ալ-Խավաջայի և Թահերիի գործում Մեծ պալատը հստակեցրել է այն սկզբունքները, որոնք պետք է կիրառվեն այն դեպքում, երբ վկան դռնբաց դատական քննությանը չի ներկայանում: Այդ սկզբունքները կարող են ամփոփ ներկայացվել հետևյալ կերպ.

ա) Դատարանը նախապատրաստական փուլում նախ պետք է քննի այն հարցը, թե արդյոք հիմնավոր պատճառ կամ չներկայացած վկայի տված ցուցմունքը որպես ապացույց ճանաչելու համար՝ հաշվի առնելով, որ վկաները պետք

է, որպես ընդհանուր կանոն, ցուցմունք տան դատական քննության ընթացքում, և որ պետք է ձեռնարկվեն բոլոր անհրաժեշտ միջոցները՝ նրանց ներկայանալն ապահովելու համար.

բ) այն դեպքում, երբ վկան չի հարցաքննվել վարույթի նախորդ որևէ փուլում, դատական քննության ընթացքում, դատարանում ցուցմունք տալու փոխարեն վկայի՝ նախկինում տված ցուցմունքի գրավոր հաստատումը որպես ապացույց ճանաչելը պետք է ծայրահեղ միջոց լինի.

գ) չներկայացած վկաների՝ նախկինում տված ցուցմունքը որպես ապացույց ճանաչելն անբարենպաստ հետևանքներ է առաջացնում ամբաստանյալի համար, ինչը, ըստ էության՝ քրեական դատավարության ընթացքում պետք է ունենա իր դեմ ներկայացված ապացույցների թույլատրելիությունը վիճարկելու արդյունավետ հնարավորություն: Մասնավորապես՝ նա պետք է կարողանա ստուգել վկաների տված ցուցմունքների ճշմարտացիությունը և հավաստիությունը՝ իր ներկայությամբ վկաներին բանավոր հարցաքննելու միջոցով՝ վկայի կողմից ցուցմունք տալիս կամ վարույթի հետագա փուլերում.

դ) «միակ կամ վճռորոշ ապացույցի սկզբունքի» համաձայն՝ այն դեպքում, երբ ամբաստանյալին դատապարտելու համար հիմք են ծառայում բացառապես կամ հիմնականում այն վկաների տված ցուցմունքները, որոնց մեղադրյալը չի կարող հարցաքննել դատավարության փուլերից որևէ մեկում, նրա պաշտպանության իրավունքներն անհիմն սահմանափակվում են.

ե) այս համատեքստում «վճռորոշ» ցուցմունք պետք է նշանակի միայն այնպիսի նշանակությամբ կամ կարևորությամբ ցուցմունք, որը կարող է որոշել գործի ելքը: Եթե վկայի չստուգված ցուցմունքը հիմնավորվում է այլ հաստատված ապացույցներով, ապա գնահատականն այն մասին՝ արդյոք դա վճռորոշ է, կախված կլինի հիմնավորող ապացույցների հավաստիությունից. որքան հավաստի են մեղավորությունը հաստատող մյուս ապացույցները, այնքան քիչ հավանական է, որ չներկայացած վկայի ցուցմունքը կհամարվի վճռորոշ:

Այս սկզբունքները մանրամասնորեն պարզաբանվել են Շաչաշվիլիի գործում (տես Շաչաշվիլին ընդդեմ Գերմանիայի [ՄՊ] [Սչաժ-չասշվիլի վ. Գերմանիայի [ԳՑ]], թիվ 9154/10, §§111-131, ՄԻԵԴ 2015), որի ընթացքում Մեծ

պալատը հաստատել է, որ վկայի չներկայանալու համար հիմնավոր պատճառի բացակայությունը չի կարող ինքնին վկայել դատաքննության անարդարացի լինելու մասին, թեև ընդհանուր արդարացիությունը գնահատելիս ամեն դեպքում կարևոր գործոն է՝ հավասարակշռությունը որոշելու համար և կարող է որոշիչ դեր ունենալ 6-րդ հոդվածի 1-ին կետի և 3-րդ կետի «դ» ենթակետի խախտում արձանագրելու հարցում: Ավելին՝ հաշվի առնելով, որ Դատարանի խնդիրն է պարզել՝ արդյոք դատաքննությունն ընդհանուր առմամբ արդարացի է եղել, պետք է ուսումնասիրվի բավարար հակակշռող գործոնների առկայությունը ոչ միայն այն գործերում, որոնց դեպքում չներկայացած վկայի ցուցմունքը միակ կամ վճռորոշ հիմքն է եղել դիմումատուին դատապարտելու համար, այլ նաև այն գործերում, որոնց դեպքում չի կարողացել հստակ պարզել՝ արդյոք խնդրո առարկա ցուցմունքը միակը և վճռորոշն է եղել, սակայն, այնուհանդերձ՝ համոզվել է, որ այդ ցուցմունքը կարևոր նշանակություն է ունեցել, և դա որպես ապացույց ճանաչելը, հնարավոր է, սահմանափակել է պաշտպանության կողմի հնարավորությունները: Հակակշռող գործոնների՝ դատաքննությունն արդար համարելու համար անհրաժեշտ շրջանակը կախված է չներկայացած վկայի ցուցմունքի նշանակությունից: Որքան կարևոր նշանակություն ունենա այդ ցուցմունքը, այնքան ավելի կարևոր նշանակություն պետք է ունենան հակակշռող գործոնները, որպեսզի դատաքննությունն ընդհանուր առմամբ համարվի արդարացի (տե՛ս Սեթոնն ընդդեմ Միացյալ Թագավորության [Սետոն վ. թե Ունիտեդ Կինգդոմ], թիվ 55287/10, §§58 և 59, 2016 թվականի մարտի 31):

Դատարանը նաև փաստել է, որ թեպետ, եթե անգամ գործում առկա են լինում մեղադրյալի մեղավորությունը հաստատող այլ ապացույցներ, այնուամենայնիվ, հաշվի առնելով այն փաստը, որ եթե դատարանն անհրաժեշտ է համարում հիմք ընդունել նաև վկաների նախաքննական ցուցմունքները՝ հաստատելու համար մեղադրանքը, ապա պարտավոր էր մեղադրյալին իր պաշտպանությունը պատշաճորեն կազմակերպելու և իր բոլոր համապատասխան փաստարկները ներկայացնելու հնարավորություն ընձեռել:

Ավելին՝ ինչպես բազմաթիվ անգամներ Դատարանը նշել է՝ արդար դատաքննության պահանջներից մեկն այն է, որ **մեղադրյալին տրվի այն դատավորի ներկայությամբ վկաներին առերես հարցաքննելու հնարավորություն**, որը վերջնական որոշում է կայացնելու գործի վերաբերյալ, քանի որ դատավորի դիտարկումները տվյալ վկայի վարքագծի վերաբերյալ և այն մասին, թե որքանով կարելի է վստահել նրան, կարող են հետևանքներ ունենալ մեղադրյալի համար (տե՛ս Հանուն ընդդեմ Ռումինիայի [Հանու վ. Ռումանիա], թիվ 10890/04, §40, 2013 թվականի հունիսի 4, հաջորդող հղումների հետ):

Թեև Վերաքննիչ դատարանը դիմումատուի մեղավորության վերաբերյալ նոր եզրակացության չի հանգել, այնուամենայնիվ, ունենալով Վարչական շրջանի դատարանի դատավճիռը փաստերի և օրենքի տեսանկյունից վերանայելու ամբողջական իրավասություն՝ Վերաքննիչ դատարանն իր եզրահանգումները կատարելիս ոչ միայն հիմք է ընդունել վկաների՝ Վերաքննիչ դատարանում չստուգված ցուցմունքները, այլ նաև խնդրո առարկա վկաները չեն հարցաքննվել Վարչական շրջանի դատարանի կողմից (տե՛ս ա ցոնտրարիո (հակառակը)՝ Կաշլեն ընդդեմ Էստոնիայի [Կաշլե վ. Էստոնիա], թիվ 22574/08, §47, 2016 թվականի ապրիլի 26): Վարչական շրջանի դատարանն այդ ապացույցներին չի անդրադարձել նաև դիմումատուին դատապարտելիս: Այս հանգամանքներում այն փաստը, որ Վերաքննիչ դատարանն անձամբ չի քննել այն վկաներին, որոնց ցուցմունքները հետագայում օգտագործվել են դիմումատուի դեմ, կարող էր մեծապես ազդել դիմումատուի պաշտպանության իրավունքների վրա:

Եվրոպական դատարանը նաև արձանագրել է, որ այն դեպքում, երբ մեղադրյալին դեռ որևէ մեղադրանք առաջադրված չի եղել և, նա զրկված է եղել նախաքննության ընթացքում նրանց տված ցուցմունքները վիճարկելու հնարավորությունից, այդ պարագայում Վերաքննիչ դատարանը չէր կարող հիմնվել վերաքննիչ վարույթին չներկայացած և առաջին ատյանի դատարանում չհարցաքննված վկաների ցուցմունքների վրա (տե՛ս վերևում՝ 38-րդ պարբերությունը):

Եվրոպական դատարանը նշել է նաև, որ, չնայած չի հաստատում, թե ցուցմունքները միակը և վճռորոշն են եղել, սակայն, այդուհանդերձ՝ համոզված է, որ դրանք նշանակալի դեր են ունեցել, և դրանք որպես ապացույց ճանաչելը, հնարավոր է, սահմանափակել է պաշտպանության կողմի հնարավորությունները (տե՛ս վերևում՝ 55-րդ պարբերությունը՝ տվյալ հարցի վերաբերյալ Դատարանի նախադեպային իրավունքին հղումներով):

Այսպիսով՝ ՄԻԵԴ-ն արձանագրել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի և 3-րդ կետի «դ» ենթակետով նախատեսված արդար դատաքննության իրավունքի խախտում այն դեպքերում, երբ ներպետական օրենսդրության համաձայն ցուցմունք տալու պարտականությունից ազատված անձն օգտվել է այդ իրավունքից և հրաժարվել է ցուցմունք տալ, սակայն ներպետական դատարանը, այնուամենայնիվ, հիմնվել է նրա նախաքննական ցուցմունքների վրա, որոնք տրվել են այն փուլում, երբ դիմումատուն վարույթում մեղադրյալի կարգավիճակ չի ունեցել:

Անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ նաև այն խնդրին, թե արդյոք ամբաստանյալի նախաքննության ընթացքում որպես վկա տված ցուցմունքները կարող են հրապարակվել, թե՛ ոչ: Այս առումով ուշագրավ է հատկապես թիվ ԵԱՆԴ/0032/01/16 քրեական գործը, քանի որ սույն գործով ամբաստանյալը հրաժարվեց ցուցմունք տալուց, իսկ դատարանը հրապարակեց ամբաստանյալի նախաքննական բոլոր ցուցմունքները, այդ թվում նաև՝ որպես վկա տված ցուցմունք, որի դեմ առարկեց պաշտպանը և դատական վիճաբանությունների փուլում դատարանին միջնորդություն ներկայացրեց այդ ապացույցն անթույլատրելի ճանաչել, քանի որ, պաշտպանի կարծիքով՝ դատարանում թույլատրվում է հրապարակել բացառապես մեղադրյալի այն նախաքննական ցուցմունքները, որոնք նա տվել է՝ որպես մեղադրյալ:

Դատարանը, դատավճռում անդրադառնալով այդ միջնորդությանը, նշել է հետևյալը՝ «Դատարանը համարում է, որ պաշտպանի դիրքորոշումը չի բխում օրենքի տառից և ոգուց, քանի որ Օրենսգրքի 337-րդ հոդվածում նշված դրույթից չի հետևում, որ դատական քննության փուլում, եթե ամբաստանյալը հրաժարվում է ցուց-

մունքներ տալուց, ենթակա են հրապարակման բացառապես նրա նախաքննական այն ցուցմունքները, որոնք նա տվել է որպես մեղադրյալ: Ընդհակառակն՝ օրենքից հետևում է, որ խոսքը մեղադրյալի նախաքննության ընթացքում տված ցուցմունքների հրապարակման մասին է, որոնց մեջ, կոնկրետ գործի հանգամանքներից ելնելով, կարող են ներառվել նաև մինչև մեղադրյալ ներգրավելը մեղադրյալի նախաքննության ընթացքում որպես վկա, տուժող, կասկածյալ տված ցուցմունքները: Դատարանը համարում է, որ պաշտպանի մտերցումը չի բխում դատական քննության փուլում նախաքննական ցուցմունքների հրապարակման ինստիտուտի էությունից և էականորեն սահմանափակում է դատարանում ապացուցման սահմանները, ինչն ընդգծված է եղել նախաքննության փուլում, և ինչի նպատակն է ապահովել Օրենսգրքի 126-127-րդ հոդվածներով ամրագրված ապացույցների օբյեկտիվ, լրիվ և բազմակողմանի ստուգումը և գնահատումը՝ դատարանի կողմից: Դատարանը համարում է, որ մեղադրյալի նախաքննության ընթացքում ցանկացած կարգավիճակում (տուժող, վկա, կասկածյալ) տված ցուցմունքները կարող են հրապարակվել և հետազոտվել դատարանում, եթե առկա են դրանք հրապարակելու համար անհրաժեշտ օրենսդրական հիմքերը՝ անկախ այն հանգամանքից՝ ցուցմունքները օգտագործվում են մեղադրանքը հիմնավորելու, թե՛ հերքելու համար, այլ հարց է, որ դրանք պետք է գնահատվեն թույլատրելիության, վերաբերելիության և արժանահավատության տեսանկյունից:

Դատարանի հետևությունը բխում է նաև այն հանգամանքից, որ Օրենսգրքի 105-րդ հոդվածում ամրագրված՝ ապացույցներն անթույլատրելի ճանաչելուն հիմքերի և պայմանների մեջ նախատեսված չէ քննարկվող դեպքը՝ որպես ապացույցի օգտագործման արգելքի ինքնուրույն հիմք, պայման, դա պետք է քննարկել ընդհանուրի համատեքստում»:

Կարծում ենք՝ դատարանի նման մոտեցումը հասկանալի է և իրավաչափ, սակայն ակնհայտ անհիմն չեն նաև պաշտպանի պնդումները, ուստի կարծում ենք, որ այս հարցի առավել տրամաբանական լուծումը կլինի օրենսդրական կարգավորումը կամ ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից համապատասխան իրավական դիրքորոշում ձևավորելը:

**ԹԱՄԱՐԱ ՇԱՔԱՐՅԱԼ**

ԵՆ և ԵՄ Երևանյան գրասենյակի ազգային փորձագետ,  
 ՀՀ կառավարման ակադեմիայի և  
 Արդարադատության ակադեմիայի դասախոս,  
 իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ,  
 արդարադատության առաջին դասի խորհրդական

**ԱՐՏԱԿ ԽԱՆԱՄԻՐՅԱԼ**

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի  
 մագիստրանտ

**ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
 ՍԱՀՄԱՆԱՓՈՎՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԲԱՐԵՓՈՒՍՎԱԾ  
 ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

2015թ. սահմանադրական բարեփոխումների հայեցակարգում ամրագրված սկզբունքներից է այն, որ սահմանադրական նորմերը ոչ միայն պետք է հռչակեն մարդու սահմանադրական իրավունքները և սահմանեն դրանց իրացման երաշխիքները, այլև առավելագույնս հստակ սահմանեն առանձին իրավունքների սահմանափակման թույլատրելի շրջանակները՝ ելնելով միջազգային իրավունքի նորմերից, լինեն համաչափ, չաղավաղեն իրավունքի բովանդակությունն ու իմաստը, հստակ սահմանվեն օրենքով և զուգակցվեն հանրային իշխանության համարժեք պարտականություններով:

Հիմնական իրավունքների և ազատությունների իրացումը շատ հաճախ կարող է հանգեցնել ինչպես այլ անձանց իրավունքների, այնպես էլ հանրության շահերի հետ բախման: Նման հնարավոր բախումները կանխելու և տարբեր շահերն ու իրավունքները միմյանց հետ համաձայնեցնելու համար չի բացառվում պետության միջամտությունը, որն իրականացվում է հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման միջոցով:

Հիմնական իրավունքների սահմանափակումների իրավական ազդեցությունն այն է, որ դրանք հիմնական իրավունքների երաշխավորման պարտականություն ունեցող պետական իշխանությանը հնարավորություն են ընձեռում՝ շեղվելու հիմնական իրավունքների վերաբեր-

յալ դրույթներում սահմանված պահանջներից և, հատկապես՝ արգելքներից<sup>1</sup>: Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակումը Սահմանադրությամբ և օրենքով արդեն ամրագրված և սահմանադրված կոնկրետ իրավունքի կամ ազատության բովանդակության նեղացումը, նվազեցումը, բացառումն է պետության կողմից՝ ինչ-ինչ կարևոր շահերից ելնելով: Ձևական իրավական առումով մարդու իրավունքների և ազատությունների սահմանափակումը նշանակում է օրենսդրությամբ նախատեսված դեպքերում դրանց իրականացման իրավական անհնարինությունը կամ հավասարապես օրենքով սահմանված դրանց ծավալի կրճատումը<sup>2</sup>:

Այսպիսով՝ հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակումները սահմանադրաիրավական կարգավորումներ են, որոնցով հիմնական իրավունքների երաշխավորման մասին դրույթներով երաշխավորված հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը կրճատվում է սահմանադրության մակարդակով<sup>3</sup>:

Մարդու իրավունքների սահմանափակումների վերաբերյալ սահմանափակումները կարող են իրականացվել հետևյալ եղանակներով՝ ա) արգելքներ, որոնք կարող են լինել հարաբերական (իրավունքի կամ ազատության իրականացման որոշակի տարբերակի արգելում,

● ՕՐԻՆԱԿԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ № 107 2018

<sup>1</sup> Տեն Ջաքս Մ., Սահմանադրական իրավունք II: Հիմնական իրավունքներ. Մաս I. Հիմնական իրավունքների տեսություն, 2-րդ հրատարակություն, Եր., Տիգրան Մեծ, 2015, էջ 209:  
<sup>2</sup> Տեն Հեղինակային խումբ, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ, Եր., Իրավունք, 2010, էջ 509:  
<sup>3</sup> Տեն Ջաքս Մ., Սահմանադրական իրավունք II: Հիմնական իրավունքներ. Մաս I. Հիմնական իրավունքների տեսություն, 2-րդ հրատարակություն, Եր., Տիգրան Մեծ, 2015, էջ 208-209:

այսինքն՝ վարքագծի սահմանների որոշում) և բացարձակ (իրավունքի կամ ազատության ամբողջ ծավալի իրականացման արգելում, բացարձակ արգելք), բ) կասեցում՝ մարդու իրավունքների և ազատությունների գործողության ժամանակավոր կասեցում, գ) իրավասու պետական մարմինների ներխուժում (ակտիվ գործողությունների միջոցով) մարդու իրավունքների և ազատությունների ոլորտ, դ) պարտականություն, ե) պատասխանատվություն<sup>4</sup>:

Հարկ է ընդգծել, որ իրավունքների և ազատությունների սահմանափակման վերաբերյալ դրույթներ ամրագրված են մի շարք միջազգային փաստաթղթերում, որոնք իրենց ամրագրումն են ստացել նաև պետությունների Սահմանադրություններում և օրենքներում: Այսպես՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի<sup>5</sup> 29-րդ հոդվածի համաձայն. «Իր իրավունքներն ու ազատություններն իրականացնելիս յուրաքանչյուր ոք պետք է ենթակա լինի միմյայն այնպիսի սահմանափակումների, որոնք օրենքով սահմանված են բացառապես ուրիշների իրավունքների և ազատությունների պատշաճ ճանաչումն ու հարգանքն ապահովելու և ժողովրդավարական հասարակարգում բարոյականության արդարացի պահանջները, հասարակական կարգը և ընդհանուր բարեկեցությունը բարելավելու նպատակով»:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ ՄԻԵԴ) իր վճիռներից մեկում նշել է, որ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայով<sup>6</sup> (այսուհետ՝ Կոնվենցիա) նախատեսված նպատակների իրականացումը ժողովրդավարական հասարակությունում հնարավոր չէ իրականացնել, եթե չպահպանվեն համապատասխանությունը և հավասարակշռությունն առանձին իրավունքների և հասարա-

կական շահերի միջև, իսկ այդ համապատասխանությունը և հավասարակշռությունը ենթադրում են, որ անձի իրավունքները բացարձակ չեն, և որ առանձին անձի իրավունքի իրականացումը միշտ պետք է համեմատվի պետության ներսում գոյություն ունեցող առավել լայն հասարակական շահերի հետ: Կոնվենցիան պետք է փնտրի արդարացի հավասարակշռություն ամբողջությամբ հասարակական շահերի պահպանման և յուրաքանչյուր առանձին մարդու հիմնական իրավունքների պաշտպանության պահանջների միջև<sup>7</sup>:

Կոնվենցիայով՝ անձնական և ընտանեկան կյանքը հարգելու (հոդ. 8), մտքի, խղճի և կրոնի ազատության (հոդ. 9), արտահայտվելու ազատության (հոդ. 10), հավաքների և միավորման ազատության (հոդ. 11), տեղաշարժի ազատության (թիվ 4 Արձանագրություն, հոդ. 2) իրավունքները երաշխավորող դրույթներով միաժամանակ ամրագրված են նաև այդ իրավունքների սահմանափակումները միայն օրենքով նախատեսված դեպքերում, և եթե դա անհրաժեշտ է՝ ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, տարածքային ամբողջականության, հասարակական կարգի կամ երկրի տնտեսական բարեկեցության, ինչպես նաև անկարգությունների կամ հանցագործությունների կանխման, առողջության կամ բարոյականության պաշտպանության կամ այլ անձանց հեղինակության, իրավունքների և ազատությունների պաշտպանության և այլ իրավաչափ նպատակների հասնելու համար:

Համանման դրույթներ սահմանված են նաև Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրով<sup>8</sup>: Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագրում<sup>9</sup> ամրագրված է, որ մասնակից պետությունները կա-

<sup>4</sup> Տե՛ս Հեղինակային խումբ, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ, Եր., Իրավունք, 2010, էջ 509:

<sup>5</sup> Տե՛ս Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, 10 դեկտեմբերի 1948թ.:

<sup>6</sup> Տե՛ս Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիա, 4 նոյեմբերի 1950թ.:

<sup>7</sup> Տե՛ս Հեղինակային խումբ, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին 1950թ. նոյեմբերի 4-ի կոնվենցիայի և դրան կից արձանագրությունների մեկնաբանություն. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը, Եր., Տիգրան Մեծ, 2005, էջ 279-280:

<sup>8</sup> Տե՛ս Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր, 16 դեկտեմբերի 1966թ.:

<sup>9</sup> Տե՛ս Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագիր, 16 դեկտեմբերի 1966թ.:

րող են սահմանել միայն դաշնագրով ճանաչվող իրավունքների այնպիսի սահմանափակումներ, որոնք որոշվում են օրենքով և միայն այնքանով, որքանով դա համատեղելի է այդ իրավունքների բնույթի հետ, և բացառապես ժողովրդավարական հասարակության մեջ ընդհանուր բարօրությանը նպաստելու նպատակով:

Ելնելով համաշխարհային սահմանադրական պրակտիկայից՝ ինչպես նախկին երկու՝ 1995թ. ՀՀ Սահմանադրությունը և 2005թ. փոփոխություններով ՀՀ Սահմանադրությունը, այնպես էլ գործող 2015թ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրությունը սահմանում են իրավունքների և ազատությունների սահմանափակման կարգը, նպատակները և հիմքերը: Սակայն հարկ է ընդգծել, որ 2015թ. փոփոխություններով ՀՀ Սահմանադրությունը (այսուհետ՝ Սահմանադրություն) իրավունքների սահմանափակման կառուցակարգերում սահմանել է նախկին կարգավորումներից էական տարբերվող բարեփոխված կարգավորումներ, որոնց առավել մանրամասն կանդիդատներն են ստորև:

Սահմանադրության «Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները» վերտառությամբ 2-րդ գլխի դրույթների վերլուծությունը թույլ է տալիս մարդու հիմնական իրավունքներն ու ազատությունները դասակարգել սահմանափակվող, **ժամանակավորապես սահմանափակվող (ընդգծումը՝ Թ.Շ)** և չսահմանափակվող հիմնական իրավունքների և ազատությունների<sup>10</sup>:

1. Սահմանափակվող են այն հիմնական իրավունքներն ու ազատությունները, որոնց սահմանափակման հնարավորությունը և նպատակները սահմանվում են Սահմանադրությամբ: Սահմանադրորեն սահմանված է նաև հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման հիմնական պայմանները: Հիմնական իրավունքների սահմանափակմանը ներկայացվող պայմանների մեջ իր ուրույն նշանակությունն ունեն համաչափության և որոշակիության սկզբունքները, որոնք առաջին ան-

գամ իրենց ամրագրումն ստացան Սահմանադրության 78-րդ և 79-րդ հոդվածներում: Մասնավորապես՝ հիմնական իրավունքներն ու ազատությունները սահմանափակելիս պետք է հիմք ընդունել հետևյալ իրավական չափանիշները.

ա) Սահմանափակումը պետք է նախատեսված լինի օրենքով, այսինքն՝ սահմանափակման ձևն օրենքն է: Օրենքով նախատեսված պահանջը չի կարող ձևական բնույթ ունենալ, այլ պետք է համապատասխանի իրավական որոշակիության սկզբունքին: Սահմանադրության 79-րդ հոդվածի համաձայն՝ հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ: Այսինքն՝ օրենքով սահմանափակումների իրավական ձևակերպումները, ինչպես նաև սահմանափակումների հիմքերը և ծավալը, պետք է հստակ սահմանվեն: Ընդ որում՝ օրենքները պետք է լինեն բավարար չափով մատչելի, ընկալելի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները կամ հասցեատերերը ի վիճակի լինեն կողմնորոշվելու և հասկանալու իրավական նորմի բովանդակությունը և դրսևորելու համապատասխան վարքագիծ:

ՄԻԵԴ-ն, իր որոշումներում տվել է «օրենքով նախատեսված» ձևակերպման մեկնաբանությունը<sup>11</sup>: «Սանդի Թայմսն» ընդդեմ Միացյալ Թագավորության գործով վճռում նշվում է, որ «օրենքով նախատեսված» արտահայտությունից բխում են հետևյալ երկու պահանջները: Առաջին՝ իրավունքը պետք է լինի միևնույն չափով մատչելի՝ քաղաքացիները պետք է համապատասխան հանգամանքներում հնարավորություն ունենան կողմնորոշվելու, թե տվյալ դեպքում ինչ իրավական նորմեր են կիրառվում: Երկրորդ՝ նորմը չի կարող համարվել «օրենք», եթե ձևակերպված չէ բավարար ճշգրտու-

<sup>10</sup> Իրավաբանական գրականության մեջ իրավաբան-գիտնականներն իրավունքները և ազատությունները դասակարգում են սահմանափակվող և չսահմանափակվող իրավունքների:

<sup>11</sup> «Օրենքով նախատեսված» ձևակերպման մեկնաբանություններին ՄԻԵԴ-ն անդրադարձել է նաև Ռոտարուն ընդդեմ Ռումինիայի (4 մայիսի 2000թ.), Էյմանն ընդդեմ Շվեյցարիայի (16 փետրվարի 2000թ.), Հասանը և Չաուշն ընդդեմ Բուլղարիայի (26 հոկտեմբերի 2000թ.) գործերով իր վճիռներում:



թյամբ, որը թույլ կտա մարդկանց դրան համապատասխանեցնել իրենց վարքագիծը<sup>12</sup>:

Սահմանադրական դատարանն իր՝ ՍԴՈ-1137 (4 փետրվարի, 2014թ.) որոշման մեջ նշել է, որ. «Բոլոր դեպքերում ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքը կամ իրավունքի սահմանափակումը (խոսքը չի վերաբերում Սահմանադրությամբ նախատեսված արտակարգ և ռազմական դրության ժամանակ իրավունքի ժամանակավորապես սահմանափակմանը) կարող է նախատեսված լինել կամ Սահմանադրությամբ, կամ օրենքով, կամ միջազգային պայմանագրով, և ոչ թե՛ այլ իրավական ակտով: Այլ նորմատիվ, ինչպես նաև անհատական իրավական ակտերով չեն կարող ամրագրվել կամ սահմանվել իրավունքներ կամ իրավունքի սահմանափակումներ, իսկ անհատական իրավական ակտերով, որպես իրավունքի կիրառման ակտեր, կարող են ընդամենը կիրառվել իրավունքի սահմանափակումները»:

Հարկ է նաև ընդգծել, որ հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակումներ նախատեսող օրենքով պետք է ամրագրվեն ոչ միայն կոնկրետ իրավունքի սահմանափակման սահմանադրությունից բխող թույլատրելիությունը և նպատակները, այլ նաև՝ սահմանափակման դեպքերը և կարգը: Այսպես՝ Սահմանադրության 27-րդ հոդվածում սահմանադիրը սպառիչ սահմանել է անձնական ազատության իրավունքի սահմանափակման դեպքերը: Ընդ որում՝ չի բացառում, որ օրենքը կոնկրետ իրավունքի սահմանափակման համար որպես պարտադիր նախապայման սահմանի նաև դատարանի որոշման առկայությունը: Այս պայմանի սահմանումը, տարբեր հնարավոր սահմանափակումների առնչությամբ, սահմանադիրը թողել է օրենսդրի հայեցողությանը կամ օրենքով կարգավորելու անհրաժեշտությանը կամ սահմանել է Սահմանադրությամբ: Այսպես՝ բնակարանի անձեռնմխելիության իրավունքը սահմանող Սահմանադրության 32-րդ հոդվածում սահմանադիրը, մի դեպքում՝ ամրագրելով խուզարկության հնարավոր

ությունը պարտադիր դատարանի որոշմամբ, միևնույն ժամանակ՝ օրենսդրի հայեցողությանն է վերապահել դատարանի որոշմամբ բնակարանի անձեռնմխելիության իրավունքի սահմանափակման նաև այլ դեպքերի սահմանումը: Կամ՝ Սահմանադրության 33-րդ հոդվածի 3-րդ մասում հստակ ամրագրել է դատարանի որոշման պարտադիր առկայություն հաղորդակցության գաղտնիության սահմանափակման դեպքում: Այս դեպքում դատարանի որոշման առկայության պարտադիր նախապայմանը չի թողնվել օրենսդրի հայեցողությանը, այլ նախատեսվել է հենց Սահմանադրությամբ:

բ) Սահմանափակումը հետապնդում է Սահմանադրությամբ և ՀՀ միջազգային պայմանագրերով նախատեսված իրավաչափ նպատակ: Այլ կերպ ասած՝ մարդու իրավունքների և ազատությունների իրացմանը միջամտությունը պետք է իրականացվի օրենքին համապատասխան և պետք է հետապնդի Սահմանադրության համապատասխան հոդվածներում բովանդակվող իրավաչափ նպատակներից մեկը, հակառակ պարագայում նույնիսկ օրենքով սահմանափակման ամրագրումը, եթե չբխի Սահմանադրությամբ սահմանված իրավաչափ նպատակներից, կհակասի Սահմանադրությանը:

Ինչպես արդեն նշեցինք՝ Սահմանադրությունը սահմանում է իրավունքների և ազատությունների սահմանափակման կարգը և նպատակները: Սակայն հարկ է ընդգծել, որ, ի տարբերություն նախկին խմբագրությունների՝ 2015թ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրությունը, հաշվի առնելով յուրաքանչյուր հիմնական իրավունքի էությունը և դրա սահմանափակման առանձնահատկությունները՝ յուրաքանչյուր հիմնական իրավունքի ու ազատության բովանդակությունն ամրագրող սահմանադրական նորմում հստակ և սպառիչ սահմանել է դրանց սահմանափակման նպատակները: Այսպես՝ 2005թ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրությամբ սահմանափակման նպատակների կամ հիմքերի ամրագրման միասնական ձևաչափ չկար: Մասնավորապես՝ 2005թ.

<sup>12</sup> Տե՛ս Հեղինակային խումբ, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին 1950թ. նոյեմբերի 4-ի կոնվենցիայի և դրան կից արձանագրությունների մեկնաբանություն. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը, Եր., Տիգրան Մեծ, 2005, էջ 277:

խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածի 1-ին մասում սահմանափակման նպատակները կամ հիմքերը սահմանված էին ընդհանուր՝ սահմանափակման ենթակա բոլոր իրավունքների համար: Միևնույն ժամանակ՝ նշված հոդվածով թվարկված սահմանափակվող իրավունքներն սպառիչ չէին, բացառություն էր 2005թ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 26-րդ հոդվածով ամրագրված՝ մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքը, որի դեպքում սահմանափակման հիմքերը կամ նպատակները սահմանված էին նույն հոդվածի 2-րդ մասում:

2015թ. փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 2-րդ գլխի դրույթների վերլուծությունը թույլ է տալիս առանձնացնել սահմանափակման հետևյալ ընդհանուր հիմքերն ու նպատակները՝ պետական անվտանգության պաշտպանությունը, հանցագործությունների կանխումն ու բացահայտումը, հասարակական կարգի պաշտպանությունը, առողջության և բարոյականության պաշտպանությունը, երկրի տնտեսական բարեկեցության պաշտպանությունը, հանրային շահերի պաշտպանությունը, այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը, այլոց պատվի և բարի համբավի պաշտպանությունը, երեխայի կենսական շահերի ապահովումը:

Որպես հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման հիմք, կարծում ենք, կարելի է առանձնացնել նաև անձի կարգավիճակը (պաշտոն, տարիք, գործունակություն և այլն): Այսպես՝ կուսակցություն ստեղծելու և կուսակցությանն անդամագրվելու իրավունքը, ըստ Սահմանադրության 46-րդ հոդվածի 2-րդ մասի, սահմանափակված է դատավորների, քննիչների, դատախազների համար, ինչպես նաև, համապատասխանաբար՝ ըստ Սահմանադրության 193-րդ հոդվածի 3-րդ մասի, 195-րդ հոդվածի 5-րդ մասի, 197-րդ հոդվածի 5-րդ մասի, 199-րդ հոդվածի 5-րդ մասի, 201-րդ հոդվածի 4-րդ մասի՝ Մարդու իրավունքների պաշտպանի, Կենտրոնական ընտրական

հանձնաժողովի անդամի, Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի անդամի, Հաշվեքննիչ պալատի անդամի, Կենտրոնական բանկի խորհրդի անդամի համար: Միևնույն ժամանակ՝ Սահմանադրության 46-րդ հոդվածի 2-րդ մասը, ըստ անձանց կարգավիճակի, հնարավորություն է տալիս օրենքով սահմանափակելու կուսակցություն ստեղծելու և կուսակցությանը անդամագրվելու իրավունքը<sup>13</sup>: Նման կարգավորում սահմանված է նաև Սահմանադրության 44-րդ հոդվածի 3-րդ մասում՝ հնարավորություն տալով ըստ անձանց կարգավիճակի օրենքով սահմանափակելու հավաքների ազատության իրավունքը:

Սահմանադրության 48-րդ հոդվածի 4-րդ մասում ընտրելու և ընտրվելու, ինչպես նաև հանրաքվեներին մասնակցելու իրավունքը՝ անձանց կարգավիճակից ելնելով, սահմանափակված է դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչված, ինչպես նաև դիտավորությամբ կատարված ծանր հանցանքների<sup>14</sup> համար օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված և պատիժը կրող անձանց համար, իսկ ընտրվելու իրավունքը՝ նաև այլ հանցանքների համար օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված և պատիժը կրող անձանց համար:

գ) Սահմանափակումը պետք է լինի համաչափ: Համաչափության սկզբունքն ամրագրված է Սահմանադրության 78-րդ հոդվածում, որի համաձայն՝ հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը: Համաչափության սկզբունքը բաղկացած է երեք տարրից՝ 1) պիտանիություն, այսինքն՝ սահմանափակման համար ընտրված միջոցը պետք է, առավել նվազ ձևով միջամտելով անձի իրավունքին, հնարավորություն տա հասնե-

<sup>13</sup> Օրենքով կարող են սահմանվել զինված ուժերում, ազգային անվտանգության, ոստիկանության և այլ ռազմականացված մարմիններում ծառայողների կողմից կուսակցություն ստեղծելու և որևէ կուսակցության անդամագրվելու իրավունքի սահմանափակումներ:

<sup>14</sup> 2016թ. մայիսի 25-ին ընդունված «ՀՀ ընտրական օրենսգրք» սահմանադրական օրենքի 2-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ ծանր հանցանք եզրույթն ընդգրկում է ծանր և առանձնապես ծանր հանցանքները:

լու Սահմանադրությամբ սահմանված նպատակին, 2) անհրաժեշտություն, այսինքն՝ սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է գնահատվեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու հնարավորության և թույլատրելիության համատեքստում, 3) համարժեքություն, որը դրսևորվում է սահմանափակման համար ընտրված միջոցների և սահմանադրությամբ սահմանված նպատակների միջև հավասարակշռության ապահովմամբ:

դ) Սահմանափակումը պետք է անհրաժեշտ լինի ժողովրդավարական հասարակությունում, այսինքն՝ ցանկացած միջամտություն մարդու իրավունքներին պետք է համապատասխանի անհրաժեշտության չափանիշներին: «Անհրաժեշտ» հասկացության նշանակությանը ՄԻԵԴ-ը անդրադարձել է իր տարբեր որոշումներում: Այսպես՝ Դադջենն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով վճռում արձանագրել է հետևյալը. «Կոնվենցիայի 8-րդ հոդվածում, ինչպես նաև որոշ այլ հոդվածներում, «անհրաժեշտություն» հասկացությունը սերտորեն կապված է «ժողովրդավարական հասարակություն» հասկացության հետ: Դատարանի պրակտիկայի համաձայն՝ որպեսզի սահմանափակումը հանդուրժողական և բաց հասարակությունում համարվի անհրաժեշտ, այդ սահմանափակումը պետք է համահունչ լինի հետապնդվող իրավաչափ նպատակին»: Իր մեկ այլ՝ Օլսոնն ընդդեմ Շվեդիայի գործով վճռում, նշել է, որ «անհրաժեշտություն» հասկացությունը ենթադրում է, որ միջամտությունը համապատասխանում է որևէ կենսական հասարակական պահանջի և որ համարժեք է հետապնդվող իրավաչափ նպատակին: Այն հանգամանքը որոշելիս, թե արդյոք միջամտությունը «անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում», Կոնվենցիայի մասնակից պետություններն ունեն հայեցողության որոշակի ազատություն<sup>15</sup>:

ե) Իրավունքների և ազատությունների սահմանափակումները չեն կարող գերազանցել ՀՀ

միջազգային պայմանագրերով սահմանված սահմանափակումները, այսինքն՝ օրենքով սահմանված սահմանափակումները չեն կարող հակասել ՀՀ ստանձնած միջազգային պարտավորություններին:

Այսպիսով՝ Սահմանադրության 2-րդ գլխի դրույթների վերլուծությունը թույլ է տալիս առանձնացնել սահմանափակվող իրավունքները. ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունք (հոդ. 25), անձնական ազատության իրավունք (հոդ. 27), մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունք (հոդ. 31), բնակարանի անձեռնմխելիության իրավունք (հոդ. 32), հաղորդակցության ազատության և գաղտնիության իրավունք (հոդ. 33), անձնական տվյալների պաշտպանության իրավունքի բովանդակություն կազմող անձնական տվյալներին ծանոթանալու իրավունք (հոդ. 34-րդ 4-րդ մաս), ամուսնանալու ազատություն (հոդ. 35), ծնողական իրավունքներ (հոդ. 36), մարդու ազատ գործելու իրավունք (հոդ. 39)<sup>16</sup>, ազատ տեղաշարժվելու իրավունք՝ բացառությամբ ՀՀ քաղաքացու ՀՀ մուտք գործելու իրավունքի (հոդ. 40), մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքի բովանդակություն կազմող մտքի, խղճի և կրոնի արտահայտման իրավունք (հոդ. 41-րդ 2-րդ մաս), կարծիքի արտահայտման ազատություն (հոդ. 42), հավաքների ազատություն (հոդ. 44), միավորումների ազատություն (հոդ. 45), կուսակցություններ ստեղծելու և կուսակցությանն անդամակցվելու իրավունք (ըստ անձանց կարգավիճակի (հոդ. 46-րդ 2-րդ մաս), քաղաքացիության ձեռքբերման և քաղաքացիությունը փոխելու իրավունք (հոդ. 47-րդ 7-րդ մաս), ընտրական իրավունք և հանրաքվեին մասնակցելու իրավունք (ըստ անձանց կարգավիճակի) (հոդ. 48), տեղեկություններ ստանալու իրավունք (հոդ. 51), գործադույի իրավունք (հոդ. 58), տնտեսական գործունեության իրավունքի բովանդակությունը կազմող մրցակցության իրավունք (հոդ. 59-րդ 2-րդ մաս), սեփականության իրավունք (հոդ. 60):

<sup>15</sup> Տե՛ս Հեղինակային խումբ, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին 1950թ. նոյեմբերի 4-ի կոնվենցիայի և դրան կից արձանագրությունների մեկնաբանություն. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը, Եր., Տիգրան Մեծ, 2005, էջ 278-279:

<sup>16</sup> Չնայած սահմանադիրն այս իրավունքի սահմանափակման նպատակները չի սահմանել նույն հոդվածում, սակայն ազատ գործելու իրավունքը «սահմանափակել է» այլոց իրավունքները չխախտելու, Սահմանադրությամբ և օրենքներին չհակասելու պայմանով:

2. **Ժամանակավորապես սահմանափակվող են այն հիմնական իրավունքներն ու ազատությունները, որոնք ենթակա են ժամանակավորապես կասեցման կամ լրացուցիչ սահմանափակման այնքանով, որքանով դա պահանջում է կոնկրետ իրավիճակը (սահմանումը՝ ըստ Թ.Շ):** Սահմանադրության 76-րդ հոդվածի համաձայն՝ այդ իրավիճակը ռազմական կամ արտակարգ դրությունն է: Նշված հոդվածում կիրառվում է «**ժամականավորապես կասեցում**» և «**լրացուցիչ սահմանափակում**» (ընդգծումը՝ Թ.Շ) երկու եզրույթ, որոնց իմաստը, կարծում ենք, բացահայտվում է սահմանադրական դրույթների վերլուծությամբ: Մասնավորապես՝ Սահմանադրության 76-րդ հոդվածում սահմանված են այն հիմնարար իրավունքները և ազատությունները, որոնք ենթակա չեն սահմանափակման արտակարգ կամ ռազմական դրության ժամանակ: Վերը թվարկված սահմանափակվող հիմնարար իրավունքները և ազատությունները, եթե Սահմանադրության 76-րդ հոդվածով որպես բացառություն սահմանված չեն, ապա կարող են լրացուցիչ սահմանափակվել: Այս դեպքում կիրառելի է նշված եզրույթը, քանի որ արդեն իսկ սահմանադիրը համապատասխան իրավունքը կամ ազատությունը սահմանող հոդվածով տվել է սահմանափակման հնարավորություն: Հետևաբար՝ սահմանափակվող հիմնարար իրավունքը և ազատությունը արտակարգ կամ ռազմական դրության ժամանակ կարող է լրացուցիչ սահմանափակվել՝ բացառությամբ ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքի, ամուսնանալու ազատության, ծնողական իրավունքների, մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքի: Իսկ չսահմանափակվող հիմնարար իրավունքը և ազատությունը արտակարգ կամ ռազմական դրության ժամանակ կարող է ժամանակավորապես կասեցվել: Այդպիսի չսահմանափակվող հիմնարար իրավունքներն ու ազատություններն են՝ պատվի և բարի համբավի անձեռնմխելիության ի-

րավունքը (հոդ. 31-րդ 1-ին մաս), անձնական տվյալների պաշտպանության իրավունքը (հոդ. 34-րդ 1-ին մաս), անվճար կրթություն ստանալու և բարձրագույն ուսումնական հաստատությունների ինքնակառավարման իրավունքը (հոդ. 38-րդ 2-3-րդ մասեր), ՀՀ քաղաքացու ՀՀ մուտք գործելու իրավունքը (հոդ. 40-րդ 4-րդ մաս), ստեղծագործության ազատությունը (հոդ. 43), հանրային ծառայության անցնելու իրավունքը (հոդ. 49), պատշաճ վարչարարության իրավունքը (հոդ. 50), հանրագիր ներկայացնելու իրավունքը (հոդ. 53), քաղաքական ապաստանի իրավունքը (հոդ. 54), արտաքսման և հանձնման արգելքը՝ բացառությամբ ՀՀ քաղաքացուն չհանձնելու դրույթի (հոդ. 55-րդ 1-ին մաս), աշխատանքի ընտրության ազատությունը (հոդ. 57), տնտեսական գործունեությամբ զբաղվելու իրավունքը (հոդ. 59-րդ 1-ին մաս), վնասի հատուցման իրավունքը (հոդ. 62):

Ժամանակավոր սահմանափակմանը բնորոշ են հետևյալ իրավական չափանիշները՝

- ա) սահմանափակումն ունի ժամանակավոր բնույթ,
- բ) սահմանափակվում է միայն ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ,
- գ) սահմանափակման կարգը սահմանվում է օրենքով: «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենքով<sup>17</sup> և «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենքով<sup>18</sup> սահմանվում են համապատասխանաբար արտակարգ և ռազմական դրության պայմաններում իրականացվող միջոցառումները և ժամանակավոր սահմանափակումներն ու դրանց սահմանները: Սահմանափակման ձևը գործադիր իշխանության մարմնի որոշումն է<sup>19</sup>, որով սահմանվում են ֆիզիկական և իրավաբանական անձանց ժամանակավոր սահմանափակվող իրավունքներն ու ազատությունները, ինչպես նաև իրավունքների և ազատությունների սահմանափակումների ծավալը՝ օրենքով սահմանված շրջանակներում,

● ՕՐԻՆԱԿԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ № 107 2018

<sup>17</sup> Տե՛ս Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին ՀՀ օրենք (21 մարտի 2012թ. ՀՕ-106-Ն):  
<sup>18</sup> Տե՛ս Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին ՀՀ օրենք (5 դեկտեմբերի 2006թ. ՀՕ-258-Ն):  
<sup>19</sup> Ռազմական և արտակարգ դրություն հայտարարում է ՀՀ կառավարությունը: Երկու դեպքում էլ իրավունքի ուժով անհապաղ գումարվում է ՀՀ ԱԺ հատուկ նիստ: ԱԺ կարող է պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ վերացնել ռազմական կամ արտակարգ դրությունը կամ չեղյալ հայտարարել դրանց իրավական ռեժիմով նախատեսված միջոցառումների իրականացումը:

դ) սահմանափակվում է ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ պարտավորություններից շեղվելու վերաբերյալ ստանձնած միջազգային պարտավորությունների շրջանակներում: Վերջինս նշանակում է, որ սահմանափակումները չեն կարող լինել ավելի լայն, քան ՀՀ միջազգային պայմանագրերով նախատեսված սահմանափակումները, ուստի միջազգային պարտավորությունները գերազանցելու միջոցով շեղումները հիմք են մարդու իրավունքների ու ազատությունների միջազգային մարմիններին դիմելու համար:

Այսպես՝ Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 4-րդ հոդվածում ամրագրված է. «Արտակարգ դրության ժամանակ, որի դեպքում վտանգված է ժողովրդի կյանքը, և որը հայտարարված է պաշտոնապես, սույն դաշնագրի մասնակից պետությունները կարող են միջոցներ ձեռնարկել ի շեղումն սույն դաշնագրով ստանձնած իրենց պարտավորություններից միայն այնքանով, որքանով դա պահանջում է իրավիճակի լրջությունը, պայմանով, որ այդ միջոցներն անհամատեղելի չեն միջազգային իրավունքի համաձայն իրենց մյուս պարտավորությունների հետ և խտրականություն չեն բացառապես ռասայի, մաշկի գույնի, սեռի, լեզվի, կրոնի կամ սոցիալական ծագման հիմքով»: Մասնակից պետությունները չեն կարող շեղվել կյանքի իրավունքը, խոշտանգումներից, դաժան, անմարդկային և նվաստացնող վերաբերմունքից կամ պատժից ազատ լինելու, ստրկությունից ազատ լինելու, մտքի, խղճի և կրոնի ազատության, անձի իրավասությունների ճանաչման իրավունքները, պայմանագրային պարտավորությունները չկատարելու հիմքով ազատությունից զրկվելու արգելքը, հանցագործություններ սահմանելիս և պատիժներ նշանակելիս օրինականության սկզբունքը, արարքի պատժելիությունը վերացնող կամ պատիժը մեղմացնող օրենքի հետադարձ ուժը ամրագրող Դաշնագրի համապատասխան հոդվածներից: Դաշնագրի 2-րդ կամընտիր արձանագրության 6-րդ հոդվածի համաձայն՝ չի թույլատրվում շեղվել նաև մահապատիժն արգելող դրույթից, ընդ որում՝ ոչ միայն արտակարգ դրության, այլ նաև խաղաղ պայմաններում:

Ստանձնած միջազգային պարտավորություններից շեղվելու իրավունքների համեմատաբար առավել նեղ շրջանակ է սահմանում Կոնվենցիան, որի 15-րդ հոդվածն արգելում է շեղվել կյանքի իրավունքից, խոշտանգումների և ստրկության արգելքներից, չկա հանցագործություն առանց օրենքի կամ միջազգային իրավունքի (*crimen sine lege*) սկզբունքից: Հարկ է ընդգծել նաև, որ պետության կողմից միջազգային պարտավորություններից շեղումը չի կարող հակասել նաև միջազգային մարդասիրական նորմերով ստանձնած պարտավորություններին (1949թ. Ժնևյան կոնվենցիաներին և դրան կից լրացուցիչ արձանագրություններին):

ե) ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ սահմանափակում կիրառելու համար յուրաքանչյուր անձի վերաբերյալ անհատական իրավական ակտեր չեն ընդունվում (օրինակ՝ քաղաքացիների անձնական առարկաների, բնակարանի և տրանսպորտային միջոցների զննության իրականացման դեպքում տվյալ քաղաքացու վերաբերյալ առանձին անհատական ակտ չի ընդունվում):

3. Չսահմանափակվող են համարվում այն իրավունքները, որոնց սահմանափակման հնարավորությունը սահմանված չէ Սահմանադրությամբ՝ իրավունքի բովանդակությունը սահմանող հոդվածով, ինչպես նաև այդ իրավունքները ենթակա չեն ժամանակավորապես կասեցման ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ: Սահմանադրության 2-րդ գլխի դրույթների վերլուծությունից բխում է, որ չսահմանափակվող են համարվում՝ արժանապատվության իրավունքը (հոդ. 23), կյանքի իրավունքը (հոդ. 24), խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի չենթարկվելու իրավունքը (հոդ. 26), օրենքի առջև հավասարության (հոդ. 28), խտրականության արգելքի (հոդ. 29), կանանց և տղամարդկանց իրավահավասարության (հոդ. 30), երեխայի իրավունքները (հոդ. 37), կրթության իրավունքը (հոդ. 38-րդ 1-ին մաս), ՀՀ քաղաքացիների ՀՀ քաղաքացիության և քաղաքացիությունից չզրկվելու իրավունքը, ինչպես նաև ՀՀ պաշտպանության ներքո գտնվելու իրավունքը (հոդ. 47-րդ 1-ին մաս և 5-րդ մաս առաջին նախադասություն, 8-րդ մաս), Մարդու իրավունքների պաշտպանին դիմելու իրավունք:

քը (հոդ. 52), ՀՀ քաղաքացուն չհանձնելու արգելքը (հոդ. 55-րդ 2-րդ մաս), ազգային և էթնիկ ինքնությունը պահպանելու իրավունքը (հոդ. 56), դատական պաշտպանության իրավունքը և մարդու իրավունքների պաշտպանության միջազգային մարմիններ դիմելու իրավունքը (հոդ. 61), արդար դատաքննության իրավունքը (հոդ. 63), իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը (հոդ. 64), ցուցմունք տալու պարտականությունից ազատվելու իրավունքը (հոդ. 65), անմեղության կանխավարկածը (հոդ. 66), մեղադրանքից պաշտպանվելու իրավունքը (հոդ. 67), կրկին դատվելու արգելքը (հոդ. 68), դատապարտվածի բողոքարկման իրավունքը (հոդ. 69), ներման խնդրանքի իրավունքը (հոդ. 70), մեղքի սկզբունքը և պատժի համաչափության սկզբունքը (հոդ. 71), հանցագործություններ սահմանելիս և պատիժներ նշանակելիս օրինականության սկզբունքը (հոդ. 72):

Այսպիսով՝ հարկ ենք համարում նշել, որ

բարեփոխված Սահմանադրությունը բավարար չափով հստակեցրել է իրավունքների սահմանափակումներին ներկայացվող պահանջները, հաշվի է առել յուրաքանչյուր հիմնական իրավունքի սահմանափակման առանձնահատկությունները, ինչն էլ երաշխիք է հիմնական իրավունքների իրացման ու պաշտպանության տեսանկյունից: Իրավական որոշակիության սկզբունքը, սահմանադրական ամրագրման շնորհիվ՝ օրենսդրության սահմանադրականության որոշման չափանիշ է: Այս համատեքստում օրենսդրի պարտականությունն է իրավունքի սահմանափակման նորմերի իրավական որոշակիության սկզբունքի ապահովումը, մասնավորապես՝ չբավարարվելով օրենքով՝ զուտ Սահմանադրությամբ սահմանված նպատակների ամրագրմամբ, այլ՝ այդ նպատակներին համապատասխան ամրագրել սահմանափակման հստակ հիմքերն ու կարգը:



**ԼԻԼԻԹ ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ**

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ասպիրանտ

**ՏԵՂԱԿԱՆ ՀԱՆՐԱՔՎԵԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԵՎ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ  
ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԷՎՈԼՅՈՒՑԻՎԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐՐՈՐԴ  
ՀԱՆՐԱԴԵՏՈՒԹՅՈՒՆՈՄ**

Տեղական (տարածքային) հանրաքվեն կարևոր սոցիալ-քաղաքական նշանակություն ունի անմիջական ժողովրդահիշխանության կառուցակարգում: Կայացած ժողովրդավարության որոշ երկրներում, որտեղ տարածված է հանրաքվեի ինստիտուտի լայն կիրառումը, նկատվում է հատկապես տեղական հանրաքվեների անցկացման դեպքերի աճի միտում: Այդպիսի երկրի օրինակ է ԱՄՆ-ը, որտեղ համապետական հանրաքվեն երբևիցե չկիրառված ինստիտուտ է, սակայն դաշնության սուբյեկտների, այլ վարչատարածքային միավորների մակարդակում լայնորեն կիրառվող ժողովրդահիշխանության անմիջական ձև է: Հանրաքվեի ինստիտուտի հետազոտողների կարծիքով՝ արդի աշխարհի նույնիսկ ժողովրդավարական երկրներում ավելի շատ տարածված են տեղական հանրաքվեները, քան համապետական: Դա բացատրվում է այն հանգամանքով, որ այդպես լուծվող հարցերը շատ ավելի մոտ և հոգեհարազատ են ընտրողներին, քան համապետականները, որոնք, որպես կանոն, պահանջում են արհեստավարժություն և հատուկ տեղեկության հասանելիություն: Հենց այդ պատճառով են բացատրվում համազգային հանրաքվեի ամրագրման փորձերի ձախողումները ԱՄՆ-ում<sup>1</sup>: ՀՀ-ի գոյության առաջին կեսին գործում էր հակառակ օրինաչափությունը: Օրենսդրությամբ, այնուհետև 1995 թ. Սահմանադրությամբ ճանաչվում և կարգավորվում էր առաջին հերթին համազգային հանրաքվեն, իսկ տեղական հանրաքվեն, որպես ժողովրդահիշխանության անմիջական ձև, անտեսված էր: Միայն հանրապետության գոյության երկրորդ շրջանում՝ սկզբում օրենսդրական, իսկ այնու-

հետև սահմանադրական կարգավորման մակարդակներում իրավաբանորեն ամրագրվեց, կարգավորվեց տեղական հանրաքվեի իրավական ինստիտուտը:

Այս առնչությամբ առաջ է գալիս հետազոտական խնդիր՝ պարզելու տեղական հանրաքվեի իրավական ինստիտուտի կայացման առանձնահատկությունները ՀՀ-ում, տեղական հանրաքվեի բովանդակային մաս կազմող էական չափանիշների վիճակն այդ ինստիտուտի իրավական ամրագրման ու կայացման ամեն մի փուլում և, վերջապես՝ դրա արդի վիճակը, չափանիշների որակական ցուցանիշները: Այս խնդրի լուծման համար փորձենք վեր հանել և վերլուծել տեղական հանրաքվեի՝ որպես ինստիտուտի իրավական ամրագրման ու փոփոխությունների քաղաքականությունը, հետևյալ հերթականությամբ՝ «Տեղական հանրաքվեի մասին» 2002 թ. օրենքի ընդունումը, դրա արդյունավետության և ժողովրդավարության հիմնական իրավական չափանիշների բնութագիրը, տեղական հանրաքվեի սահմանադրական (2005 և 2015 թթ.) և դրանց հետևող ընթացիկ օրենսդրական բարեփոխումները:

Մինչև 2005 թ. սահմանադրական բարեփոխումները՝ հանրաքվեի իրավական ինստիտուտում կատարված առաջին էական փոփոխությունը համապետական հանրաքվեի ինստիտուտի վերանայումն էր՝ 2001 թ. «Հանրաքվեի մասին» օրենքի ընդունմամբ, իսկ երկրորդը՝ տեղական մակարդակով հանրաքվեի օրենսդրական կարգավորումը, ինչը կատարվեց 2002 թ. փետրվարի 6-ին ընդունված «Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենքի ըն-

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 107 2018

<sup>1</sup> Տիս Руденко В., Конституционные модели референдума в странах Европейского союза, Швейцарии и России // Конституционное право. Восточноевропейское обозрение. М., 2003, ном. 1, с. 10.

դունմամբ<sup>2</sup>: Չխորանալով այդ օրենքի բովանդակության մանրամասների մեջ՝ փորձենք օրենքն արժևորել հանրաքվեի արդյունավետության իրավական հիմնական չափանիշների տեսանկյունից՝ դրան քաղաքական-իրավական գնահատական տալու համար: Հանրաքվեի տեսության ամփոփման հիման վրա առաջ ենք քաշում դրա բովանդակային կողմը կազմող իրավական այնպիսի չափանիշների շրջանակ, ինչպիսիք են՝ ա) հանրաքվեի անցկացման մակարդակները, բ) հանրաքվեի անցկացման պարտադիրությունը, գ) հանրաքվեի անցկացման առարկան, դ) հանրաքվեի արդյունքների իրավական նշանակությունը, ե) հանրաքվե նախաձեռնող սուբյեկտների շրջանակը<sup>3</sup>, զ) հանրաքվեի ինստիտուտի իրավական կարգավորման նորմատիվ աղբյուրը, է) հանրաքվեի քվորումի և որոշման ընդունման անհրաժեշտ ձայների քանակը<sup>4</sup>:

Հայաստանի Հանրապետության պայմաններում, բացի այս չափանիշներից, առանձնահատուկ նշանակություն է ձեռք բերում նաև տեղական հանրաքվեին մասնակցության իրավունք ունեցող անձանց շրջանակի հիմնախնդիրը: Այդ խնդիրն առաջ եկավ 1990-ական թթ., երբ ՀՀ տարածքում հայտնվեցին Ադրբեջանից և Արցախից գաղթած փախստականները, ովքեր, բնակվելով այստեղ՝ ձեռք չբերեցին ՀՀ քաղաքացիություն և մինչ այժմ մնում են որպես փախստականի կարգավիճակ ունեցող անձինք: Այսպիսով՝ տեղական հանրաքվեի բնութագրի համար, բացի վերը թվարկվածներից, էական նշանակություն ունի նաև այն հար-

ցը, թե ովքեր են մասնակցում հանրաքվեին՝ միայն իրավագոր քաղաքացիները, թե այդպիսին համարվող բոլոր բնակիչները:

«Հանրաքվեի մասին» ՀՀ 1991 թ. օրենքը գրեթե տեսականորեն ամրագրում էր տեղական հանրաքվեն՝ որպես հանրաքվեի տարատեսակ՝ առանց անցկացման կարգի սահմանման: «Հանրաքվեի մասին» 2001 թ. օրենքը կարգավորեց միայն համապետական հանրաքվեի անցկացման հարաբերությունները՝ դուրս մղելով տեղական հանրաքվեի տեսական օրենսդրական ճանաչումը. օրենքի 1-ին հոդվածը սահմանում էր, որ հանրաքվեն անցկացվում է Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում: Այդ օրենքում չկար հանրաքվեների դասակարգում ըստ մակարդակի (վայրի), հետևաբար՝ տեղական հանրաքվեի օրենսդրական կարգավորում: Միայն 2002 թ. «Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենքի ընդունմամբ ժողովրդաիշխանության կենսագործման կառուցակարգում ի հայտ եկավ տեղական հանրաքվեն, և դրանով իսկ հանրաքվեի իրավական ինստիտուտի կառուցվածքում տեղ գտան դրա երկու մակարդակը՝ համապետական և տեղական<sup>5</sup>:

**Տեղական հանրաքվեները ևս ունեն իրենց մակարդակները՝ ըստ վարչատարածքային միավորների:** Տեղական հանրաքվեներն անցկացվում են վարչատարածքային միավորների (դաշնային պետություններում՝ դաշնության սուբյեկտի), ինչպես նաև, այսպես կոչված, միջտարածաշրջանային մակարդակներով<sup>6</sup>: Վերջինը մի քանի վարչատարած-

<sup>2</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժողովածու, 2002 թ., գիրք Ե, «Պաշտոնական տեղեկագիր» ՓԲԸ, Երևան, 2002, էջ 94-113:

<sup>3</sup> Հանրաքվեի իրավական ինստիտուտին նվիրված գրականության մեջ հետաքրքիր է Գ.Վ. Սինցովի մոտեցումը, ում կարծիքով՝ օրենսդրությամբ նախատեսված հանրաքվեի յուրաքանչյուր ընթացակարգ կարող է գնահատվել միայն դրա կոնկրետ հատկանիշների յուրահատուկ հավաքածուի պարզորոշումից հետո: Որպես այդպիսին՝ նա առանձնացնում է վերը նշված չափանիշներից առաջին հինգը (տե՛ս Синцов Г.В. Современные конституционно-правовые модели института референдума в зарубежных странах: дисс... док. юрид. наук. М., 2009, էջ 14, 72-85):

<sup>4</sup> Լիովին կարելի է համաձայնել Գ.Վ. Սինցովի նման մոտեցման հետ՝ հաշվի առնելով մեր երկրի պետաիրավական համակարգի ձևավորման ու զարգացման պատմական առանձնահատկությունները, քաղաքական-օրենսդրական գործոնները, մենք ավելացնում ենք ևս երկու չափանիշ՝ հանրաքվեի ինստիտուտի իրավական կարգավորման նորմատիվ աղբյուրը (սահմանադրություն, թե օրենք), հանրաքվեի քվորումի և որոշման ընդունման անհրաժեշտ ձայների քանակը:

<sup>5</sup> Ըստ անցկացման մակարդակի հանրաքվեների համապետական (ազգային) և տեղական (լոկալ) տեսակների մասին տե՛ս Синцов Г.В. Современные конституционно-правовые модели института референдума в зарубежных странах: дисс... док. юрид. наук. М., 2009, էջ 74; Комарова В.В. Референдум в системе народовластия в Российской Федерации: дисс... канд. юрид. наук. М., 1995, էջ 81-82:

<sup>6</sup> Տե՛ս Руденко В., Конституционные модели референдума в странах Европейского союза, Швейцарии и России // Конституционное право. Восточноевропейское обозрение. М., 2003, ном. 1, с. 10).



քային միավորումներում անցկացվող հանրաքվեն է:

«Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ 2002 թ. օրենքի 1-ին հոդվածը տեղական հանրաքվեն բնորոշում էր որպես «տվյալ համայնքում ՀՀ քաղաքացիների համայնքային նշանակության կարևոր հարցերով քվեարկություն»<sup>7</sup>: Դրանով իսկ տեղական (ըստ տարածքի, վայրի անցկացման) բոլոր հնարավոր տարբերակներից, օրինակ՝ մարզային, միջհամայնքային, օրենքը ճանաչում էր միայն համայնքային հանրաքվեն: Նման կարգավորումը ՀՀ տարածքային կառուցվածքի տեսանկյունից գուցե ընդունելի էր, սակայն լրիվ տարօրինակ՝ Երևան քաղաքի պայմաններում, քանի որ, 1995 թ. խմբագրությամբ Սահմանադրության 108 հոդ. համաձայն՝ Երևան քաղաքը, որպես վարչատարածքային միավոր, ուներ մարզի, այլ ոչ թե՛ համայնքի կարգավիճակ: Օրենքի տառացի իմաստից բխում էր, որ Երևան քաղաքի մակարդակով հանրաքվե անցկացնելն անհնարին էր: Երևանում հնարավոր էր միայն թաղային առանձին համայնքների հանրաքվեն:

Այսպիսով՝ «Տեղական հանրաքվեի մասին» 2002 թ. օրենքի նշանակությունն այն էր, որ ժողովրդաիշխանության իրականացման կառուցակարգում ներմուծում էր տեղական հանրաքվեի իրավական ինստիտուտը, սակայն սահմանափակ գործողությամբ: Այդպիսի հանրաքվեն հնարավոր էր անցկացնել միայն համայնքներ կոչված վարչական միավորումներում՝ բացառելով մարզային, միջհամայնքային հանրաքվեների անցկացումը, ինչպես նաև հանրաքվեն Երևան քաղաքի ողջ մակարդակով:

**Անցկացման եղանակը, այսինքն՝ պարտադիրությունն** ինչպես համապետական, այնպես էլ տեղական հանրաքվեների՝ որպես անմիջական ժողովրդաիշխանության ձևերի արդյունավետության կարևոր իրավական չափանիշ է<sup>8</sup>: Այս չափանիշով հանրաքվեները լինում են պարտադիր և լրացուցիչ (ֆակուլտատիվ)<sup>9</sup>:

Պարտադիրներն անցկացվում են օրենքով հատուկ նախատեսված դեպքերում, հստակ որոշված հարցերի շրջանակով, որոնք չեն կարող լուծվել այլ կերպ, բացի հանրաքվեով: Այս դեպքում հարցի լուծման իրավունքը պատկանում է միայն քվեարկողների զանգվածին, իսկ ներկայացուցչական և այլ մարմիններն այդ գործընթացում կատարում են միայն նախապատրաստող, առաջարկող դեր: Տեղական լրացուցիչ հանրաքվեի միջոցով քվեարկվող հարցի լուծման կարգում առկա է երկրնտրանք: Հարցը կարող է լուծվել նաև հանրային մարմինների միջոցով, սակայն, իրադրությունից կախված՝ դրվում է տեղական հանրաքվեի՝ դա նախաձեռնելու իրավունք ունեցող սուբյեկտի որոշմամբ: Եթե տեղական հանրաքվեի իրավական կարգավորումը նախատեսում է միայն լրացուցիչ հանրաքվե, որի նախաձեռնության իրավունք ունեն միայն հանրային իշխանության մարմինները, այսինքն՝ քաղաքացիները կամ դրանց խմբերը բացառված են հանրաքվե նախաձեռնելու սուբյեկտների շրջանակից, ուրեմն՝ հանրաքվեի ինստիտուտն անարդյունավետ է, չի կարող համարվել ժողովրդաիշխանության գործուն միջոց, կատարել իր ժողովրդավարական առաքելությունը: Այս պարագայում հանրաքվեն վերածվում է հանրային-իշխանական տեղական կառավարմանը լրացնող այլընտրանքային ձևի: Ուրեմն՝ արդյունավետ կարող է լինել տեղական հանրաքվեի այն մոդելը, որը նախատեսում է ոչ միայն լրացուցիչ, այլ նաև որոշակի հարցերով պարտադիր հանրաքվեների անցկացումը:

«Տեղական հանրաքվեի մասին» 2002 թ. օրենքն ըստ անցկացման պարտադիրության սահմանում էր միայն լրացուցիչ (ֆակուլտատիվ) տեղական-համայնքային հանրաքվեի ինստիտուտը: Օրենքը չէր նախատեսում որևէ կոնկրետ հարց, որով հանրաքվեի անցկացումը պարտադիր էր, այսինքն՝ առանց հանրաքվեի հարցի լուծումն օրենքի տեսանկյունից հնարավոր չէր: «Տեղական հանրաքվեի մա-

<sup>7</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժողովածու, 2002 թ., գիրք Ե, «Պաշտոնական տեղեկագիր» ՓԲԸ, Երևան, 2002, էջ 94:

<sup>8</sup> Տե՛ս Синцов Г.В. Современные конституционно-правовые модели института референдума в зарубежных странах: дисс... док. юрид. наук. М., 2009, էջ 76:

<sup>9</sup> Տե՛ս Комарова В.В. Референдум в системе народовластия в Российской Федерации: дисс... канд. юрид. наук. М., 1995, էջ 69:

սին» 2002 թ. օրենքի բնորոշմամբ. «Տեղական հանրաքվեի կարող են դրվել Սահմանադրությամբ և օրենքով տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությանը վերապահված, ինչպես նաև օրենքով նախատեսված հարցերը»<sup>10</sup>: Այսպիսի կարգավորման պայմաններում համայնքային հանրաքվեն վերածվում էր հանրային-իշխանական մարմինների կառավարման հնարավոր այլընտրանքի, այդ կառավարումը լրացնող հարցի լուծման եղանակի, որը կարող էր անցկացվել միայն նախաձեռնող սուբյեկտների դրական հայեցողության, ցանկության դեպքում:

Բոլոր տեսակի հանրաքվեները, **ըստ անցկացման առարկայի**, բաժանվում են իրավաստեղծ և այլ հարցեր լուծող տեսակների<sup>11</sup>: Այլ հարցերով հանրաքվեները տեսաբանները բաժանում են պլեբիսցիտային, միջազգային-իրավական, վարչաիրավական տեսակների: Դրանցից տեղական մակարդակով կարող են անցկացվել պլեբիսցիտայինի մեկ տարատեսակ՝ տեղական պաշտոնատար անձին կամ հանրային մարմնին անվստահություն հայտնելու հարցերով, ինչպես նաև վարչաիրավական հանրաքվեներ, որոնցով լուծվում են կառավարչական բնույթի հարցեր՝ ներառյալ վարչական-տարածքային բաժանման կամ վարչական միավորների սահմանների փոփոխության, պաշտոնատար անձանց լիազորությունների դադարեցման, տեղական հարկերի և տուրքերի հարցերը: Հանդիպում են նաև տեղական օրենսդիր և տեղական ներկայացուցչական մարմինների լիազորությունների դադարեցման հանրաքվեներ:

Տեղական իրավաստեղծ հանրաքվեներն անցկացվում են տեղական ինչ-որ նորմատիվ իրավական ակտի ընդունման համար: Համապետական հանրաքվեների օրինակով<sup>12</sup> տեղական իրավաստեղծ հանրաքվեները տեսա-

կանորեն կարող են լինել մերժող (լրիվ կամ մասնակիորեն վերացվում է տեղական ակտը) կամ հաստատող (վավերացվում է տեղական ակտը):

«Տեղական հանրաքվեի մասին» 2002 թ. Օրենքի համաձայն՝ ըստ տեղական հանրաքվեի առարկայի և քվեարկության դրվող հարցերի շրջանակի հնարավոր էր անցկացնել ինչպես իրավաստեղծ, այնպես էլ այլ բնույթի հարցեր լուծող հանրաքվեներ: Օրենքի ընդհանուր բնորոշումը հանրաքվեի առարկայի շրջանակի մեջ էր մտցնում «Սահմանադրությամբ և օրենքով տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությանը վերապահված, ինչպես նաև օրենքով նախատեսված հարցերը» (հոդված 5, 1-ին մաս): Այս ընդհանուր առարկայից, նույն հոդվածի 2-րդ մասն անում է բացառություններ՝ սահմանելով հարցերի շրջանակ, որոնք չեն կարող դրվել տեղական-համայնքային հանրաքվեի, ինչպես նաև տեղական հանրաքվեի անցկացումը բացառող հանգամանքները: Քննարկվող օրենքի համաձայն՝ տեղական հանրաքվեի չեն կարող դրվել.

ա) Սահմանադրությամբ կամ օրենքով տեղական ինքնակառավարման մարմինների բացառիկ իրավասությանն ուղղակիորեն վերապահված հարցերը,

բ) մարդու և քաղաքացու իրավունքներին, ազատություններին ու պարտականություններին, դրանց իրականացումն ապահովող սահմանադրական երաշխիքների վերացմանը կամ սահմանափակմանը վերաբերող հարցերը,

գ) պետական մարմինների կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրված լիազորություններին առնչվող հարցերը,

դ) համայնքի ղեկավարի աշխատակազմի ձևավորմանը վերաբերող հարցերը,

<sup>10</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժողովածու, 2002 թ., գիրք Ե, «Պաշտոնական տեղեկագիր» ՓԲԸ, Երևան, 2002, էջ 94-95, հոդված 5:

<sup>11</sup> Իրավաստեղծ համապետական հանրաքվեներն իրենց հերթին բաժանվում են սահմանադրականի և օրենսդրականի: Վ.Վ. Կոմարովան ըստ անցկացման առարկայի հանրաքվեների դասակարգման չափանիշ է համարում «բովանդակությունը» և այդ հիմքով առանձնացնում է սահմանադրական, օրենսդրական, միջազգային-իրավական, վարչական-իրավական հանրաքվեները, որոնք տարբերվում են նախաձեռնող սուբյեկտների շրջանակով, անցկացման ընթացակարգով (տե՛ս Комарова В.В. Референдум в системе народовластия в Российской Федерации: дисс... канд. юрид. наук. М., 1995, էջ 72):

<sup>12</sup> Տե՛ս Синцов Г.В., Современные конституционно-правовые модели института референдума в зарубежных странах: дисс... док. юрид. наук. М., 2009, էջ 48:

ե) համայնքի բյուջեի ընդունման կամ փոփոխման, ինչպես նաև համայնքի ֆինանսական պարտավորությունների կատարման կամ փոփոխման մասին հարցերը,

զ) համայնքի սեփականության օտարման մասին հարցերը,

է) բնակչության առողջությունն ու անվտանգությունն ապահովող արտակարգ և շտապ միջոցառումներ ձեռնարկելու մասին հարցերը,

ը) պատմության, մշակույթի, բնության հուշարձաններին և արգելանոցներին վնաս հասցնող հարցերը<sup>13</sup>:

Տեղական հանրաքվեի անցկացումը բացառող հանգամանքներ են համարվում արտակարգ և ռազմական դրությունը, դրանց վերացվելուց հետո՝ երկամսյա ժամկետը: Մինչույն հարցի կամ մինչույն բովանդակությունն ունեցող հարցի վերաբերյալ տեղական կրկնակի հանրաքվե կարող է անցկացվել ոչ շուտ, քան երկու տարի հետո՝ առաջին հանրաքվեի արդյունքների պաշտոնական հրապարակման օրվանից հաշված: «Տեղական հանրաքվեի մասին» 2002 թ. օրենքը տեղական հանրաքվեն բացառող հանգամանք էր համարում համայնքի ավագանու որոշումը՝ տեղական հանրաքվեի անցկացումը մերժելու մասին: Նման լուծումը, մեր կարծիքով, արդյունավետ չէր: Որպեսզի հիմնավորենք այս տեսակետը, փորձենք վերլուծել այդ բացառող հանգամանքի վերաբերյալ նշված օրենքի իրավակարգավորումները:

«Տեղական հանրաքվեի մասին» 2002 թ. օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ տեղական հանրաքվեի դրվելու ենթակա հարցի վերաբերյալ համայնքի ավագանու կամ ղեկավարի ընդունած որոշումը չի կարող այդ հարցով տեղական հանրաքվե անցկացնելու համար բացառող հանգամանք լինել: Նման լուծումը լիովին ժողովրդավարական ու արդյունավետ օրենսդրական լուծում է, որը համայնքի քաղաքացիների կամքի արտահայտման ձևը գերադասում էր համայնքի կառավարման մարմնի ընդունած որոշումից, սա-

կայն օրենսդրական այսպիսի ընդհանուր լուծումից արված էր բացառություն, որը հանգում էր հետևյալին. օրենքի 11-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն. «Եթե համայնքի ավագանին ընդունում է որոշում տեղական հանրաքվեի անցկացումը մերժելու մասին, ապա տվյալ նախաձեռնությամբ հանդես եկած անձինք այդ որոշումը հրապարակելու օրվանից հետո՝ երկու տարվա ընթացքում չեն կարող կրկին հանդես գալ նույն հարցով տեղական հանրաքվե անցկացնելու նախաձեռնությամբ: Տեղական հանրաքվեի նախաձեռնության իրավունք ունեն հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող անձինք, տվյալ համայնքի ավագանին և ղեկավարը» (հոդված 7, 1-ին մաս): Ստացվում է, որ արգելքը վերաբերում է համայնքի ղեկավարին և համայնքում հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող անձանց: Հանրային կառավարման գործընթացում նման խիստ արգելքով կարգավորումը, երևի թե, նպատակահարմար չէ: Չէ՞ որ կարող են փոխվել քաղաքական իրադրությունը, համայնքի ղեկավարն ու ավագանին, այլ հանգամանքներ: Այդ պատճառով նոր իրավիճակում հանրաքվեի անցկացումը կարող է դառնալ նպատակահարմար: Մինչդեռ խիստ և միանշանակ արգելքը խոչընդոտ է այդ նպատակահարմարության ժողովրդավարական կենսագործման համար: Այս համատեքստում, կարծում ենք, նման արգելքը պետք է վերացվի:

«Տեղական հանրաքվեի մասին» 2002 թ. օրենքի հանրաքվեի դրվող հարցերը կարգավորող դրույթների վերլուծությունը ցույց է տալիս, որ **իրավաստեղծ** տեղական հանրաքվեները կարող են լինել ինչպես **մերժող** (ժողովրդական վետո), այնպես էլ **վերացնող ու հաստատող**:

**Հանրաքվեով ընդունված որոշման իրավական ուժը** դրա արդյունավետության կարևոր չափանիշներից է և՛ համապետական, և՛ տեղական մակարդակով: Ըստ այդ հատկանիշի՝ հանրաքվեները լինում են որոշիչ (իմպերատիվ) և խորհրդատվական<sup>14</sup>: Որոշիչ հանրաքվեի մի-

<sup>13</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժողովածու, 2002 թ., գիրք Ե, «Պաշտոնական տեղեկագիր» ՓԲԸ, Երևան, 2002, էջ 94-95, հոդված 5:

<sup>14</sup> Տե՛ս Комарова В.В. Референдум в системе народовластия в Российской Федерации: дисс... канд. юрид. наук. М., 1995, էջ 64:

ջոցով կայացված որոշումն ունի վերջնական, պարտադիր իրավական ուժ: Խորհրդատվական հանրաքվեն, ըստ էության, ժողովրդի կարծիքը վեր հանելու միջոց է<sup>15</sup>: Ըստ հանրաքվեի արդյունքների իրավական նշանակության՝ հնարավոր հանրաքվեներից «Տեղական հանրաքվեի մասին» 2002 թ. օրենքը ճանաչում էր միայն իմպերատիվ հանրաքվեի ինստիտուտը: Դրանում նախատեսված չէր տեղական համայնքային խորհրդատվական հանրաքվեն: Քանի որ օրենքն ամրագրում էր միայն իմպերատիվ հանրաքվեն, ուստի օրենքի 36 հոդվածը սահմանում էր տեղական հանրաքվեով ընդունված որոշման ուժի մեջ մտնելու կարգը. «Տեղական հանրաքվեով ընդունված տեղական ինքնակառավարման մարմնի որոշումն ուժի մեջ է մտնում հանրաքվեի արդյունքների վերաբերյալ մարզային հանձնաժողովի որոշումը հրապարակելուց հետո՝ հնգօրյա ժամկետում, եթե այդ հանրաքվեի արդյունքների հետ կապված վեճով դատարան դիմում չի ներկայացվել»<sup>16</sup>: Հանրաքվեով ընդունված որոշումները կարող են փոփոխվել միայն տեղական հան-

րաքվեով: Այսպիսով՝ տեղական հանրաքվեի արդյունքով ընդունված տեղական որոշմանն օրենքը տալիս է իրավաբանական պատշաճ ուժ և ճանաչում դրա պարտադիրությունը, այլ մարմինների կողմից դրա անփոփոխելիությունը:

**Անցկացման նախաձեռնող-սուբյեկտի հիմնահարցը** հանրաքվեի ժողովրդավարականության կարևոր բնութագրերից է: Որպես կանոն՝ հանրաքվեի անցկացման նախաձեռնության իրավունք ունեն կան հանրային իշխանության ներկայացուցչական (կամ գործադիր) մարմինները, կամ քաղաքացիների խումբը<sup>17</sup>: Վերջինիս նախաձեռնած հանրաքվեն անվանում են հանրագրային (պետիցիոն): Հանրագրային հանրաքվեի ինստիտուտը հայտնի է դեռ 18-րդ դարից, երբ 1715 թ. ԱՄՆ-ի Մասաչուսեթս նահանգում ընդունվեց օրենք տեղական հանրագրային հանրաքվեի մասին<sup>18</sup>: Օգտագործելով Գ.Վ. Սինցովի հանրագրային օրենսդրական (համապետական) հանրաքվեների դասակարգման չափանիշները՝ տեղական իրավաստեղծ հանրագրային հանրաքվեները

<sup>15</sup> Խորհրդատվական հանրաքվեի նկատմամբ և՛ տեսության, և՛ իրավական պրակտիկայի վերաբերմունքը միանշանակ դրական չէ: Երբեմն գործնական իրավակիրառական պրակտիկայում դա գնահատվում է բացասական, միջոցների և ջանքերի անիմաստ ծախս: Օրինակ՝ Ռուսաստանի Դաշնության օրենսդրությամբ նախատեսված է միայն որոշիչ հանրաքվեն (տե՛ս Федеральный конституционный закон РФ от 28 июня 2004 года N 5-ФКЗ “О референдуме Российской Федерации” (С изменениями и дополнениями от 6 апреля 2015 г.), ч. 2 ст. 83): Դրան հակառակ՝ խորհրդատվական հանրաքվեն ամրագրված է Իսպանիայում (տե՛ս Spanish Constitution (Ratified by the spanish people in the referendum of December 7, 1978, [http://www.congreso.es/portal/page/portal/Congreso/Congreso/Hist\\_Normas/Norm/const\\_espa\\_texto\\_ingles\\_0.pdf](http://www.congreso.es/portal/page/portal/Congreso/Congreso/Hist_Normas/Norm/const_espa_texto_ingles_0.pdf), 04. 04. 2014, 17:18), Շվեդիայում («Կառավարման ձևի մասին» 1974 թ. Ակտով (տե՛ս The Constitution of the Kingdom of Sweden. The Instrument of Government (SFS nr: 1974:152, <http://www.parliament.am/library/sahmanadrutyunner/Sweden.pdf>, 10. 06. 2016, 14:58): Խորհրդատվական հանրաքվեի տեսական անընդունելիությունը շեշտադրել է «Ժողովրդի նախաձեռնությամբ անցկացվող համաուկրահինական հանրաքվեի վերաբերյալ» Ուկրաինայի Սահմանադրական դատարանի 2000 թ. մարտի 27-ի որոշումը, ըստ որի. «Ժողովրդի կամքը չի կարող ունենալ խորհրդատվական բնույթ: Ուստի խորհրդատվական հանրաքվեները կորցրել են իրենց արդիականությունն Ուկրաինայում» (տե՛ս [http://www.uchebnikionline.com/pravo/referendne\\_pravo\\_ukrayini\\_-\\_pogorilko\\_vf/vid\\_i\\_referendumiv\\_ukrayini.htm](http://www.uchebnikionline.com/pravo/referendne_pravo_ukrayini_-_pogorilko_vf/vid_i_referendumiv_ukrayini.htm) (02. 02. 2015, 11:50)):

<sup>16</sup> Տեղական հանրաքվեի արդյունքների հետ կապված վեճով դատարան դիմում ներկայացվելու դեպքում տեղական հանրաքվեով ընդունված տեղական ինքնակառավարման մարմնի որոշումն ուժի մեջ է մտնում դատարանի վճիռը հրապարակվելու պահից, եթե այդ վճիռով այլ բան նախատեսված չէ (տե՛ս Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժողովածու, 2002 թ., գիրք Ե, «Պաշտոնական տեղեկագիր» ՓԲԸ, Երևան, 2002, էջ 112, հոդված 36, 2-րդ մաս):

<sup>17</sup> Արդի պետությունների սահմանադրական համակարգերում հանրաքվեի անցկացման նախաձեռնության իրավունք ունեցող սուբյեկտների մասին մանրամասն տե՛ս Синцов Г.В. Современные конституционно-правовые модели института референдума в зарубежных странах: дисс... док. юрид. наук. М., 2009, էջ 48:

<sup>18</sup> 1898 թ. նման օրենք ընդունեց Դակոտա նահանգը: Եվրոպայում առաջին անգամ հանրագրային հանրաքվեն ամրագրվել է 1891 թ. Շվեյցարիայում, որտեղ էլ բոլոր մակարդակներում ամենալայն կերպով կիրառվող ինստիտուտ է: Այդ ինստիտուտը տարածված է նաև Ավստրալիայում, Իտալիայում (տե՛ս Комарова В.В., Референдумный процесс в Российской Федерации. М., 2004.; Мамичев В.Н., Референдум в законодательстве зарубежных стран и России: историко-правовое исследование: дисс... канд. юрид. наук. - Ставрополь, 2000.; Руденко В., Конституционные модели референдума в странах Европейского Союза, Швейцарии и России // Конституционное право: Восточноевропейское Обозрение. М., 2003. №1 և այլն):

կարող ենք դասակարգել **մերժող, վերացնող, հաստատող տեսակների**<sup>19</sup>:

Հանրագրային հանրաքվեն, էականորեն բարձրացնելով հանրաքվեի դերը կառավարման համակարգում, էական հակակշիռ է հանրային իշխանության քաղաքականությանը<sup>20</sup>: Հանրագրային հանրաքվեները միշտ լրացուցիչ են, այլ ոչ թե՛ պարտադիր: Դրանք այլընտրանք են հանրային իշխանության մարմիններին՝ այն դեպքում, երբ քաղաքացիներն ընդդիմանում են նրանց: Եթե հանրաքվեի, այն էլ տեղական, անցկացման կարգում նախատեսված չէ դրա նախաձեռնում քաղաքացիների կողմից, ուրեմն՝ այդպիսի հանրաքվեն տեղական իշխանության քննահաճույքից կախված քաղաքական միջոց է, այլ ոչ թե՛ ժողովրդաիշխանության արդյունավետ և գործուն ձև:

Տեղական հանրաքվեի անցկացման նախաձեռնող սուբյեկտի հարցը «Տեղական հանրաքվեի մասին» 2002 թ. օրենքում ուներ պատշաճ կարգավորում: Օրենքը (հոդված 7) նախաձեռնության իրավունք է վերապահում **համայնքի ավագանուն, ղեկավարին**, ինչպես նաև հանրաքվեի մասնակցելու իրավունք ունեցող անձանց (**քաղաքացիական նախաձեռնություն**): Տեղական հանրաքվեի մասնակցելու իրավունք ունեցող առնվազն 5 քաղաքացի կարող են ձևավորել տեղական հանրաքվեի անցկացման նախաձեռնող խումբ, գրանցվել

տեղական հանրաքվեի մարզային հանձնաժողովում, ձեռնարկել ստորագրություններ հավաքելու գործընթացը: Տեղական հանրաքվեն նշանակում է համայնքի ավագանին, իսկ եթե դա կազմավորված չէ, ապա տվյալ համայնքն ընդգրկող մարզի մարզպետը (հոդված 11):

«Տեղական հանրաքվեի մասին» 2002 թ. օրենքը նախատեսում է նախաձեռնող խմբի գրանցման մերժման որոշման դատական բողոքարկման կարգ<sup>21</sup>: Սակայն մարզային հանձնաժողովի կողմից ստորագրությունների ստուգման հետևանքով տեղական հանրաքվեի անցկացումը մերժելու մասին որոշման, ինչպես նաև համայնքի ավագանու կողմից հանրաքվեի նշանակման որոշման չընդունման կամ նշանակումը մերժելու մասին որոշումների դատական բողոքարկում նախատեսված չէ:

**Հանրաքվեի իրավական ինստիտուտի կարևոր և արդիական խնդիրներից է հանրաքվեի քվորումի**<sup>22</sup> **և որոշման ընդունման անհրաժեշտ ձայների քանակի հարցը**: Եթե, օրինակ՝ հանրաքվեի քվորումի պահանջը ձայնի իրավունք ունեցողների 35 տոկոսն է, իսկ որոշումը կարող է ընդունվել մասնակիցների պարզ մեծամասնությամբ, դիցուք՝ ձայնի իրավունք ունեցողների 20 տոկոսով, ապա դա չի խոսում ժողովրդաիշխանության մասին: Նման փոքրամասնությամբ ամբողջ հասարակության համար պարտադիր որոշման ընդունումը չի

<sup>19</sup> Գ.Վ. Սինցովը (տե՛ս Синцов Г.В., Современные конституционно-правовые модели института референдума в зарубежных странах: дисс... док. юрид. наук. М., 2009, էջ 48) աշխարհի երկրների օրենսդրության վերլուծության հիման վրա հանրագրային հանրաքվեները բաժանում է երեք տեսակի՝ ա) ժողովրդական օրենսդրական նախաձեռնություն, որը հիմնադրվել է Ֆրանսիայում (Սահմանադրության 59 հոդվ.) և տարածվել է ԱՄՆ-ի նահանգներում, Շվեյցարիայում, որոշ հետսոցիալիստական երկրներում: Վերջին տարիներին ԱՄՆ-ում հանրագրային հանրաքվեների առարկա են դառնում մոլիսաղերը, աբորտները, կանանց ընտրական իրավունքները, սեռական փոքրամասնությունների իրավունքները, մահապատիժը և այլն (տե՛ս Зиммерман Дж. Прямая демократия в Соединенных Штатах Америки: опыт и проблемы / Вестник МГУ. Сер. «Право». 1991. №5. էջ 53, Васильев В.И. Прямая демократия: опыт Калифорнии / Государство и право. 1994. №1. էջ 119), բ) քաղաքացիների նախաձեռնած հանրաքվե, որին քվեարկվում է ընդունված, սակայն ուժի մեջ չմտած խորհրդարանական օրենքը, գ) «ժողովրդական վետո» կամ հանրաքվե, որը նախաձեռնում են քաղաքացիները, և քվեարկության առարկան արդեն ընդունված ու գործող օրենքն է: Անվանում են նաև մերժողական վետո:

<sup>20</sup> Քաղաքացիական նախաձեռնությամբ հանրաքվեի ինստիտուտը կարևորում են նաև այլ հետազատողներ (տե՛ս Գ. Դանիելյան «Հանրաքվեի՝ որպես անմիջական ժողովրդավարության ինստիտուտի վերանայման հիմնարար ուղղությունները», Պետության և իրավունք, ՀՀ իրավաբանների միություն, թիվ 3-4 (65-66), էջ 17-18):

<sup>21</sup> 2014 թ. դեկտեմբերի 17-ին ընդունված օրենքով սահմանվեց, որ նախաձեռնող խմբի գրանցումը մերժելու մասին որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետներում (տե՛ս ՀՀ ՊՏ 2014. 12 30 /76 (1089). 1, հոդված 1253.14):

<sup>22</sup> Հանրաքվեի քվորումի, այսինքն՝ անհրաժեշտ քանակով ձայնի իրավունք ունեցողների մասնակցության հարցի նշանակությունն ընդունում է նաև Գ. Դանիելյանը (տե՛ս Գ. Դանիելյան «Հանրաքվեի՝ որպես անմիջական ժողովրդավարության ինստիտուտի վերանայման հիմնարար ուղղությունները», Պետություն և իրավունք, ՀՀ իրավաբանների միություն, թիվ 3-4 (65-66), էջ 18):

կարելի համարել ժողովրդավարական: Մեր կարծիքով՝ բնականոն և ժողովրդավարական կարող է լինել այն որոշումը, որն ընդունվում է ձայնի իրավունք ունեցող անձանց գոնե 50 տոկոսի աջակցության դեպքում: Հետևաբար՝ այս հարցում անհրաժեշտ է ապահովել պատշաճ սահմանադրական և ընթացիկ օրենսդրական կարգավորում: Չափից դուրս ցածր քվորումը հանրաքվեն կարող է դարձնել ամբոխավարական միջոց քաղաքական ուժերի ձեռքին՝ իրենց նեղ կլանային հարցերին լեգալություն ու լեգիտիմություն շնորհելու համար:

Տեղական հանրաքվեի քվորումի և որոշման ընդունման անհրաժեշտ ձայների քանակը կարգավորված է «Տեղական հանրաքվեի մասին» 2002 թ. օրենքի 35 հոդվածի 2-րդ մասով, որի համաձայն՝ տեղական հանրաքվեի դրված հարցը կամ որոշման նախագիծը համարվում է ընդունված, եթե կողմ է քվեարկել քվեարկության մասնակիցների կեսից ավելին, բայց ոչ պակաս, քան ցուցակներում ընդգրկված քաղաքացիների մեկ երրորդը: Եթե համապետական հանրաքվեի դեպքում նման լուծման հետ կարելի է ինչ-որ տեղ համաձայնվել, ապա տեղական հանրաքվեի դեպքում նման իրավակարգավորումը համարում ենք անընդունելի: Ստացվում է, որ տեղական հանրաքվեին մասնակցող 9000 ձայնի իրավունք ունեցողների դեպքում՝ հանրաքվեի լեգալության պահանջներից են 60 տոկոս մասնակցությունը, մոտ 33 տոկոս կողմ քվեարկելը: Նման կարգով ընդունված որոշումը, համապատասխանելով օրենքին ձևական առումով, անշուշտ, օրինական (լեգալ) է, սակայն դա չի նշանակում, թե այդ որոշումն ունի լեգիտիմության բարձր աստիճան:

Որպեսզի կարողանանք գնահատել «Տեղական հանրաքվեի մասին» 2002 թ. օրենքով հիմնադրված տեղական հանրաքվեի իրավական ինստիտուտն իր բովանդակային, այլ ոչ թե՛ ձևական-նորմատիվ կողմերով, փորձենք

կառուցել տեղական հանրաքվեի **իդեալական մոդելի և իրական մոդելի** համեմատական աղյուսակ: «Իդեալական մոդել» պայմանական անվանումն օգտագործում ենք լավագույն իմաստով, այսինքն՝ հանրաքվեի տարբերակ, որում հանրաքվեի բովանդակությունը կազմող հիմնական իրավական չափանիշները դրսևորված են առավել լրիվությամբ, ինչքան որ հնարավոր է՝ ՀՀ տարածքային և այլ առանձնահատկություններով պայմանավորված: Ամեն մի բովանդակային իրավական չափանիշ կարող է դրսևորվել մի քանի ձևով, օրինակ՝ անցկացման մակարդակի հնարավոր ցուցանիշներ են մարզային, Երևան քաղաքի, համայնքային, միջհամայնքային հանրաքվեները, որոնցից ամեն մեկն իդեալական տարբերակի այդ չափանիշին բերում է մեկ միավոր: Իրական մոդելն օրենսդրական կարգավորման արդյունքով հիմնադրված իրական գործող իրավական ինստիտուտն է, որը կարող է շեղվել իդեալականից իր ցուցանիշներով: Օրինակ՝ եթե ըստ մակարդակի հնարավոր 4 ցուցանիշից ՀՀ օրենսդրությունը նախատեսել է տեղական հանրաքվեի մեկ մակարդակ, տեսակ՝ համայնքային, ուրեմն՝ իրական մոդելն այդ ցուցանիշով ստանում է 1 միավոր դրա համար և 0՝ մնացած մակարդակների բացակայության համար: Երևան քաղաքը դիտարկում ենք ըստ մակարդակի հանրաքվեի անցկացման առանձին տեսակ, որովհետև, 1995 թ. Սահմանադրությամբ լինելով քաղաք՝ ուներ մարզի կարգավիճակ: Բացի այդ՝ այստեղ կենտրոնացված է հանրապետության բնակչության մեկ երրորդը: Հետևաբար՝ Երևանյան կամ մայրաքաղաքային հանրաքվեի հնարավորության առկայությունը կամ դրա իսպառ բացակայությունը էական ցուցանիշ է հանրաքվեի անցկացման մակարդակի համար, ուրեմն նաև՝ հանրաքվեի իրական ինստիտուտի՝ ըստ անցկացման մակարդակի գնահատման համար:

**Տեղական հանրաքվեի ինստիտուտի իդեալական և ՀՀ օրենսդրությամբ սահմանված իրական մոդելների իրավական չափանիշների համեմատական աղյուսակ 2002 թ. դրությամբ**

Չափանիշ	Իդեալական մոդել		Իրական օրենսդրական մոդել	
	Իդեալական մոդել	Իդեալական մոդել	Իրական օրենսդրական մոդել	Իրական օրենսդրական մոդել
1. Կարգավորման իրավական աղբյուրը	հիմունքների պատշաճ սահմանադրական կարգավորում	1	առանց հիմունքների սահմանադրական կարգավորման	0
2. Անցկացման մակարդակը	մարզային, Երևան քաղաքի, համայնքային, միջհամայնքային	1+1+1+1	1+1+1+1 միայն համայնքային	0+0+0+1
0+0+0+13.0+0+0+13 0+0+0+13 Անցկացման պարտադիրությունը	պարտադիր, լրացուցիչ	1+1	1+1 միայն լրացուցիչ	0+1
0+14.0+14 0+14 Անցկացման առարկան	իրավաստեղծ՝ 3 տեսակով, վստահության, այլ հարցերով	1+1+1+1+1	1+1+1+1+1 միայն իրավաստեղծ 3 տեսակով	1+1+1
1+1+15.1+1+15 1+1+15 Արդյունքների իրավական նշանակությունը	իմպերատիվ, խորհրդատվական	1+1	“w” միայն իմպերատիվ	1
6. Անցկացման նախաձեռնողներ	քաղաքացիներ, պետական մարմիններ, համայնքային մարմիններ	1+1+1	1+1+1 քաղաքացիներ, պետական մարմիններ՝ սահմանափակ, համայնքային մարմիններ	1+1+1
1+1+17.1+1+17 1+1+17 Մասնակիցներ	քաղաքացիներ, բնակիչներ	1+1	“w” միայն քաղաքացիներ	1
8. Որոշման ընդունման ձայների քանակ	հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող անձանց պարզ մեծամասնություն (50%)	1	քվեարկությանը մասնակցած անձանց կեսից ավելին, բայց ոչ պակաս 1/3-ը (34%)	0
		<b>20 միավոր</b>		<b>10 միավոր</b>

Համեմատական աղյուսակի թվային տվյալների համաձայն՝ իդեալական մոդելն 8 չափանիշի շրջանակում ունի արդյունավետության և գործունեության 20 միավոր, այնինչ իրական մոդելի արդյունավետության միավորը կազմում է ընդամենը 10 միավոր՝ երկու անգամ պակաս: Դա հիմք է տալիս եզրակացնելու, որ «Տեղական հանրաքվեի մասին» 2002 թ. օրենքով հիմնադրված տեղական հանրաքվեի իրավական ինստիտուտը, իդեալական մոդելի հետ համեմատած, ունի ընդամենը կիսով չափ արդ-

յունավետություն և գործունեություն: Իսկ դա նշանակում է կիսով չափ ժողովրդավարություն և ժողովրդաիրավախախտություն: Ընդ որում՝ պետք է նկատի ունենալ, որ հաշվարկված չեն հանրաքվեի անցկացման ընթացակարգի մանրամասնություններին բնորոշ թերությունները, օրինակ՝ տեղական հանրաքվեի նախաձեռնման և անցկացման որոշ փուլերում դատական բողոքարկման հնարավորությունը օրենքով չնախատեսելը և այլն<sup>23</sup>:

1995 թ. խմբագրությամբ Սահմանադրու-

<sup>23</sup> Միայն 2014 թ. օրենքով սահմանվեց, որ տեղական հանրաքվեի արդյունքների հետ կապված վեճերով դիմում վարչական դատարան կարող է ներկայացվել տեղական հանրաքվեի արդյունքի պաշտոնական հրապարակման օրվանից հետո՝ 5-րդ օրը մինչև ժամը 18.00-ն:

թյունը որևէ իրավակարգավորում՝ նվիրված տեղական հանրաքվեին, չէր նախատեսում: 2005 թ. բարեփոխված Սահմանադրությունն այս հարցում դրսևորեց նորամուծություն: Սահմանադրության «Տեղական ինքնակառավարումը» 7-րդ գլխում ի հայտ եկան տեղական հանրաքվեին նվիրված իրավակարգավորումներ, որոնք կարևոր նշանակություն ունեցան այդ ինստիտուտի ժողովրդավարականացման ցուցանիշների բարելավման գործում: 2005 թ. Սահմանադրության 107 հոդվածի 4-րդ մասն ամրագրում էր. «Համայնքի անդամները կարող են ուղղակիորեն մասնակցել համայնքի գործերի կառավարմանը՝ համայնքային նշանակության հարցերը տեղական հանրաքվեով լուծելու միջոցով: Տեղական հանրաքվեների անցկացման կարգը սահմանվում է օրենքով»<sup>24</sup>:

Սահմանադրական մակարդակում տեղական հանրաքվեի ամրագրումն ազդարարում էր տեղական մակարդակով անմիջական ժողովրդաիշխանության կարևոր ձևի ճանաչումը՝ տեղական ընտրությունների և ժողովրդավարության անմիջական տեղական այլ ձևերի կողքին: Այդ կարգավորումը երաշխիք էր ինստիտուտի իրական գործունեության և արդյունավետության համար, որովհետև սահմանափակում էր օրենսդիր մարմնի քաղաքական հայեցողական մոտեցումը հանրաքվեի կարգավորման հարցում: Այդպիսին էր, օրինակ՝ իրադրությունը 1990-1995 թթ., երբ չկար սահմանադրական կարգավորումը՝ որպես երաշխիք ընթացիկ կարգավորման գոյության համար:

Օրենսդիր մարմնի կողմից օրենքով կարգավորելու սահմանադրական պարտականության բացակայության պարագայում խորհրդարանը հանրաքվեի օրենսդրական կարգավորումն իրականացնելիս (1991 թ.) միայն ենթադրաբար ճանաչեց տեղական հանրաքվեն՝ չնախատեսելով դրա անցկացման կարգը: Իրավիճակը մնաց նույնը նաև 1995 թ. Սահմանադրու-

թյունն ընդունելուց հետո, որովհետև դա ևս անտեսեց տեղական հանրաքվեն՝ չսահմանելով դրա գոյության սահմանադրական հիմքերը: Իրավական հետևանքը եղավ այն, որ տեղական հանրաքվեի անցկացման կարգը սահմանող օրենքն ընդունվեց միայն 2002 թ.:

2005 թ. խմբագրությամբ Սահմանադրությունը սահմանեց դրույթ տեղական պարտադիր, սակայն արդյունքների նշանակությամբ խորհրդատվական հանրաքվեի վերաբերյալ: Կարծում ենք՝ 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության 110 հոդվածի իրավադրույթներն այն մասին, որ մինչև համայնքների միացման կամ առանձնացման կառավարության օրենսդրական նախաձեռնության ներկայացումը՝ «կառավարությունը համապատասխան համայնքներում նշանակում է տեղական հանրաքվեներ», ազդարարեց տեղական պարտադիր հանրաքվեի ինստիտուտի ներմուծումը, ինչն էլ, իր հերթին, մեկ նիշով բարելավեց տեղական հանրաքվեի իրական մոդելը Հայաստանում: Սահմանադրական կարգավորումն այս տեսակի հանրաքվեի արդյունքները ճանաչում էր խորհրդատվական նշանակություն ունեցող. Սահմանադրության 110 հոդվածը սահմանում էր, որ. «Տեղական հանրաքվեների արդյունքները կցվում են օրենսդրական նախաձեռնությանը: Համայնքները կարող են միավորվել կամ բաժանվել՝ անկախ տեղական հանրաքվեների արդյունքներից»: Այսպիսով՝ ստացվում էր յուրահատուկ մոդել. ըստ անցկացման՝ պարտադիր, սակայն, ըստ արդյունքի իրավական նշանակության՝ խորհրդատվական հանրաքվե<sup>25</sup>:

Մյուս դրական սահմանադրական փոփոխությունն այն էր, որ 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրությունը 108 հոդվածով Երևան քաղաքին շնորհեց համայնքի կարգավիճակ: Իսկ դա նշանակում էր, որ Երևան քաղաքում ևս կարող էր անցկացվել տեղական հանրաքվե՝ ինչպես մնացած համայնքներում:

<sup>24</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (փոփոխություններով): Ընդունվել է ՀՀ հանրաքվեով 1995 թ. հուլիսի 5-ին, փոփոխությունները կատարվել են ՀՀ հանրաքվեով 2005 թ. նոյեմբերի 27-ին: Երևան, 2005, էջ 46:

<sup>25</sup> Սահմանադրական այս նորամուծությունը փոփոխություն ներմուծեց տեղական հանրաքվե նախաձեռնող սուբյեկտների շրջանակում, քաղաքացիների խմբի, ավագանու և համայնքի ղեկավարի կողքին՝ նախատեսելով նաև պետական մարմնի, մասնավորապես՝ կառավարության կողմից տեղական հանրաքվեի անցկացման նախաձեռնության իրավունք: Սակայն այս իրավունքը գործում էր միայն համայնքների միացման կամ առանձնացման դեպքի համար, այլ ոչ թե ընդհանրապես՝ ըստ առարկայի բոլոր տեսակի հանրաքվեների համար, այդ իսկ պատճառով՝ դա համարում ենք տեղական հանրաքվեի ինստիտուտի մասնակի բարելավում մեկ ցուցանիշի ուղղությամբ:

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 107 2018



Այսպիսով՝ 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրությունը որոշակիորեն բարելավեց տեղական հանրաքվեի ինստիտուտը մի քանի ուղղությամբ. առաջին՝ ինստիտուտի հիմքերի սահմանադրական ամրագրմամբ, երկրորդ՝ պարտադիր տեղական հանրաքվեի սահմանմամբ, երրորդ՝ բացի իմպերատիվ տեղական հանրաքվեներից՝ խորհրդատվական հանրաքվեի մասնակի դեպքի (համայնքների միացման կամ առանձնացման) նախատեսմամբ, չորրորդ՝ Երևան քաղաքին համայնքի կարգավիճակի շնորհմամբ և այստեղ տեղական հանրաքվե անցկացնելու սահմանադրական հնարավորության ստեղծմամբ:

2005 թ. սահմանադրական բարեփոխումներից հետո մինչև 2015 թ. օրենսդիրն ընդունել է չորս օրենք՝ «Տեղական հանրաքվեի մասին» 2002 թ. օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին: Փորձենք վերլուծել այս օրենսդրական նորամուծությունները հանրաքվեի էական բովանդակային չափանիշների տեսանկյունից և գնահատել դրանք ու դրանց դերը տեղական հանրաքվեի իրավական ինստիտուտի հետագա զարգացման գործում:

Առաջին օրենքն ընդունվել է 2006 թ. նոյեմբերի 28-ին<sup>26</sup>: Այս օրենքով կատարվեցին տեղական հանրաքվեի նշանակման և անցկացման կարգի այն փոփոխությունները, որոնք բխում էին ՀՀ Սահմանադրության 2005 թ. խմբագրությունից: Մասնավորապես՝ ամրագրվեցին կառավարության կողմից տեղական հանրաքվեի նշանակման հարաբերությունները կարգավորող դրույթները: Փոփոխությունների մյուս խումբն իր բնույթով ընթացակարգային և իրավատեխնիկական էր<sup>27</sup>:

2006 թ. նոյեմբերի 28-ի օրենքով «Տեղա-

կան հանրաքվեի մասին» 2002 թ. օրենքում կատարված էական փոփոխությունը վերաբերում էր տեղական հանրաքվեի մասնակիցների շրջանակի ընդլայնմանը, ինչը պայմանավորված էր Սահմանադրության 2005 թ. խմբագրության նորամուծությամբ: Սահմանադրության 30 հոդվածի 2-րդ մասը սահմանեց, որ. «Օրենքով կարող են սահմանվել Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող անձանց՝ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին և տեղական հանրաքվեներին մասնակցելու իրավունք»: Սահմանադրական այս նորամուծությամբ պայմանավորված «Տեղական հանրաքվեի մասին» 2002 թ. օրենքի 1-3, ինչպես նաև մի շարք այլ հոդվածներում «քաղաքացի» հասկացությունը փոխարինվեց «հանրաքվեի մասնակցելու իրավունք ունեցող», «համայնքի բնակիչ», «յուրաքանչյուր ոք» իրավական հասկացություններով: «Տեղական հանրաքվեի մասին» 2002 թ. օրենքի 3-րդ հոդվածի նոր խմբագրությունը սահմանեց, որ. «Տեղական հանրաքվեին մասնակցելու իրավունք ունի համապատասխան համայնքում առնվազն մեկ տարվա հաշվառում ունեցող և փաստացի բնակվող 18 տարին լրացած յուրաքանչյուր ոք»: Օրենքը ոչ քաղաքացիներից հանրաքվեին մասնակցելու իրավունքով օժտում էր միայն «փախստականի կարգավիճակ ունեցող կամ փախստականի ընտանիքի վկայականում նշված 18 տարին լրացած յուրաքանչյուր անձի»<sup>28</sup>:

«Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ 2008 թ. դեկտեմբերի 6-ի օրենքով<sup>29</sup>, ինչպես նաև «Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատա-

<sup>26</sup> Տե՛ս «Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքը՝ ընդունված 2006 թ. նոյեմբերի 28-ին (ՀՀ ՊՏ 2006.12.29 /69 (524), Հոդ. 1433):

<sup>27</sup> Այդ փոփոխությունները շոշափում էին հանրաքվեի հանձնաժողովների կարգավիճակը, աշխատանքի կարգը, հանրաքվեի հետ կապված ծախսերի կատարման կարգը և այլն (տե՛ս «Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքը՝ ընդունված 2006 թ. նոյեմբերի 28-ին (ՀՀ ՊՏ 2006.12.29 /69 (524), Հոդ. 1433), հոդվածներ 6-12, 14-18):

<sup>28</sup> «Տեղական հանրաքվեի մասին» 2002 թ. օրենքը տեղական հանրաքվեին մասնակցելու իրավունք էր վերապահում նաև տեղական հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող այն անձանց, ովքեր բնակվում կամ գտնվում էին արտասահմանում: 2006 թ. օրենքով կատարված փոփոխությամբ այս իրավունքը վերացվեց՝ ելնելով դրա կիրառման կազմակերպական և նյութական բարդություններից:

<sup>29</sup> Տե՛ս «Տեղական հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը՝ ընդունված 2008 թ. դեկտեմբերի 20-ին (ՀՀ ՊՏ 2009.01.16/3 (669), հոդված 62):

րելու մասին» ՀՀ 2014 թ. դեկտեմբերի 17-ին ընդունված օրենքով<sup>30</sup>, «Տեղական հանրաքվեի մասին» 2002 թ. օրենքում կատարված փոփոխությունները 2005 թ. սահմանադրական, իսկ այնուհետև ընտրական օրենսդրության բարեփոխումներով պայմանավորված զուտ իրավատեխնիկական փոփոխություններ էին, այդ պատճառով՝ հատուկ քննարկման առարկա չենք դարձնի:

Այսպիսով՝ 2005 թ. սահմանադրական, ինչպես նաև մինչև 2014 թ. իրականացված օրենսդրական բարեփոխումներից հետո տեղական հանրաքվեի իրական մոդելը բարելավեց իր արդյունավետության և գործունեության միավորները՝ դրանք 10-ից հասցնելով 15-ի (75 տոկոս), ինչը կարելի է համարել էական նվաճում:

Տեղական հանրաքվեի իրավական ինստիտուտն էական վերակառուցման ենթարկվեց 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրության ընդունմամբ: Սահմանադրության 183 հոդվածը (Համայնքի գործերի կառավարմանն անմիջական մասնակցությունը) հատուկ կարգավորման է ենթարկում համայնքի բնակիչների կողմից համայնքի գործերի կառավարման անմիջական եղանակների հարցը: Այդ իրավակարգավորումն աչքի է ընկնում հետևյալ առանձնահատկություններով.

1) Ինչպես համաերկրային մակարդակով՝ համայնքային մակարդակում ևս հասարակական գործերի կառավարման երկու ձևը ճանաչվում են ՀՀ Սահմանադրության կողմից: Այդպիսի եզրակացության հիմքը Սահմանադրության 183 հոդվածի 1-ին և 2-րդ մասերն են, որոնք օգտագործում են «համայնքի գործերի անմիջական կառավարում» բանաձևը: Դա, իր հերթին, նշանակում է, որ Սահմանադրությունը համայնքային գործերի կառավարման կառուցակարգը տրոհում է երկու ձևի՝ ուղղակի-անմիջական և անուղղակի-միջնորդավորված (համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների):

2) Որպես համայնքի բնակիչների կողմից համայնքի գործերի կառավարման անմիջական մասնակցության ձևեր են ճանաչվում տեղական հանրաքվեն և օրենքով սահմանված այլ եղանակները:

Այսպիսով՝ 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրությունն ամրագրում է «համայնքի բնակիչների իրավունքն անմիջականորեն մասնակցել համայնքի գործերի կառավարմանը՝ համայնքային նշանակության հանրային հարցերը տեղական հանրաքվեով լուծելու միջոցով»: Սահմանադրության 183 հոդվածի 2-րդ մասը տեղական հանրաքվեի անցկացման կարգի, ինչպես նաև բնակիչների կողմից համայնքի գործերի կառավարմանը մասնակցելու այլ եղանակների սահմանումը թողել է օրգանական օրենքի վրա:

2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության հետ համեմատած՝ 2015 թ. խմբագրությունը չի նախատեսում տեղական պարտադիր հանրաքվեի ինստիտուտը համայնքների միացման և առանձնացման դեպքում: Ըստ էության՝ 2005 թ. խմբագրության իրավակարգավորման մեջ առկա լուծումը հակասական էր: Հակասականությունը դրսևորվում էր անցկացմամբ պարտադիր, սակայն արդյունքների իրավական ուժով խորհրդատվական բնույթում:

Այսպիսով՝ 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրությունը, նախորդների համեմատ, արձանագրեց առաջընթաց՝ սահմանելով, որ համայնքի գործերի կառավարման կառուցակարգ են կազմում նաև անմիջական եղանակները՝ մասնավորապես՝ հանրաքվեն և օրենքով սահմանված այլ եղանակները: Սակայն, առաջընթացի հետ մեկտեղ՝ այդ խմբագրությանը բնութագրական են նաև որոշակի թերություններ և բացթողումներ: Դրանցից կարելի է թվարկել հետևյալները.

1) Ճանաչելով համայնքի գործերի լուծման անմիջական ձևերը՝ Սահմանադրության այդ խմբագրության 179 հոդվածը տեղական ինքնակառավարումը բնորոշում է որպես «տեղական ինքնակառավարման մարմինների իրավունք ու կարողություն ... լուծելու համայնքային նշանակության հարցերը»: Զուտ ձևական տրամաբանության դիրքերից բխում է, որ եթե համայնքային գործերի կառավարումն ունի անմիջական ձևեր, և Սահմանադրությունը ճանաչում է դրանց գոյության իրավունքը, ապա 179 հոդվածը տեղական ինքնակառավարման բնորոշմանը պետք է ավելացնեն նաև համայն-

<sup>30</sup> Տե՛ս ՀՀ ՊՏ 2014.12.30 /76 (1089).1, Հոդ. 1253.14:

քի բնակիչներին՝ որպես «իրավունք և կարողություն ունեցող» ինքնակառավարման մասնակիցներ: Հուսանք, որ սահմանադրական բարեփոխումների հաջորդ փուլի ընթացքում այս հարցը կլուծվի: Դա բխում է ոչ միայն ձևական տրամաբանության պահանջներից, այլ նաև ժողովրդաշխատանքային սկզբունքի ազատական բովանդակությունից:

2) 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրությունը ճանաչում է տեղական հանրաքվեի միայն մեկ մակարդակ: Ըստ անցկացման տարածքի տեղական (լոկալ) հանրաքվեի՝ այլ մակարդակները սահմանված չեն ոչ Սահմանադրությամբ, ոչ էլ՝ օրենքով: Օրինակ՝ հենց միայն այն հանգամանքը, որ Սահմանադրության 189 հոդվածը միջհամայնքային միավորումը ճանաչում է հանրային իրավունքի իրավաբանական անձ, հուշում է, որ կարելի էր նախատեսել նաև տեղական միջհամայնքային հանրաքվեն:

3) Տեղական հանրաքվեի սահմանադրական կարգավորման տեսլականը շատ ընդհանուր է ու չի համապատասխանում իրավական որոշակիության սկզբունքին, որովհետ չի կոնկրետացնում տեղական հանրաքվեի արդյունավետության բովանդակության հիմնական չափանիշները, այն է՝ առարկան, նախաձեռնող սուբյեկտներին, որոշման ընդունման ձայների քանակը: Ըստ մակարդակի՝ նախատեսված է տեղական հանրաքվեի մեկ տեսակ՝ համայնքային: Այդպիսի կարգավորումը հղի է վտանգով՝ օրենսդրի կողմից չեզոքացնելու կամ վերացնելու տեղական հանրաքվեի ինստիտուտի այն ժողովրդավարական չափանիշները, որոնք քայլ առ քայլ ամրագրվել են օրենսդրությամբ: Որ դա հնարավոր է, ցույց է տալիս համազգային հանրաքվեի ինստիտուտի օրենսդրական վերակառուցումը 1995-2001 թթ., երբ ոչ պատշաճ սահմանադրական կարգավորումը հնարավորություն տվեց օրենսդրին հետ կանգնելու անկախության առաջին տարիների

որոշ ժողովրդավարական օրենսդրական լուծումներից:

2015 թ. խմբագրությամբ Սահմանադրության ընդունումից հետո օրենսդիրը միայն մեկ անգամ է անդրադարձել հանրաքվեի ինստիտուտին: Դա արվել է 2016 թ. դեկտեմբերի 16-ի «Տեղական հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքով<sup>31</sup>: Այդ փոփոխությունները բխում են 2015 թ. սահմանադրական բարեփոխումներից և կապված են տեղական պարտադիր հանրաքվեի մասնավոր դեպքի՝ համայնքների միավորման կամ առանձնացման հարցով հանրաքվեի վերացման հետ: Այս հարցին Սահմանադրությունը տվեց նոր լուծում՝ սահմանելով, որ, հանրային շահերից ելնելով՝ համայնքները կարող են օրենքով միավորվել կամ բաժանվել: Ազգային ժողովը համապատասխան օրենք ընդունելիս պարտավոր է լսել այդ համայնքների կարծիքը (հոդված 190): Ենթադրվում է, թե այդ կարծիքը կարող է արտահայտված լինել լրացուցիչ՝ ֆակուլտատիվ տեղական հանրաքվեի միջոցով:

Ամփոփելով 2015 թ. իրականացված սահմանադրական բարեփոխումներից հետո տեղական հանրաքվեի իրական մոդելի արդյունավետության և գործունեության միավորները՝ կարող ենք փաստել, որ բուն չափանիշների հարցում աճ չի գրանցվել. իդեալական մոդելի 20 միավորից իրական մոդելին բնորոշ է 15-ը: 2015 թ. Սահմանադրությունը կատարելագործեց միայն տեղական հանրաքվեի հայեցակարգային որոշ հիմքեր: Հետևությունն այն է, որ իրական մոդելն ունի բարելավման տեղ, հատկապես՝ անցկացման մակարդակների, պարտադիրության, առարկայի, որոշման ընդունման ձայների քանակի, հիմնական մի քանի չափանիշի հարցում սահմանադրական կարգավորման որոշակիության ապահովման ուղղությամբ:

<sup>31</sup> Տես ՀՀ ՊՏ 2016.12.30 /95 (1275). 1. Հոդված 1228.21:

**МАРИАМ ЭВОЯН**

Российско-Армянский (Славянский) Университет,  
аспирант Института права и политики,  
заведующая юридическим отделом ЗАО «ЭКЕНГ»

## ПРЕИМУЩЕСТВЕННОЕ ПРАВО ПОКУПКИ ДОЛИ В РАМКАХ ПРАВА ОБЩЕЙ СОБСТВЕННОСТИ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

В современной цивилистике одним из самых интересных проявлений права общей долевой собственности является установленное законодателем преимущественное право общих долевых собственников покупки доли при ее отчуждении третьему лицу. В течение последних десятилетий данное право неоднократно исследовалось различными зарубежными и отечественными учеными, что привело к постепенному установлению конкретного порядка реализации данного права в Армении. На практике, однако, до сих пор многие проблемные вопросы остаются неурегулированными и становятся причиной правовых казусов, что изо дня в день повышает необходимость осуществления исследований в данной сфере. В настоящей работе мы исследуем механизмы реализации данного права, выявим некоторые законодательные пробелы и практические проблемы функционирования преимущественного права, а также предложим свои пути их разрешения. Более того, исследуем также особенности проявления данного права в зарубежных странах и возможности осуществления рецепции определенных норм с целью повышения эффективности функционирования исследуемого института.

Итак, для понятия сущности преимущественного права покупки доли, необходимо обратиться к его истокам.

Несмотря на то, что большинство современных цивилистических категорий были рецептированы из Римского права, однако ис-

следуемый институт является исключением из этого правила, так как известен цивилистам лишь с недавних пор. Так, в частности, в Древнем Риме каждый из сособственников общей долевой собственности являлся субъектом идеальной доли в праве на вещь, и она рассматривалась как самостоятельный объект прав – ее можно было закладывать, продавать, дарить, завещать без согласия остальных сособственников. Римское право не знало каких-либо привилегий преимуществ сособственников при отчуждении одним из них доли в праве общей собственности.

Между тем, в советское время данный институт нашел свое отражение практически во всех правовых актах эпохи. Несмотря на то, что ГК РСФСР 1922г. устанавливала лишь общие положения института общей собственности, и многие «законодательные пробелы решались ведомственными нормативными актами, а также судебной практикой»,<sup>1</sup> однако уже тогда ст. 64 устанавливала преимущественное право покупки одним из общих долевых сособственников доли другого сособственника при ее отчуждении третьему лицу.<sup>2</sup>

Далее, несмотря на то, что Основы гражданского законодательства СССР и союзных республик 1961г.<sup>3</sup> содержали идентичные гражданскому кодексу РСФСР 1922г. положения, однако уже спустя 3 года была произведена кодификация, которая намного более детально отрегулировала отношения общей собственности

<sup>1</sup> Маслов В.Ф., Вопросы общей собственности в судебной практике, М: Госюриздат, 1963, с. 24

<sup>2</sup> Гражданский кодекс РСФСР 1922 г./http://civil-law.by.ru/wist/gk22/ves.html#i//

<sup>3</sup> Ч. 4, ст. 46 Закона СССР от 08.12. 1961г. «Об утверждении Основ гражданского законодательства Союза ССР и союзных республик»// http://www.consultant.ru/cons/cgi/online.cgi?req=doc;base=ESU;n=241#0

и послужила основой для современной законодательской деятельности. Этим правовым актом был Гражданский Кодекс Арм. ССР от 1964 года.<sup>4</sup> В данном документе отдельная Глава 12 была посвящена вопросам общей собственности и включала в себя 19 статей (схожие положения были в ГК РСФСР 1964г).<sup>5</sup> Здесь ст. 121 регулировала право преимущественной покупки путем детального установления порядка его осуществления. Так, согласно ч. 3 ст. 120, общий долевой собственник, намеренный продать свою долю в общем имуществе, должен был в письменной форме уведомить об этом других общих собственников и указать цену и другие условия продажи. Здесь сроком для отказа от этого права или его использования являлись – 1 месяц для дома и 10 дней для движимого имущества, по истечении которых продающий собственник имел право продажи своей доли любому третьему лицу.

Именно эти положения легли в основу действующего законодательства РА.

В настоящее время вопрос о преимущественном праве покупки доли является одним из наиболее противоречивых в рамках института общей долевой собственности. Предпосылкой для этого, *inter alia*, служит некоторая неясность в понятии его сущности как вещного права, или же обязательственного права. В частности, некоторые ученые считают, что как в советский период, так и в настоящем армянском и российском гражданском праве право преимущественной покупки имеет исключительно обязательственную природу,<sup>6</sup> а преимущественное право покупки в качестве вещного права, по существу, оказалось забытым.<sup>7</sup> Между тем, существуют также ученые, считающие, что преимущественное право покупки

отчуждаемой доли имеет вещно-правовой характер.<sup>8</sup> Так, Емелькина И.А. отмечает, что под «вещным преимущественным правом покупки в законодательстве европейских стран, как правило, понимается абсолютное право управомоченного лица на заключение договора купли-продажи в отношении недвижимости преимущественно перед всеми другими лицами, реализация которого возможна при условии продажи собственником вещи третьему лицу, а в случае его нарушения – возможность вступления во владение вещью независимо от воли собственника».<sup>9</sup> В связи с этим, считаем, что обе позиции являются обоснованными и имеют место для существования. На наш взгляд, однако, преимущественное право долевых собственников покупки отчуждаемой другим собственником своей доли третьему лицу имеет обязательственную природу, хотя и включает в себя некоторые вещно-правовые элементы.

Переходя к рассмотрению применения преимущественного права покупки доли в гражданском праве Армении, следует подчеркнуть некоторые его особенности.

Итак, необходимо изначально установить, что преимущественное право на покупку доли распространяется исключительно на случаи продажи доли именно третьему, постороннему лицу и никоим образом не действует при ее отчуждении и продаже одному из долевых собственников. То есть, если лицо намерено продать свою долю любому другому участнику общей долевой собственности, то оно свободно может сделать это без какого-либо одобрения со стороны других собственников. Более того, это право также не распространяется на случаи отчуждения данной доли иным путем кроме про-

<sup>4</sup> ՀՀ քաղաքացիական օրենսգրքը 1964թ. (Гражданский кодекс РА 1964г.) // <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=9>

<sup>5</sup> ГК РСФСР 1964 года/ <http://www.consultant.ru/popular/gkrsfsr/>

<sup>6</sup> Кузнецова Л.В. Некоторые проблемы осуществления преимущественного права покупки доли в праве общей долевой собственности//Журнал российского права. 2006. №.4. стр 81–89.; Гребенкина И.А. Право преимущественной покупки чужой недвижимости как новое ограниченное вещное право для РФ: анализ вещных признаков и проблема «обязательственных элементов»// Актуальные проблемы российского права, МГЮА, №. 2(27), 2013, с. 143.

<sup>7</sup> Суханов Е.А. Ограниченные вещные права в гражданском праве, Юрист. 2003. №.3. с. 2.

<sup>8</sup> Емелькина И.А. Вещное преимущественное право покупки недвижимости// Вестник гражданского права. 2010. № 3. стр. 108.; Гребенкина И.А. Преимущественное право покупки чужой недвижимости: понятие и содержание, Теоретические проблемы отраслей права, № 11 (Том ХСVI) ноябрь, 2014, с. 1276-1283

<sup>9</sup> Там же, Емелькина, с. 108.

дажи, как например, дарение, завещание, мена и т. д.<sup>10</sup>

Далее, необходимо отметить, что исследуемое преимущественное право не распространяется на отношения по поводу общей совместной собственности между супругами. Это вытекает как из буквального толкования ст. 195 ГК РА, так и из прецедентного толкования, данного Кассационным Судом РА по ряду своих дел.<sup>11</sup> По этому поводу согласимся с профессором Сухановым Е. А., что этот вывод вытекает из лично-доверительного характера правоотношений участников общей совместной собственности, делающий их юридически незаменимыми,<sup>12</sup> однако, на наш взгляд, действие данного преимущественного права покупки доли могло бы фактически гарантировать осведомленность одного из сособственников при распоряжении общим совместным имуществом другим сособственником и не допустить установление и действие крайне проблематичной презумпции согласия сособственника при отчуждении общего совместного имущества в Республике Армения.<sup>13</sup> Причем, практика применения преимущественного права при общей совместной собственности известна также немецкому законодателю, о чем будет более детально исследовано ниже.

Более того, из части 3 статьи 224 ГК РА вытекает также, что правила, установленные в ст. 195 ГК РА, о преимущественном праве покупки доли не распространяются также на собственников квартир и/или нежилых помещений в многоквартирных домах. Это было установлено также Кассационным судом РА в ряде своих прецедентных постановлений.<sup>14</sup> Это правило, на наш взгляд, ставит под вопрос эффективность распространения данного института на недви-

жимое имущество, хотя и согласимся с фактической невозможностью в настоящее время закрепить иное правовое регулирование, учитывая тот факт, что в сфере регулирования многоквартирных домов и их управления в настоящее время существуют крайне глубокие и многочисленные проблемы,<sup>15</sup> попытки разрешения которых по сей день предпринимаются в виде законотворческих инициатив.

При рассмотрении права преимущественной покупки доли в праве общей долевой собственности, для нас особый интерес представляет часть 2 ст. 195 ГК РА, где законодатель Армении установил идентичную советскому ГК Арм. ССР 1964г. норму относительно как письменного порядка извещения сособственником других общих долевых собственников о своем намерении продать долю третьему лицу – с указанием цены и других условий продажи, так и сроков их отказа от использования данного права или осуществления его непосредственной реализации (1 месяц для недвижимого имущества и 10 дней для движимого имущества, со дня такого извещения).

Необходимо отметить, что в настоящее время существуют различные точки зрения ученых по поводу характера и юридической природы исследуемого письменного извещения. Некоторые рассматривают его в качестве оферты, так как отчуждающий собственник не просто уведомляет остальных о своем намерении продать свою долю в общем имуществе, но и, фактически, предлагает заключить с ним сделку.<sup>16</sup> Другие же придерживаются того мнения, что отчуждающий собственник лишь информирует других сособственников о своем желании продать долю, и это информирование не несет

<sup>10</sup> Քարսեղյան Տ.Վ., Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք, մաս II, ԵՊՀ հրատ, 2006, էջ 363:

<sup>11</sup> Постановления Кассационного суда РА по гражданским делам номер 3-415(ՎԴ) от 2007г, и ԵԱԼԴ/0758/02/08 от 2009г.

<sup>12</sup> Е.А. Суханов, Гражданское право в 4-х томах, Т. II, М: 2007, “Волтерс Клувер”, с. 133.

<sup>13</sup> М.Г. Эвоян, «Вопросы презумпции согласия сособственника при распоряжении общей совместной собственностью в Республике Армения», Ереван, журнал «Правосудие», август 2017г.

<sup>14</sup> Постановления Кассационного суда РА по гражданским делам номер 3-1577(ՎԴ) от 2007г. и номер ԵՇԴ/1406/02/09 от 2011г.

<sup>15</sup> М.Г. Эвоян, «Вопросы общей долевой собственности при функционировании многоквартирных домов в Республике Армения», Ереван, журнал «Правосудие», декабрь 2017г.

<sup>16</sup> Гаврилов, Э. Преимущественное право покупки// Российская юстиция. 2001., No 2. с. 17.; Сковский, К. Институт преимущественной покупки в российском и зарубежном праве, Хозяйство и право, 2003., No 10, с. 95.

характер оферты.<sup>17</sup> Мы придерживаемся первой точки зрения, так как данное извещение, на наш взгляд, обладает всеми признаками оферты, указанными в ст. 451 ГК РА – оно адресовано определенным лицам, предполагает четкое намерение лица заключить договор в случае акцепта и содержит все существенные условия договора – обозначение товара, конкретных условий его продажи и т. д. Соответственно, к данным отношениям следует применять правила об оферте.

Далее, законодательство Армении, так же, как и России, не устанавливает конкретные детали письменной формы уведомления, однако согласимся с мнением российского цивилиста Л.В. Кузнецовой, что извещение о продаже доли может быть получено другими сосособственниками по почте либо передано им непосредственно с отображением соответствующей росписи извещаемых участников общей собственности о получении такого извещения.<sup>18</sup> Между тем, многие ученые также считают, что наиболее эффективной формой осуществления данного извещения является передача данного извещения через нотариуса.<sup>19</sup> Здесь необходимо отметить, что простая письменная форма, на наш взгляд, вполне достаточна для обеспечения доказательственной базы, однако на ней обязательно должна быть соответствующая роспись сосособственников о ее получении, которая в дальнейшем будет иметь достаточную доказательную силу. Таким образом, при надлежащем извещении и упущении указанных сроков сосособственниками, доля может быть продана любому третьему лицу.

Вышеотмеченное регулирование ч. 2 ст. 195 ГК РА, на наш взгляд, таит в себе немалые риски и является неэффективным с точки

зрения защиты прав долевых собственников. Ниже исследуем каждый аспект вышеуказанной нормы.

Во-первых, при установлении обязанности продающего сосособственника известить других сосособственников о «цене и других условиях продажи», считаем, что здесь отчуждающему долевному собственнику предоставляется крайне широкая дискреция для решения деталей извещения, что может служить основой для злоупотребления правом путем сокрытия важной информации. Так, считаем, что в данной статье необходимо перечислить все существенные аспекты предполагаемой продажи, такие как сроки его осуществления и порядок оплаты, информацию о третьем лице, претендующем на его покупку, и т. д. Это исключит возможность преднамеренного извещения других сосособственников, например, о своем желании продать недвижимость – дом, задолго до предполагаемой продажи, с целью ее вынужденного скорейшего приобретения общими сосособственниками в течение 1 месяца. Более того, установление необходимости включения в извещение информации о лице, намеревающемся купить данное имущество, позволяющей его идентифицировать, позволит не только не допустить злоупотребление отчуждающим сосособственником своих прав, но и даст возможность остальным сосособственникам быть извещенным о лице, которое претендует на становление одного из общих долевых собственников на имущество, принадлежащее им на праве общей долевой собственности.

В российской правовой доктрине существуют как противники, так и сторонники данного подхода. Первые считают, что совершенно необязательно указание в извещении лица, претендующего на приобретение отчуждаемой доли,

<sup>17</sup> Камышанский, В.П. Осуществление преимущественных прав в отношении по отчуждению имущества / КонсультантПлюс. Россия, «ЮрСпектр», Минск, 2016.; Онина, А.А. Преимущественное право покупки в гражданском праве Российской Федерации, Краснодар, 2009, с. 20; Фоков, А.П. Теоретические и практические проблемы распоряжения имуществом, находящимся в общей долевой и совместной собственности// Арбитражный и гражданский процесс, 2003, No 11., с. 5–10.

<sup>18</sup> Кузнецова, Л.В. Некоторые проблемы осуществления преимущественного права покупки доли в праве общей долевой собственности //Журнал российского права., 2006, No 4., с. 82.

<sup>19</sup> Фоков, А.П. Теоретические и практические проблемы распоряжения имуществом, находящимся в общей долевой и совместной собственности// Арбитражный и гражданский процесс, 2003., No 11, с. 7; Корольчук, Е.А. Некоторые проблемы реализации преимущественного права покупки доли в праве общей собственности//Юридический журнал, 2008, No 2., с. 53.

и такового на самом деле может и не быть.<sup>20</sup> Между тем, некоторые ученые разделяют наш подход, устанавливая, что «назначение преимущественного права покупки в праве общей собственности направлено, прежде всего, на сохранение целостности такой собственности и предполагает право сособственников знать персоналию, которая может войти в их состав, поскольку они могут рассматривать такое лицо в качестве нового участника общей собственности.»<sup>21</sup> Более того, схожего мнения придерживается также Французский законодатель, который в 815-14 Кодекса Наполеона установил необходимость продающего сособственника в своем извещении указать конкретные данные о лице, который хочет приобрести его долю в общем имуществе. Это, на наш взгляд, становится крайне актуальным, *inter alia*, при исследовании данной проблемы с точки зрения корпоративных и коммерческих отношений, немалую долю которой составляют вопросы конкуренции на рынке. Таким образом, считаем, что эта информация, зачастую, далеко не безразлична общим долевым собственникам, и в данном вопросе следует принять во внимание как передовой международный опыт, так и исследования ряда ученых и интересы общих долевыми собственниками Армении и закрепить подобную норму в отечественном законодательстве.

Подытоживая, отметим, что армянскому законодателю следует обеспечить более детальное закрепление «других условий продажи», включая в него как сроки и порядок предполагаемого платежа, так и возможность идентификации третьего лица, намеревающегося приобрести отчуждающуюся долю. Эта информация необходима для принятия общими долевыми собственниками решения о реализации своего преимущественного права либо об отказе от него и позволит создать дополнительные гарантии для защиты их прав.

Во-вторых, исследуемое положение не включает каких-либо регулирований относительно порядка осуществления отказа от своего пре-

имущественного права участниками долевой собственности. Следует отметить, что идентичное положение относительно преимущественного права покупки отчуждаемой доли другими сособственниками, предусматривалось в предыдущей редакции ГК РФ. Однако со времен изменений в ГК РФ от 3 июля 2016г. многие нормы были трансформированы. Так, здесь был фактически установлен именно конкретный порядок отказа сособственника от использования преимущественного права покупки, таковым признавая лишь письменную форму отказа. Таким образом, в ст. 250 ГК Российской Федерации конкретно установлено, что в случае наличия такого письменного отказа всех сособственников на реализацию своего преимущественного права, она может быть продана третьему лицу ранее сроков реализации своего преимущественного права путем приобретения доли (сроками, так же как и в РА, являются 1 месяц для недвижимого, и 10 дней для движимого имущества). Таким образом, считаем, что в данном вопросе законодателю Республики Армения следует осуществить рецепцию норм российского права и закрепить подобную норму – дабы исключить недоразумения относительно формы отказа общих долевыми собственниками, обеспечить эффективность функционирования данного института, а также поднять доказательственный уровень при конкретных спорах. Между тем, здесь может возникнуть также необходимость предусмотрения порядка и возможности изменения своего решения сособственниками, уже известившими об отказе от своих преимущественных прав.

В – третьих, считаем, что законодателю РА следует рассмотреть возможность трансформации императивной нормы, закрепляющей конкретные сроки реализации своего преимущественного права путем приобретения данной доли, в диспозитивную норму. То есть, устанавливая сроки в 1 месяц для недвижимого имущества и 10 дней для движимого имущества, в то же время установить «если иное не предусмотрено согла-

<sup>20</sup> Гаврилов, Э. Преимущественное право покупки, Российская юстиция, 2001, № 2, с. 16.

<sup>21</sup> А.А.Капитанова, «Преимущественное право покупки доли в праве общей собственности», Экономические и юридические науки, Конституционное и гражданское право, Минск, N 6, 2017г., с. 211.



шением между общими долевыми собственниками». Это, на наш взгляд, позволит учесть конкретные интересы общих долевых собственников в зависимости от каждой конкретной ситуации, реализовать принцип свободы договора путем предоставления сторонам-сособственникам возможности самим установить порядок и сроки приобретения доли отчуждающего сособственника другими долевыми собственниками.

В-четвертых, хотя это и можно предположить из исследуемой нами нормы, однако считаем, что и здесь необходимо четко установить, что при нереализации или отказе от своих преимущественных прав другими долевыми собственниками отчуждающий собственник может осуществить ее продажу исключительно на тех же условиях, о которых были извещены другие сособственники. И если условия продажи изменятся, то общие долевые собственники должны быть заново извещены. Закрепление подобного положения, на наш взгляд, исключит существующий пробел в законодательстве и обеспечит единообразие в понимании и толковании данной нормы.

Таким образом, считаем, что законодательство РА, закрепляющее порядок осуществления извещения отчуждающим сособственником, а также отказ от своего преимущественного права или его реализацию другими долевыми собственниками, нуждается в серьезном реформировании.

Более того, для досконального понимания сущности исследуемого права, считаем, что следует обратиться также к его регулированию в странах, являющихся яркими представителями романо-германской правовой семьи: Германии и Франции.

Итак, в Германии институт общей собственности устанавливается Германским Гражданским Уложением от 18 августа 1896 года.<sup>22</sup> Здесь, наряду с довольно скудным регулиро-

ванием общей долевой собственности (ст. 1008-1011), в разделе об обязательственном праве устанавливается также институт “долевой общности” (ст. 741-758). Из анализа вышеизложенных положений для нас примечательным является тот факт, что немецкий законодатель не закрепил наличие преимущественного права долевых собственников на приобретение доли при ее отчуждении одним из сособственников в пользу третьего лица. В частности, здесь любой долевой собственник имеет право обременить свою долю так, как пожелает, и даже продать ее часть.<sup>23</sup> Уникальным, однако, для нас в немецком законодательстве является тот факт, что здесь право преимущественной покупки применяется при отношениях общей совместной собственности наследников. Так, ст. 2032 ГГУ четко указывает, что при отчуждении своей доли одним из них остальные сонаследники имеют право преимущественной покупки этой доли. Таким образом, очевидно, что при общей совместной собственности законодатель Германии придает определенную значимость предоставлению возможности другим сонаследником приобрести доли в общем совместном имуществе. Причем ГГУ устанавливает срок для осуществления этого – два месяца. Данное право, согласно ст. 2034 ГГУ, является наследуемым. Это является уникальным и неизвестным регулированием как для Армении, так и России, которое, на наш взгляд, с необходимостью должна быть в дальнейшем учтена при рассмотрении возможности распространения преимущественного права на отношения общей совместной собственности.

Во Франции же данный институт регулируется Гражданским кодексом Наполеона от 1804г.<sup>24</sup> Среди ученых бытует мнение, что Французские законодатели негативно воспринимали право общей собственности,<sup>25</sup> и французская

<sup>22</sup> German Civil Code/ <https://www.gesetze-im-internet.de/bgb/index.html>; <http://www.fd.ulisboa.pt/wp-content/uploads/2014/12/Codigo-Civil-Alemao-BGB-German-Civil-Code-BGB-english-version.pdf>;

<sup>23</sup> Wieling H.J. Sachenrecht. Bd., Berlin; Heidelberg: Springer, 2006. с. 284.

<sup>24</sup> Гражданский кодекс Наполеона от 1804г,

<https://www.legifrance.gouv.fr/affichCode.do?cidTexte=LEGITEXT000006070721&dateTexte=20130701>; Гражданский кодекс Франции (Кодекс Наполеона) / Пер. В. Захватаев /: Истина, 2006. с. 303-304.

<sup>25</sup> Филатова У.Б., Институт права общей собственности в странах романо-германской правовой семьи (Германии, Австрии, Франции, Швейцарии Франции и России), Диссертация на соискание степени д. ю. н. М: 2015, с. 94.

наука всегда считала, что уникальность института собственности является препятствием для общей собственности.<sup>26</sup> Однако на проявление и регулирование исследуемого нами преимущественного права это не повлияло.

Следует отметить, что законодательство Франции намного схоже с правовым регулированием данного преимущественного права в Армении и России. Так, вышеисследованная ст. 815-14 Кодекса Наполеона устанавливает порядок и форму извещения,<sup>27</sup> после которого каждый сособственник в течение месяца имеет право использовать свое преимущественное право. Однако здесь устанавливаются также сроки реализации доли после соответствующего уведомления – 2 месяца со дня отправки уведомления. Если собственник, желающий ее приобрести, пропустит этот срок, то 15 дней спустя его заявление о желании воспользоваться преимущественным правом будет недействительно. В этом случае продавец может потребовать от него возмещения убытков. Если же преимущественным правом покупки хотят воспользоваться не один, а несколько сособственников, то они вместе приобретают продаваемую часть имущества пропорционально доле каждого из них в неделимом имуществе.

Таким образом, по сравнению с французским законодательством, в РА и РФ механизмы защиты исследуемого преимущественного права, а также неущемления прав продавца доли, недостаточно отрегулированы. Здесь практика Франции представляется достаточно полезной. В этом смысле, достаточно эффективно, на наш взгляд, будет принятие норм относительно сроков заключения договора купли-продажи в случае изъявления желания воспользоваться своим преимущественным правом (на сего-

дняшний день в РА и РФ заключение подобного договора должно происходить немедленно, что, на наш взгляд, нецелесообразно), а также установление регулирований на случай изъявления подобного желания несколькими сособственниками.

Таким образом, подытоживая наше исследование, отметим, что в Республике Армения законодательство в сфере преимущественного права общих долевых собственников на покупку отчуждаемой доли нуждается в реформировании путем осуществления законодательных изменений и установления:

- обязательного требования идентификации потенциальных покупателей – третьих лиц при извещении общих долевых собственников,
- письменной формы отказа от преимущественного права покупки доли,
- возможности и порядка изменения своего решения лицами, наделенными преимущественным правом,
- диспозитивной нормы относительно сроков реализации своего преимущественного права путем покупки отчуждаемой доли,
- возможности отчуждающего собственника продать долю третьему лицу исключительно на тех же условиях, о которых были извещены сособственники,
- норм относительно сроков заключения договора купли-продажи при изъявлении общим долевым собственником желания воспользоваться своим преимущественным правом, и
- регулирований на случай изъявления подобного желания несколькими общими собственниками.

<sup>26</sup> Colin A., Capitant H. Cours elementaire de droit civil Francais/Paris: Librairie Dalloz. S. 35.

<sup>27</sup> См. выше, с. 6.

**ԱՐԹՈՒՐ ՆԱԶԱՐԵԹՅԱՆ**

Հայ-ռուսական համալսարանի քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական դատավարության իրավունքի ամբիոնի հայցորդ

**ՎՃՌԱՔԵԿ ՎԱՐՈՒՅԹԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆՂԻՐՆԵՐԸ ԸՍՏ ՀՀ ՆՈՐ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍՈՐԷԻ**

Վճռաքեկ վարույթի նպատակների և խնդիրների հարցն ունի էական նշանակություն, քանի որ վճռաքեկ դատարանում վարույթի բովանդակությունը և նշանակությունը մեծ հաշվով որոշվում են դրա առջև դրված նպատակներից և դրանց հետ կապված խնդիրներից ելնելով:

Նպատակների առաջադրումը, դրանց դերը դատավարական իրավական համակարգում որոշելը հնարավորություն են տալիս ոչ միայն հստակ պատկերացնել վճռաքեկ վարույթի ընդհանուր նշանակությունը, այլ նաև հստակեցնել դատարանի և մյուս սուբյեկտների տրամաբանված գործողությունների ուղղվածությունը, արդյունավետ օգտվել վարույթը կարգավորող դատավարական նորմերից:

Դատական ակտերն օրենքով սահմանված լիազորությունների շրջանակում վերանայելու միջոցով վճռաքեկ դատարանը՝

- 1) ապահովում է օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունը,
- 2) վերացնում է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումները (ՀՀ Սահմանադրության 171-րդ հոդվ.):

ՀՀ քաղաքացիական դատավարության նոր օրենսգիրքը<sup>1</sup> դատավարության նպատակի և խնդիրների հասկացությունը չի տալիս, սակայն դատավարության օրենսդրության ընդհանրական վերլուծությունը վկայում է, որ նշված

եզրույթները թեկուզև նման են իրար, բայց չեն նույնանում: Մեր կարծիքով՝ լավ կլիներ, որ օրենսդիրը նոր Քաղ. դատ. օր.-ում վերարտադրեր նախկին Քաղ. դատ. օր. 225 հոդվածի դրույթը վճռաքեկ վարույթի նպատակի մասին:

Լեզվաբանության մեջ նպատակի տակ հասկացվում է այն, ինչին ձգտում են հասնել, ինչն ուզում են իրագործել, ինչը պետք է, ցանկալի է, իսկ խնդրի տակ՝ այն, ինչ որ տրվում՝ առաջարկվում է կատարելու, այն, ինչ որ պահանջում է կատարում՝ լուծում<sup>2</sup>:

Խոսելով դատավարության նպատակների և խնդիրների մասին, դատավարագետ Գ.Ա. Ժիլինը նշում է, որ նպատակը դա դատավարական գործունեության ցանկալի արդյունքն է, իսկ խնդիրը՝ այդ արդյունքին հասնելու միջոցը<sup>3</sup>:

Ի. Լ. Պետրովսինը «նպատակ» և «խնդիր» հասկացությունների միջև տեսական տարբերությունը տեսնում է նրանում, որ նպատակը դա համակարգի իրական պահանջների ճանաչման արդյունքն է, «ապագայի իրական մոդելը», որին պետք է ձգտել, իսկ խնդիրը՝ որոնվող տվյալները ելակետային տվյալների հիման վրա ալգորիթմը գտնելու պահանջը (առաջարկն) է<sup>4</sup>:

Վճռաքեկ վարույթը նույնպես դատավարության ինքնուրույն փուլ է՝ դատավարական այն գործողությունների և այն իրավահարաբերությունների համակցությամբ, որոնք ուղղված են միևնույն (մոտակա) նպատակին հասնելուն: Այս վարույթում Վճռաքեկ դատարանը վճռա-

<sup>1</sup> Ընդունվել է 2018թ. փետրվարի 9-ին և գործողության մեջ է դրվել 2018թ. ապրիլի 9-ից (ՀՀ ՊՏ №16 (1374), 05.03.18թ.): Այսուհետ՝ Քաղ. դատ. օր.:

<sup>2</sup> Տեն Աճառյան Հ. Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, երկրորդ հատոր, Երևան, 1972, Ձ-Ծ, էջ 535, չորրորդ հատոր, Երևան, 1980, Յ-Ֆ, էջ 46:

<sup>3</sup> Տեն Жилин Г.А. Цели гражданского судопроизводства и их реализация в суде первой инстанции. М., 2000, էջ 16,64:

<sup>4</sup> Տեն Петрухин И.Л., Батуров Г.П., Морщакова Т.Г. Теоретические основы эффективности правосудия. М., 1979, էջ 48,56, Стрельцова Е.Г. О концепции гражданского процесса// Российский ежегодник гражданского и арбитражного процесса. 2007, N 6:

բեկ բողոքի հիման վրա Քաղ. դատ. օր.-ով նախատեսված դեպքերում և կարգով քննում է վերաքննիչ դատարանի եզրափակիչ և միջանկյալ դատական ակտերի դեմ բերված վճռաբեկ բողոքները:

Հայաստանի Հանրապետությունում բարձրագույն դատական ատյանը, բացառությամբ սահմանադրական արդարադատության ոլորտի, Վճռաբեկ դատարանն է: Վճռաբեկ դատարանի գործունեության նպատակները որպես բարձրագույն ատյանի դատարան՝ ամրագրված է ինչպես Սահմանադրությամբ, այնպես էլ ՀՀ դատական օրենսգրքի սահմանադրական օրենքով և Քաղ. դատ. օր.-ով:

Նոր Քաղ. դատ. օր. 394-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն վճռաբեկ բողոքն ընդունվում է քննության, եթե Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության համար, առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում:

Բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության համար, եթե 1) առնվազն մեկ այլ գործով ստորադաս դատարանի օրինական ուժի մեջ մտած դատական ակտում միևնույն նորմը կիրառվել է կամ չի կիրառվել հակասող մեկնաբանությամբ, 2) բողոքարկվող դատական ակտում որևէ նորմի մեկնաբանությունը հակասում է Վճռաբեկ դատարանի որոշման մեջ տվյալ նորմին տրված մեկնաբանությանը, 3) դատարանի կիրառած նյութական կամ դատավարական իրավունքի նորմի կապակցությամբ առկա է իրավունքի զարգացման խնդիր:

Օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունը Վճռաբեկ դատարանն ապահովում է, եթե առկա է իրավունքի զարգացման խնդիր, կամ տարբեր գործերով դատարանների կողմից նորմատիվ ի-

րավական ակտը տարաբնույթ է կիրառվել կամ չի կիրառվել տարաբնույթ իրավաընկալման հետևանքով (ՀՀ դատական օրենսգրքի 29-րդ հոդվ. 3-րդ մաս):

Վ.Կ. Պուչինսկին այդ կապակցությամբ նշում է, որ «որոշման վճռաբեկ վերանայումը կարևոր մեթոդ է միասնական դատական քաղաքականության և պրակտիկայի ձևավորման համար<sup>5</sup>» Նապոլեոն Առաջինի բնորոշմամբ Ֆրանսիայում վճռաբեկ ատյանի այդպիսի գործունեությունը ինչպես նախկինում, այնպես էլ իր գոյության և զարգացման ընթացքում, առաջին հերթին ուղղված է լինելու «օրենսդրի հենարանը» իրավակիրառի ձևով, օժանդակելով պետության և տնտեսության մեջ ապահովելու իրավակարգի ռեժիմը<sup>6</sup>:

Դատական ակտի օրինականության ստուգումը և հսկողությունը ստորադաս ատյանի դատարանների կողմից օրենքը միատեսակ կիրառելու ուղղությամբ ցույց է տալիս վճռաբեկության հիմնական նպատակը՝ ամրապնդել օրինականությունը և իրավակարգը, աջակցել օրենքի կիրառման միասնականությանը, ինչպես նաև ձևավորել հարգալից վերաբերմունք օրենքի և դատարանի հանդեպ: Միայն այս դեպքում է, որ վճռաբեկ դատարանը կհանդիսանա հանրային-իրավական շահերի առանձնահատուկ պահպան, կպաշտպանի գործին մասնակցող անձանց շահերը հնարավոր խախտումներից, ինչպես նաև ստորադաս դատարանների սխալներից: Օրինական ուժի մեջ մտած անօրինական դատական ակտը բերում է պետական իշխանության նկատմամբ վստահության կորստի, ուստի պետությունը պարտավոր է ոչ միայն կատարել իր ընդունած օրենքները, այլ նաև արդյունավետ պաշտպանել իր հասարակության անդամների շահերը, բեկանել (փոփոխել) պետական իշխանության մարմինների ընդունած անօրինական ակտերը, այդ թվում՝ դատարանի որոշումները:

Վճռաբեկ ատյանի գործունեության առանձնահատուկ նպատակն առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների դատավարական և արտադատավարական ղեկավարումն է:

<sup>5</sup> Տե՛ս Пучинский В.К. Кассационное производство в советском гражданском процессе. М., 1973, էջ 5:

<sup>6</sup> Սույն մեջբերումը վերցված է Ռ.Գ. Պետրոսյանի Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարություն գրքից: Տե՛ս չորրորդ հրատ. Երևան, Ոսկան Երևանցի, 2012, էջ 520:

Դատավարական ղեկավարումը վճռաբեկ դատարանն իրականացնում է դատարանի անկախության և միայն օրենքին ենթարկվելու սկզբունքին հետևելով և բացառապես իր լիազորությունների շրջանակում (Քաղ. դատ. օր. 404-405-րդ հոդվածներ): Նա իր ակտում ձևակերպում է կատարման ենթակա ցուցումներ, որոնք հասցեագրված են այն դատարանին, որի որոշումը բեկանվում է և գործը ուղարկվում է նոր քննության (Քաղ. դատ. օր. 405 հոդվ. 1-ին մասի 2-րդ և 8-րդ կետեր):

Բացի վերը նշված սկզբունքից, նոր Քաղ. դատ. օրենսգրքով դատական ակտերը վճռաբեկության կարգով վերանայվում են քաղաքացիական դատավարության հիմնական սկզբունքների՝ օրենքի և դատարանի առջև հավասարության, տնօրինականության, մրցակցության, գործերի քննության բանավորության, դատավարության լեզվի, դատական վարույթի հրապարակայնության, դատավարական իրավունքների չարաշահման անթույլատրելիության պահպանմամբ: Վերջին սկզբունքը Քաղ. դատ. օր.-ում նոր է նախատեսվել, այն նախորդ Քաղ. դատ. օր.-ում առկա չէր:

Դատավարական իրավունքների չարաշահման անթույլատրելիության սկզբունքը հնարավորություն է տալիս, որպեսզի դատավարության մասնակիցները բարեխղճորեն օգտվեն իրենց դատավարական իրավունքներից և բարեխղճորեն կատարեն իրենց դատավարական պարտականությունները: Դատավարական իրավունքների կամ այլ հնարավորությունների չարաշահում թույլ տված անձանց նկատմամբ կիրառվում են չարաշահմանը համաչափ՝ Քաղ. դատ. օր.-ով նախատեսված դատական սանկցիաներ կամ օրենքով նախատեսված իրավական ներգործության այլ միջոցներ (հոդվ. 14-րդ.): Սակայն, ելնելով վճռաբեկ վարույթի առանձնահատկություններից, որոշ սկզբունքներ այստեղ գործում են ոչ լրիվ ծավալով: Դա մասնավորապես վերաբերում է բանավորության, տնօրինչականության, մրցակցության սկզբունքներին:

Արտադատավարական ղեկավարումը չի բխում քաղաքացիական դատավարության կոնկրետ նորմերից, այն ամրագրված չէ օրենքով, միևնույն ժամանակ նա չի հակասում դատական պրակտիկայի պահանջներին: Այդպիսի ղեկավարումը կայանում է հետևյալում. Վճռաբեկ դատարանը համակարգում է ստորադաս ատյանի դատարանների գործունեությունը կոնֆերանսների, խորհրդակցությունների միջոցով, քննարկելով իրավունքի կիրառման հետ կապված բարդ հարցերը, որոնց արդյունքների հիման վրա ընդունվում են համապատասխան հանձնարարականներ և հրապարակվում են դատական պրակտիկայի նյութեր<sup>7</sup>:

Խոսելով վճռաբեկ վարույթի խնդիրներից, անհրաժեշտ է հաշվի առնել, որ դատավարական դոկտրինան անդրադառնում է բարձրագույն ատյանի դատարանի կողմից դատական ակտերի օրինականության ստուգման խնդիրներին, վճռաբեկ վարույթի խնդիրների վերաբերյալ արտահայտելով տարբեր տեսակետներ:

Ի.Գ. Արսենովի կարծիքով վճռաբեկ վարույթում անհրաժեշտ է ընդգծել մասնագիտական (դատավարական) խնդիրը՝ դատական ակտերի արագ և ճիշտ վերանայումը (ստուգումը), դատական սխալների վերացումը, իսկ ընդհանուր նպատակի իրացմամբ՝ պաշտպանել խախտված իրավունքները: Նա նշում է, որ Վճռաբեկ դատարանն իր գործունեությամբ պետք է ապահովի դատավարական խնդիրների լուծումը և հասնի արդարադատության վերջնական նպատակին<sup>8</sup>:

Վճռաբեկ վարույթի խնդիրները, ինչպես նաև նպատակները չեն կարող լինել դատավարության նպատակներից անջատ, քանի որ այդ դեպքում դրանք կկորցնեն իրենց առարկայական նշանակությունը և կվերածվեն անբովանդակ ձևականության, որն իր հետ կբերի արդարադատություն իրականացնելու իրական գործառույթի խաթարման:

Վճռաբեկ դատարանի անմիջական խնդիրներից մեկը ստորադաս ատյանի դատարանի

<sup>7</sup> Стѣн Кожемяко А.С. Кассационное производство в арбитражном суде: теория и практика. М., 2004, Алиэскеров М. А. Проблемы кассационного производства по гражданским делам. дисс... канд. юрид. наук. М., 2000, էջ 31-32:

<sup>8</sup> Стѣн Арсенов И. Г. Полномочия суда кассационной инстанции в арбитражном процессе. Автореф. дисс... канд. юрид. наук. Екатеринбург, 2001, էջ 15-16:

դատական ակտերը ստուգելու միջոցով օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու մեջ է, որպեսզի նրանց կողմից ընդունվի օրինական, հիմնավորված և պատճառաբանված որոշումներ:

Վճռաբեկ դատարանի հաջորդ խնդիրն է՝ վերացնել մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումները: 2015թ. սահմանադրական փոփոխություններով ամրագրվեց նոր՝ մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումները վերացնելու գործառնությունը բխող իրավական նորմ հնարավորություն տալով անձանց վճռաբեկ բողոք ներկայացնելու նաև այս հիմքով:

Դատավարության օրենսդրությանը համաձայն առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում, եթե բողոքարկվող դատական ակտը կայացնելիս դատարանը թույլ է տվել նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի այնպիսի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը (ՀՀ դատական օրենսգրքի 29-րդ հոդվ. 4-րդ մաս, Քաղ. դատ. օր. 394-րդ հոդվ. 3-րդ մաս):

Վճռաբեկ վարույթի խնդիրներից է նաև ողջամիտ ժամկետում գործի (բողոքի) արդար և անաչառ քննությունը:

Դատարանների գործունեությունը պետք է կազմակերպվի այնպես, որ ապահովվի յուրաքանչյուրի իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանությունը՝ օրենքի հիման վրա ստեղծված անկախ և անաչառ դատարանի կողմից գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության միջոցով (ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվ., ՀՀ դատական օրենսգրքի 8-րդ հոդվ.):

Ի տարբերություն նախորդ Քաղ. դատ. օր. 238-րդ հոդվածի, որում ամրագրված էր, որ վճռաբեկ դատարանում գործի քննությունը իրականացվում էր դատական նիստում, նոր Քաղ. դատ. օր.-ով վճռաբեկ բողոքի քննությունը կարող է իրականացվել նաև գրավոր ընթացակարգով: Վճռաբեկ դատարանը վերաքննիչ դատարանի դատական ակտերի դեմ ներկայացված և վարույթ ընդունված վճռաբեկ բո-

ղոքները քննում և դրանց վերաբերյալ որոշումները կայացնում է գրավոր ընթացակարգով, բացառությամբ այն դեպքերի, երբ նա գալիս է եզրահանգման, որ անհրաժեշտ է վճռաբեկ բողոքի քննությունն իրականացնել դատական նիստում, որի մասին կայացվում է որոշում (Քաղ. դատ. օր. 401-րդ հոդվ.):

Վճռաբեկ բողոքը գրավոր ընթացակարգով կամ դատական նիստում քննելու հարցն օրենսդիրը թողել է վճռաբեկ դատարանի հայեցողությանը, որը, մեր կարծիքով, սահմանափակում է մարդու արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի իրականացումը: Բողոք բերողը և գործին մասնակցող մյուս անձինք նման պարագայում զրկվում են վճռաբեկ բողոքը դատական նիստում քննելու միջնորդություն ներկայացնելու հնարավորությունից:

Վերը նշվածի կապակցությամբ ՀՀ սահմանադրական դատարանն իր որոշման մեջ արձանագրել է, որ «Անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքից անձանց վրա պետության պոզիտիվ պարտականությունը՝ ապահովել այն թե՛ նորմաստեղծ, թե՛ իրավակիրառման գործունեություն իրականացնելիս: Դա ենթադրում է մի դեպքում օրենսդրի պարտականությունը՝ լիարժեք դատական պաշտպանության հնարավորություն և մեխանիզմներ ամրագրել օրենքներում, մյուս կողմից՝ իրավակիրառողի պարտականությունը՝ առանց բացառությունների քննարկման ընդունել անձանց՝ օրինական կարգով իրենց ուղղված դիմումները (միջնորդությունները, որոնք օբյեկտիվորեն առկա իրավական անհրաժեշտություն են, հետապնդում են իրավաչափ նպատակներ, այն է՝ հնարավորություն են տալիս իրավասու մարմինն քննության առարկա դարձնել միջնորդության մեջ ներառված խնդրանքը), որոնցով նրանք հայցում են իրավական պաշտպանություն իրենց իրավունքների ենթադրյալ խախտումներից: Ակնհայտ է, որ այս պահանջն առաջին հերթին վերաբերում է դատարաններին, քանի որ այդ մարմիններն են, որ օժտված են իրավական պաշտպանության համապարփակ լիազորություններով»<sup>9</sup>:

Սահմանադրական դատարանն իրավական պետության սկզբունքների և արդարադա-

<sup>9</sup> Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի 28.11.2007թ. ՍԴՈ-719 որոշումը:

տության մատչելիության իրավունքի համատեքստում առանձնակիորեն կարևորում է վճարեկ դատարանի մատչելիության իրավունքը, քանի որ վերջինիս որոշումները՝ պայմանավորված այդ դատարանի սահմանադրական գործառույթներով, կարևորվում են ոչ միայն դատավարության կողմերի շահերի, այլ նաև ողջ հանրության շահերի տեսանկյունից<sup>10</sup>:

Մեր կարծիքով՝ վճարեկ բողոքը գրավոր ընթացակարգով քննելու դեպքում բողոք բերողը և գործին մասնակցող մյուս անձինք գրկվում են դատարանում լսված լինելու իրավունքից, որը համարվում է արդարադատության իրականացման կարևորագույն սկզբունքի խախտում:

Վճարեկ դատարանն իր 28.11.2014թ. թիվ ԵԿԴ/ 1118/02/12 քաղաքացիական գործով որոշմամբ արձանագրում է, որ ՀՀ քաղ. դատ. օր. 228-րդ հոդվածի 2-րդ կետում (նոր Քաղ. դատ. օր. 365-րդ հոդվ.) թվարկված մյուս ինստիտուտները վերաբերում են «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայով, ՀՀ Սահմանադրությամբ և օրենքով սահմանված արդարադատության սկզբունքներին՝ օրենքի հիման վրա ստեղծված անկախ և անաչառ դատարան, դատարանի օրինական կազմ, լսված լինելու իրավունք, դատավարության լեզու և այլն:

Վճարեկ բողոքի քննությունը դատական նիստում իրականացնելու դեպքում գործին մասնակցող անձինք հնարավորություն կունենան բացատրություններ տալու բողոքի հիմքերի և հիմնավորումների, գործի հետ կապված այլ հարցերի (փաստերի) վերաբերյալ, որը կարող է էական նշանակություն ունենալ բողոքի քննության համար, հաշվի առնելով այն հանգամանքը, որ այժմ վճարեկ բողոք կարող է բերվել առանց փաստաբանի (ներկայացուցիչի) և բողոքաբերը, չլինելով մասնագիտությամբ իրավաբան, ելնելով վճարեկ վարույթում բողոք բերելու Քաղ. դատ. օր-ով նախատեսված առանձնահատկություններից, հնարավոր է, որ բողոքում ոչ ամբողջական ներկայացնի բողոքի հիմքերի և հիմնավորումների հետ կապված բոլոր փաստական և իրավական հանգամանքները:

Սահմանադրական դատարանն իր 10.12.2013թ. ՍԴՕ-1127 որոշման մեջ վկայակոչել է դատարանի մատչելիության սահմանափակումների վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումը, համաձայն որի՝ պետությունը դատարան դիմելու իրավունքից օգտվելու համար կարող է սահմանել որոշակի պայմաններ, «... պարզապես պետության կողմից կիրառված սահմանափակումները չպետք է այն կերպ կամ այն աստիճանի սահմանափակեն անձի՝ դատարանին դիմելու մատչելիության իրավունքը, որ վնաս հասցվի այդ իրավունքի բուն էությանը: Բացի այդ, սահմանափակումը Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասին չի համապատասխանի, եթե այն իրավաչափ նպատակ չի հետապնդում և եթե կիրառված միջոցների և հետապնդվող նպատակի միջև չկա համաչափության ողջամիտ հարաբերակցություն» (Case of Khalfaoui v. France, application no. 34791/97, 14/03/2000):

Հաշվի առնելով վերը շարադրվածը, առաջարկում ենք վերաքննիչ բողոքի քննությունը կարգավորող Քաղ. դատ. օր 374-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի իրավակարգավորումները նախատեսել նաև վճարեկ վարույթին վերաբերող Քաղ. դատ. օր 401-րդ հոդվածում, հետևյալ խմբագրությամբ.

**«Հոդված 401 Վճարեկ դատարանում բողոքի քննության կարգը**

**1. Վճարեկ դատարանը վերաքննիչ դատարանի դատական ակտերի դեմ ներկայացված և վարույթ ընդունված վճարեկ բողոքները քննում և դրանց վերաբերյալ որոշումները կայացնում է գրավոր ընթացակարգով, բացառությամբ այն դեպքերի, երբ վճարեկ դատարանը գործին մասնակցող անձի միջնորդության հիման վրա կամ իր նախաձեռնությամբ եկել է եզրահանգման, որ անհրաժեշտ է վճարեկ բողոքի քննությունն իրականացնել դատական նիստում:**

**2. Վճարեկ բողոքը դատական նիստում քննելու վերաբերյալ միջնորդությունը գործին մասնակցող անձը կարող է ներկայացնել վճարեկ բողոքում կամ վճարեկ բողոքի պատասխանում »:**

<sup>10</sup> Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի 08.10.2008թ. ՍԴՈ-765 որոշումը:

Այս լրացումը հուսալի երաշխիք կդառնա դատական պաշտպանության իրավունքի առավել ամբողջական իրականացման համար՝ ապահովելով անձի արդար դատաքննության իրավունքը:

Այսպիսով, ի տարբերություն առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների, վճռաբեկ դատարանի բացառիկ իրավասությունն է ապահովել օրենքի միատեսակ կիրառությունը և այդ առաքելությունն իրականացնելիս նպաստել իրավունքի զարգացմանը: Մասնավորապես՝ օրենքի միատեսակ կիրառության գործառույթն իրականացնելիս ապահովվում է միասնական դատական պրակտիկա, վեր հանելով գործող օրենսդրության կիրառման հետ կապված խնդիրները, բացահայտվում է դրանցում առկա թերություններն ու բացերը, որոնց կապակցությամբ իր նախադեպային որոշումներում վճռաբեկ դատարանն արտահայտում է թերություններն ու բացերը կարգավորող ստո-

րադաս ատյանի դատարանների համար պարտադիր իրավական դիրքորոշումներ: Պատահական չէ, որ օրենսդիրը իրավական նորմերը կատարելագործելու, փոփոխելու կամ լրացնելու ժամանակ հաշվի է առնում նաև վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումներով արտահայտած իրավական դիրքորոշումները: Եվ որ ամենակարևորն է իրավական պետության տեսանկյունից, 2015թ. սահմանադրական փոփոխություններով և նոր Քաղ. դատ. օր-ով վճռաբեկ դատարանին նոր իրավունք վերապահվեց՝ վերացնել մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումները, որը հնարավորություն տվեց բողոք բերել նաև այս հիմքով: Այս դրույթը կամրապնդի օրինականությունն ու իրավակարգը պետության ներսում, արժևորելով մարդու իրավունքներն ու ազատությունները որպես հիմնարար և բարձրագույն արժեքներ:





**ԱՆՆԱ ՀԱԿՈՐՅԱՆ**

ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտ,  
հայցորդ

**ՊԱՏԱԿԱՆ ՆԱԽԱՂԵՊԸ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ**

Անգլիայի նախադեպի դոկտրինան ցանկացած օրենքի սահմանման կապակցությամբ բարձրացնում է որոշակի հարցեր<sup>1</sup>: Դրանք սահմանափակվում են հետևյալ երկու հարցի առաջադրմամբ. 1) արդյոք առաջարկված սահմանումը ներառում է գործերի rationes decidendi-ն, ինչպես օրենսդրության բովանդակությունը, 2) արդյոք առաջարկված սահմանումը ներառում է այն կանոնները, որոնց միջոցով գործի ratio decidendi-ն ձեռք է բերում ազդեցիկ ուժ, այսինքն՝ նախադեպային բնույթ և իրավական ուժ: Եթե առաջին հարցի պատասխանը բացասական է, ապա սահմանումը պետք է մերժվի, քանի որ կիրառելիության հարցը դիտարկվում է հենց Անգլիայի իրավական համակարգում: Սակայն երկրորդ հարցի բացասական պատասխանը կարող է չհանգեցնել օրենքի առաջարկված սահմանման մերժմանը:

Ratio decidendi-ի և վերջինիս իրավական ուժ հաղորդող կանոնի միջև գոյություն ունի տարբերություն, որը նման է ստատուտի բովանդակության վրա հիմնված կանոնի և այդ ստատուտին իրավական ուժ հաղորդող կանոնի միջև գոյություն ունեցող տարբերությանը: Հնարավոր է հավաստել, որ նշված տարբերությունը բավական է, որպեսզի հիմք ծառայի օրենքի սահմանումից երկրորդ տեսակի կանոնի բացառման համար:

Անգլիացի հայտնի գիտնական, դատավոր Սալմոնդի հայեցակարգի համաձայն՝ օրենքը բաղկացած է արդարադատության դատարանների կողմից ճանաչված և գործածված կանոններից<sup>2</sup>: Նշվածը ընդհանուր սահմանում է, քանի որ ընդգրկում է դատարանների փաստացի եզրակացությունները հիմնավորող պատճառաբանության պարզ կանոնները:

Վերոնշյալ սահմանման վերաբերյալ Սալ-

մոնդը գրել է. «Յուրաքանչյուր իրավական համակարգում պետք է տարանջատել այն վերջնական սկզբունքները, որոնցից բխում են մնացած բոլորը, որոնք էլ, իրենց հերթին, գոյություն ունեն ինքնուրույն: Այն կանոնը, որ անձը չի կարող հեծանիվ վարել հետիոտնային արահետներով, կարող է ամրագրված լինել ենթաօրենսդրական ակտերում: Այն կանոնը, որ այդ ենթաօրենսդրական ակտերն օժտված են իրավական ուժով, ընդունված է խորհրդարանական ակտով, սակայն որտեղից է առաջանում այն կանոնը, որ Խորհրդարանի ակտերն ունեն իրավական ուժ: Սա իրավական առումով վերջնական է, սակայն ունի միայն պատմական, այլ ո՛չ իրավական աղբյուր: Սահմանադրագետ պատմաբանները կարող են տեղյակ լինել դրա ծագման մասին, բայց իրավաբանները դա ընդունում են որպես ինքնուրույն գոյություն ունեցող: Ոչ մի ստատուտ չի կարող Խորհրդարանին շնորհել այսպիսի ուժ, քանի որ դա նշանակում է ենթադրել և գործել հարկադրական իրավասությամբ:

Դատական որոշումներին իրավական ուժ շնորհող կանոնը, իրավական առումով, նույնպես վերջնական է և անկախ: Ոչ մի ստատուտ դա չի սահմանում: Դա, անշուշտ, ճանաչված է շատ նախադեպերի կողմից, սակայն նույնիսկ նախադեպը չի կարող իրավական ուժ հաղորդել մեկ այլ նախադեպի: Առաջին հերթին՝ հարկ է տիրապետել այդ իշխանությանը՝ դա շնորհելու իրավասություն ունենալու համար: Գիտական ուսումնասիրություններն ընդգծում են, որ իրավական համակարգը կարող է ճանաչել դրանցից յուրաքանչյուրը, սակայն կրում է առնվազն մեկը ճանաչելու պարտականություն: Ցանկացած վերջնական իրավական աղբյուրից հնարավոր է ստեղծել մեկ ամբողջական օրենք, բավական է միայն այդ աղբյուրի գոյու-

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 107 2018

<sup>1</sup> Մանրամասն տե՛ս Богдановская И. Ю., Прецедентное право, НАУКА, М., 1993:  
<sup>2</sup> Տե՛ս [http://www.legalserviceindia.com/articles/torts\\_s.htm](http://www.legalserviceindia.com/articles/torts_s.htm)

թյունը: Օրինակ՝ ցանկացած ժամանակ ստատուտը կարող է նախադեպի գործողությանը շնորհել ստատուտային ուժ և այդպիսով աստիճանաբար դարձնել իրավունքի դերիվատիվ աղբյուր:»<sup>3</sup>:

Հետևաբար՝ այս տեսակետի համաձայն՝ դատարանը պարտավոր է ճանաչել վերոնշյալ կանոնների պարտադիրությունը, քանի որ դրանք բխում են իրավական համակարգում ընդունված վերջնական սկզբունքներից: Անգլիայի իրավական համակարգում դա նշանակում է, որ օրենսդրության բովանդակությունն ու վերադաս դատարաններում լուծված գործերի rationes decidendi-ն համարվում են օրենք: Ինչ վերաբերում է առաջին առաջարկությանը՝ ցանկացած իրավական համակարգում առկա են երկու տեսակի կանոններ, որոնցից առաջին տեսակի միջոցով որոշվում են տվյալ համակարգի կանոնները, իսկ երկրորդ տեսակի միջոցով կազմվում են առաջնային և երկրորդական օրենքները<sup>4</sup>:

Սալմոնդի մոտեցման և իրավանորմի հիմնական հայեցակարգի միջև գոյություն ունի որոշակի նմանություն, ինչը ձևավորում է Հանս Քելզենի իրավունքի զուտ տեսության («մաքուր» ուսմունքի) կարևոր առանձնահատկությունը<sup>5</sup>:

Ժամանակակից պետության իրավունքը, ըստ Քելզենի, բաղկացած է պաշտոնատար անձանց ուղղված նորմերի հիերարխիայից այն վերապահամբ, որ որոշակի պայմանների առկայության դեպքում պետք է կիրառվեն հարկադրող միջոցներ: Բոլոր նման նորմերը դրսևորվում են կամահայտնության միջոցով: Դրանք կարող են ներառել ստատուտային կամ սովորութային նորմերը, ինչպես նաև դատավորի կողմից ընդհանուր նորմեր ստեղծելու հնարավորությունը: Տեսականորեն կարող են ընդգրկվել նաև գործերի rationes decidendi-ն, սակայն այն պայմանով, որ վերջիններս կիրառվեն որպես սահմանված սանկցիաների օրինակներ:

Դրական (պոզիտիվ) նորմերի հիերար-

խիայում ամենից վեր գտնվում են առաջին Սահմանադրության նորմերը: Դրանք այն նորմերն են, որոնցից բոլոր մյուս նորմերը ձեռք են բերում իրենց իրավական ուժը: Ենթաօրենսդրական ակտը լիազորված է ստատուտի կողմից, ստատուտը՝ ներկա Սահմանադրության կողմից, ներկա Սահմանադրությունը՝ նախկին Սահմանադրության կողմից, և այսպես շարունակ: Այս իրավական մտածողությամբ հնարավոր է հանգել առաջին Սահմանադրությանը, որի վավերականություն ենթադրական է:

Ըստ Հ. Քելզենի՝ սա նշանակում է, որ տեսաբանն առանց ապացույցների առկայության պետք է ընդունի այն հիմնական նորմը, որը կանխատեսված է եղել բոլոր իրավական զեկույցներով: Այն նորմերը, որոնք հրապարակվել կամ ստեղծել են պատմականորեն առաջին Սահմանադրությունը, հենց հիմնական նորմի կողմից են ձեռք բերել նորմեր ստեղծելու իշխանություն: Հ. Քելզենը գրել է՝ եթե պատմականորեն առաջին Սահմանադրությունը կազմվել է օրենսդրական ժողովի բանաձևով, ապա հիմնական նորմն իրավասություն է տվել այդ ժողովի կազմում գտնվող անհատներին: Եթե պատմականորեն առաջին Սահմանադրությունը ծագել է սովորութային ճանապարհով, ապա հիմնական նորմն իրավասություն է տվել այդ սովորույթին, մասնավորապես՝ այն անհատներին, որոնց վարքագիծը ձևավորել է սովորույթը, ինչն առաջացրել է պատմականորեն առաջին Սահմանադրությունը<sup>6</sup>:

Սալմոնդի վերջնական սկզբունքները պարզապես կանխադրույթներ չեն: Դատական պրակտիկայում վերջիններիս կիրառությունը համատարած է: Տեսության մեջ դրանք սահմանված են որպես կանխադրույթներ, որոնք օբյեկտիվ վավերականության հիմք են՝ դրական իրավունքի պահանջներին համապատասխանելու համար: Քելզենի վերոնշյալ պնդումները կարող են դժվարությամբ կիրառվել իրավական համակարգերում կոնկրետ խնդիրներ լուծելիս: Այն իրավական համակարգում, որտեղ Սահմանադրությունը չգրված է, կարող են

<sup>3</sup> Տե՛ս P. J. Fitzgerald, Salmond on Jurisprudence: or the Theory of the Law, 12<sup>th</sup> edition, Sweet & Maxwell, 1966, էջ 111:

<sup>4</sup> Տե՛ս J. W. Harris, Legal Philosophies, The Modern Law Review, Vol. 44, N6, Nov., 1981, էջ 735-739:

<sup>5</sup> Մանրամասն տե՛ս Кельзен Г., Чистое учение о праве, М., 2005, [http://ivka.rsuh.ru/binary/78809\\_76.1462732758.46936.pdf](http://ivka.rsuh.ru/binary/78809_76.1462732758.46936.pdf):

<sup>6</sup> Տե՛ս Richard Tur, William Twining, The Function of a Constitution, Essays on Kelsen, 1986, Oxford, Clarendon Press, էջ 114:

առաջանալ հատուկ խնդիրներ այն փաստից, որ Սահմանադրության վերջնական կանոնների երևան գալը հաճախ չի կարող թվագրվել, որպիսի հանգամանքը համարվում է անհրաժեշտ: Այստեղ անհնար է սահմանել նաև, թե արդյոք նախորդ Սահմանադրությունում չիրապարակված փոփոխություններն ենթակամ են ընդունման, թե ոչ: Ավելին՝ դատական պրակտիկան շատ դեպքերում երկիմաստ է կամ անորոշ, և նախադեպի կանոնների մանրամասները կարգավորված չեն: Այսպիսով՝ Քելզենի տեսությունը չի սահմանել նշված գործընթացները:

Հերբերտ Հարթի «Իրավունքի հայեցակարգը»<sup>7</sup> հայտնի գիրքն իր կարևոր ներդրումն է կատարել XX դարի իրավագիտության մեջ: Սույն գրքում օրենքը ներկայացվում է որպես առաջնային և երկրորդական կանոնների համադրություն: Առաջնային կանոնները սահմանում են պարտականություններ, իսկ երկրորդական կանոնները ցույց են տալիս, թե առաջնային կանոններն ինչպե՞ս կարող են ստեղծվել, փոփոխվել և դադարել իրենց գործողությունը: Ըստ Հ. Հարթի՝ օրենքը կարող է դիտվել որպես կանոնների հիերարխիա<sup>8</sup>:

Այդ կանոններից յուրաքանչյուրի գոյությունը կարող է դիտարկվել «ճանաչման կանոնից» դեպի սկզբնական առաջացման ժամանակաշրջան: Ճանաչման կանոնը միայն որևէ մեկ կանոն չէ, որը պարունակում է առաջնային կանոնների գործողությունների չափանիշներ, այլ կազմում է ճանաչման կանոնների մի շարք, որոնք իրենց միասնությամբ (սահմանադրական և օրենսդրական նորմերից) ձևավորում են բարդ հիերարխիա: Ճանաչման կանոնը, որը սահմանում է համակարգի բոլոր մյուս կանոնների գործողությունների չափանիշները, Հարթը կոչում է «վերջնական կանոն»: Դա ամենաբարձր չափանիշն է համակարգի կանոնների գործողության համար: Վերջինիս միջոցով ընդգծվում են այն առանձնահատկությունները, որոնց առկայությունն օրենքի գերակայությանը հաղորդում է վերջնականություն: Դա կարող է լինել հասարակ կամ բարդ, ինչպես նաև կարող է

բաժանված լինել մեկը մյուսին ենթակա մասերի, որոնք, այնուամենայնիվ, չեն առաջանում մեկը մյուսից: Նշվածն իր բնույթով նման է Անգլիայի իրավական համակարգում նախադեպի և օրենսդրության հարաբերակցությանը: Ճանաչման կանոնի վավերականությունն առաջանում է համապատասխան պաշտոնատար անձանց կողմից ընդունվելու փաստի հետևանքով և այդ իսկ պատճառով որևէ կերպ չի բխում մեկ այլ կանոնից: Սույն կանոնը պարզապես տեսական կանխադրույթ չէ: Դա սոցիալական կանոն է, որի գոյությունը կարող է էմպիրիկորեն արձանագրվել<sup>9</sup>:

Հ. Հարթն իր վերոնշյալ գրքում կատարել է օգտակար և իրատեսական ուսումնասիրություն հետևյալի մասին. «Անգլիական իրավունքում նախադեպի օգտագործման ցանկացած ազնիվ նկարագրություն պետք է հատկացնի որոշակի տեղ հակասական փաստերի հետևյալ զույգերի համար: Առաջին հերթին՝ գոյություն չունի կանոնը բացահայտելու մեկ մեթոդ, որի համար կոնկրետ նախադեպը կիրառելի է համարվում: Չնայած դրան՝ լուծում ստացած գործերի մեծամասնությունը պարունակում է որոշակի աստիճանի անորոշություն: Երկրորդ հերթին՝ գոյություն չունի ցանկացած կանոնի ազդեցիկ կամ միանշանակ ճիշտ ձևակերպում, որը կազմվել է գործերից: Մյուս կողմից՝ այն դեպքում, երբ հետագա գործով նախադեպի կիրառումը հարցականի տակ է, հաճախ առկա է շատ ընդհանուր համաձայնություն առ այն, որ տվյալ ձևակերպումը համապատասխան է: Երրորդ հերթին՝ նախադեպից առաջացած կանոնի ազդեցիկ կարգավիճակից անկախ՝ կանոնը համատեղելի է դատարանների ստեղծարար կամ իրավաստեղծ գործունեության հետ: Մի կողմից՝ հետագա գործերը որոշող դատարանները կարող են կայացնել նախադեպի բովանդակությանը հակասող որոշում՝ անտեսելով նախադեպից բխող կանոնը, և այդպիսով սահմանել բացառություն՝ հաշվի չառնելով նախադեպը, իսկ հաշվի առնելու դեպքում՝ մի կողմ դնելով: Նախորդ գործը տարբերակելու այս գործընթացն իրավական

<sup>7</sup> Մանրամասն տես, H. L. A. Hart, The Concept of Law, third edition, Leslie Green, Clarendon Law Series, 2012:

<sup>8</sup> Տես նույն տեղը, էջ 51-52:

<sup>9</sup> Տես նույն տեղը, էջ 104:

առումով ներառում է նախկին և ներկա գործերի միջև որոշակի տարբերության սահմանում, և այդպիսի տարբերությունների շարքը երբեք չի կարող սպառիչ կերպով բացահայտվել: Մյուս կողմից՝ նախորդ նախադեպը կիրառելու դեպքում դատարանները կարող են հրաժարվել նախորդ գործի հետևանքով ձևակերպված կանոնում հայտնաբերված սահմանափակումից այն հիմքով, որ դա պահանջված չէ ստատուտով կամ ավելի վաղ նախադեպով հաստատված որևէ կանոնի կողմից»<sup>10</sup>:

Իրավունքի հայտնի տեսաբան, փիլիսոփա, քաղաքագետ Ռ. Մ. Դուրքինը համարվում է Հարթի հայեցակարգի քննադատողը: Նա չի համաձայնվել վերոնշյալ դիրքորոշման հետ: Դուրքինը պնդել է, որ կանոնների համակարգին վերաբերող հայեցակարգը չպետք է նպաստի դատավորների նկատմամբ սկզբունքների և իրավաստեղծ իշխանության վերագրմանը: Ենթադրվում է, թե նրանք իրականացնում են մի հայեցողություն, որով իրականում չեն տիրապետում<sup>11</sup>: Սկզբունքները պետք է տարբերվեն կանոններից: Ըստ Դուրքինի՝ կանոններն ունեն բացառություններ, և տեսականորեն գոյություն չունի բացառությունների թվի ավելացումն արգելող որևէ պատճառ: Բացառությունների զգալի քանակը կարող է հանգեցնել կանոնի էլ առավել ճշգրիտ սահմանման ձևակերպմանը<sup>12</sup>: Որպես օրինակ՝ կարելի է ներկայացնել դատավարության ընթացքում կիրառված այն ընդհանուր սկզբունքը, որ անձը, ով մինչև պայմանագիրը ստորագրելը չի ծանոթանում դրա բովանդակությանը, հետագայում չի կարող ազատվել այդ պայմանագրի հետևանքներից, ինչպես նաև պայմանագրի ազատության հիմնական սկզբունքը: Դատավարության ընթացքում այդ սկզբունքները գերակշռել են այն հիմնական դոկտրինան, որի համաձայն՝ դատարանները չեն կարող ծառայել որպես անհավասարության և անարդարության գործիք: Սկզբունքները կարող են հակասել և հաճախ հակասում են միմյանց, ինչը հնարավոր չէ հավաստել համապատասխան կանոնների մասին, և դատարանի պարտականու-

թյունն է դրանք համեմատելն ու գերակշռող սկզբունքը կիրառելը, ինչն էլ հետագայում կհանդիսանա գործի լուծման հիմքը՝ պարտադիր կանոնը: Ինչ վերաբերում է կանոններին՝ դրանց զգալի քանակի քննարկումն ու հաշվի առնելը կարող է հանգեցնել դատավորի կողմից այնպիսի սկզբունքի ձևակերպմանը, որը կգերադասվի այլ սկզբունքներից:

Հանդիսանալով Հերբերտ Հարթի իրավական պոզիտիվիզմի քննադատ՝ Դուրքինը համարել է, թե իրավունքն ունի մեկնաբանող գործառույթ: Որոշում կայացնելիս դատավորը մեկնաբանում է, արդարացնում և հիմնավորում նախկինում ձևավորված փորձը: Դուրքինի կարծիքով՝ դատավորները, ովքեր տիրապետում են իրավունքի սկզբունքների մասին անսահմանափակ գիտելիքներով և որոշում կայացնելու համար ունեն անսահմանափակ ժամանակ, երբևէ չեն հանգի գործի սխալ լուծմանը:

Նույնիսկ այն իրավական համակարգում, որտեղ օրենսդրությունն ու պարտադիր նախադեպն իրավունքի հիմնական, գլխավոր և վերջնական աղբյուրներ են, նախկին որոշման dicta-ն ընդունված է հայտնաբերել որևէ սկզբունքի աջակցությամբ:

Հետաքրքրություն է ներկայացնում այն հարցը, թե արդյոք սկզբունքները պետք է ներառվեն օրենքի սահմանման մեջ: Հարցի բացասական պատասխանը, այսինքն՝ օրենքի սահմանման մեջ սկզբունքների բացառումը, ենթադրում է վերջիններիս երկրորդական նշանակությունը: Նման եզրակացությունը չի կարող ճշգրիտ համարվել այն պարզ պատճառաբանությամբ, որ սկզբունքները կազմում են այն իրավական խնդիրների լուծման կարևոր մասը, որոնց նկատմամբ որևէ կանոն ուղղակիորեն ենթակա չէ կիրառման: Հենց սկզբունքների միջոցով է հնարավոր դառնում իրավունքի զարգացման ընթացքի կանխատեսումը: Դրանք օրենքներին և իրավունքներին շնորհում են նաև հստակության կոնկրետ աստիճանի ստուգություն:

Սալմոնդի և Հարթի սահմանած մոտեցում-

<sup>10</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 131:

<sup>11</sup> Մանրամասն տե՛ս Ronald Dworkin, Taking Rights Seriously, Bloomsbury, London, New Delhi, New York, Sydney, 1977:

<sup>12</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 24-26:

ների արդյունքները թույլ են տալիս եզրահանգել, որ ստատուտներին և դատական որոշումներին իրավական ուժ շնորհող կանոնները, Միացյալ Թագավորության և ԵՏՀ-ի (Եվրասիական Տնտեսական Հանձնաժողովի) ուղղակիորեն կիրառելի օրենսդրությունը, գործերի rationes decidendi-ն, ինչպես նաև տեղական սովորույթների կանոնները համարվում են Անգլիայի իրավունքի կարևորագույն աղբյուրներ:

«Դատական օրենսդրություն» կամ «դատական օրենսդիր գործունեություն» հասկացությունը խիստ վերացական է, սակայն հաճախ է օգտագործվում դատավորների կողմից, ովքեր հավելյալ նշում են, որ դա հազվադեպ երևույթ է<sup>13</sup>: Վերացական է նաև դատական որոշման հայտարարագրային տեսությունից ստացված հասկացությունը, որի համաձայն՝ դատավորները երբեք չեն ստեղծում օրենք: Իրավունքի մեջ նոր կանոնների սահմանումը երբեմն անխուսափելի է և իրավունքի ներքին տրամաբանության արդյունք է: Սույն իրավական քննարկման առանձնահատկությունը պրոֆեսոր Դուորքինը տեսականորեն կենտրոնացված է դիտարկել, ինչի միջոցով հերքել է դատավորների կողմից օրենք հրապարակելու տեսակետը: Նա տարբերակել է քաղաքական փաստարկները, որոնք արդարացրել են որոշակի հանրային կոլեկտիվ նպատակին նպաստող քաղաքական որոշումները, և սկզբունքային փաստարկները, որոնք արդարացրել են որոշակի անհատական կամ կոլեկտիվ իրավունքի ապահովմանը նպաստող քաղաքական որոշումները<sup>14</sup>:

Դատավարության կողմերն ունեն այնպիսի որոշման իրավունք, որն առավելագույն կերպով համապատասխանում է սկզբունքներին: Այդ սկզբունքները, իրենց հերթին, ծագում են օրենքի բովանդակությունը կազմող բաղադրիչ մասերից: Ինչ վերաբերում է նախադեպերին՝ Դուորքինն ընդգծել է դրանց գործադրման ուժը, որը համապատասխանում է ratio decidendi հասկացությանը, և դրանց ազդեցիկ ուժի միջև կարևոր տարբերությունը: Հետագա գործերում նախադեպերը կարող են ազդել օրենքի զարգացման վրա այնպիսի եղանակով, որը չի հա-

մապատասխանում դա հարկադրող կանոններին, որոնք թելադրում են, որ դատական հիերարխիայի շրջանակներում դատարանները երբեմն կապված են նախորդ որոշումների rationes decidendi-ով: Դուորքինը պնդել է, որ նախադեպերի նմանատիպ պատճառաբանությունները կարող են բացատրվել և հիմնավորվել միայն այն դեպքում, եթե դատական պատճառաբանությունն առաջնորդվում է սկզբունքային, այլ ոչ քաղաքական փաստարկներով: Նախադեպերը համահունչ կերպով մեկնաբանելու համար դատարանը պետք է ընդունի, որ պատճառաբանությունները պաշտպանված են իրավունքներով և սկզբունքներով, այլ ոչ քաղաքականությամբ:

Այնուամենայնիվ, հարկ է հիշատակել, որ Անգլիայի նախադեպային հարկադրական կանոնների որոշ մանրամասները կարգավորված չեն կամ հակասական են, ինչը համարվում է դատական պրակտիկայի ամբողջությամբ ամրագրված չլինելու արդյունք: Եթե առկա են այնպիսի գործեր, որտեղ օրենքը չի սահմանում հարցի ամբողջական և ճշգրիտ լուծումը, ապա դատավորը պետք է ընտրի իր նախընտրած լավագույն տարբերակը (պատասխանը):

Փաստերի վերաբերյալ հարցերով որոշումները չեն կազմում նախադեպ: Օրենքի և փաստի միջև տարբերությունը պետք է դիտարկվի տարբեր համատեքստերում: Առաջնահերթ գործում է այն ընդհանուր կանոնը, որ ժյուրիի առկայությամբ քննվող գործի ընթացքում փաստերին վերաբերող հարցերը պետք է լուծվեն ժյուրիի կողմից, իսկ օրենքին վերաբերող հարցերը վերապահված են դատավորին: Այնուհետ գործում է այն կանոնը, որ կոմսության դատարանի կոնկրետ տեսակի որոշումների, մասնավորապես՝ փաստերին վերաբերող հարցերի համար նախատեսված չէ բողոքարկման կարգ: Երրորդ կանոնն այն դոկտրինն է, որ փաստերին վերաբերող որոշումները նախադեպ չեն՝ ելնելով յուրաքանչյուր դեպքի առանձնահատկությունից: Այստեղ որպես փաստերին վերաբերող կարող են ներկայացվել կառուցվածքի հարցերը: Օրինակ՝ Վերաքննիչ դատարանի որոշման համաձայն՝ արբիտրաժի ընդ-

<sup>13</sup> Տե՛ս Марченко М. Н., Судебное правотворчество и судебское право, 2-е изд, Проспект, М., 2017:

<sup>14</sup> Տե՛ս Ronald Dworkin, Taking Rights Seriously, Bloomsbury, London, New Delhi, New York, Sydney, 1977, էջ 116-117:

հանուր ձևի պայմանները մեկնաբանող և կազմող նախորդ որոշումները այդ որոշումը կայացրած դատարանի կամ ստորադաս դատարանների համար պարտադիր նախադեպեր չեն, քանի որ արբիտրաժային պայմանավորվածությունը յուրաքանչյուր գործում առանձնահատուկ է և կախված է պայմանագրի կոնկրետ հանգամանքներից: Նախադեպի դոկտրինայի համատեքստում օրենքին կամ փաստին վերաբերող հարցը, ամեն դեպքում, համարվում է իրավական հարց: Կարելի է ենթադրել, թե նախադեպային կանոնների համատեքստում ցանկացած հարց, որը ենթակա է լուծման ժյուրիի կողմից, պետք է դիտարկվի որպես փաստին վերաբերող հարց: Օրենքի և փաստի տարբերակման նկատառումներից ելնելով՝ անհրաժեշտ է ձևակերպել հստակ թեստ, ինչն էլ կազմում է զգալի դժվարություն:

Նախադեպային կանոնները հիմնված են դատական պրակտիկայի վրա: Դրանք աստիճանաբար զարգանում են: Հետագա զարգացումները կարող են շտկել մի շարք չկարգավորված հարցեր: Նախադեպային որոշումը, անկասկած, կարող է փոփոխվել կամ չեղյալ հայտարարվել Խորհրդարանի կողմից: Խորհրդարանական նման իրավասությունը վերաբերում է նույնիսկ արմատապես հաստատված նախադեպային կանոնին: Օրենսդրությունը, թեև անուղղակիորեն, միշտ թողել է իր ազդեցությունը նախադեպային կանոնների բովանդակության ձևավորման վրա:

Իրավաբանների ուշադրությանն է արժանացել այն հարցը, թե արդյոք իրավունքների օրինագիծն ու հատկապես մարդու իրավունքներին և հիմնարար ազատություններին վերաբերող Եվրոպական կոնվենցիան պետք է ներառվեն Միացյալ Թագավորության ներքին օրենսդրության մեջ: Հարցի դրական պատասխանն ընդգծում է Անգլիայի նախադեպի դոկտրինայում որոշակի հետևանքների առաջացումը: Օրինակ՝ Անգլիայի դատարանը կապված չէր լինի Վերաքննիչ դատարանի կամ Լորդերի պալատի որոշմամբ, եթե այդ որոշումը հակասեր կամ չհամատեղեր Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ) որևէ կանոնի կամ որոշման հետ: Եթե դատարան-

ները ձեռք են բերում նախնական օրենսդրությունը սահմանադրական կարգով վերանայելու իշխանություն, ապա Խորհրդարանը կորցնում է այդ որոշումները փոփոխելու կամ չեղյալ հայտարարելու իր ուժը: Եվ, որպես հետևանք՝ սահմանադրականորեն կարող են վերացվել այն կանոնները, որոնց համաձայն՝ վերաքննիչ դատարանները պարտավորված են իրենց սեփական որոշումներով, իսկ Լորդերի պալատը չի կարող հրաժարվել իր սեփական նախկին որոշումներից:

Գործնականում որևէ անդրադարձ չի կատարվում այն պատճառներին և հիմքերին, թե ինչո՞ւ նախադեպային իրավունքի հիմնական առարկաների նկատմամբ կիրառելի նախադեպային կանոնները չպետք է կիրառվեն օրենսգրքերի կառույցների ներքո: Եթե իրավական համակարգում նախադեպի դոկտրինան ցանկալի է, ինչպես, օրինակ՝ Անգլիայում, որտեղ գոյություն չունեն օրենսգրքեր, սակայն դրանց փոխարեն առկա են համապատասխան ստատուտներ, ապա օրենսգրքի ներքո նախադեպը կարող է լինել հավասարապես ցանկալի: Թերությունների առկայության դեպքում դրանք պետք է վերացվեն օրենսդրության կողմից: Մյուս կողմից՝ ընդհանուր դրույթներով օրենսգիրքը կարող է անցանկալի դարձնել նախադեպի խիստ դոկտրինան ամրագրելու հանգամանքը: Ընդհանուր դրույթները չեն կարող հեշտությամբ փոփոխվել, ինչը խիստ անհրաժեշտություն է՝ ելնելով փոփոխվող ժամանակներին և պայմաններին համապատասխանելու նպատակներից: Այն պարագայում, երբ օրենսգրքով սահմանված դրույթը որևէ փոփոխություն է կատարում նախորդ օրենքում, նախկին գործերով որոշումներին հարկ է հղում կատարել միայն այն ժամանակ, երբ առկա է նախադեպային իրավունքի որոշակի անորոշություն:

Այսպիսով՝ կարելի է փաստել, որ իրավունքի աղբյուրների զարգացման ներկա փուլում ընդհանուր իրավունքի համակարգում գրված օրենսդրության (պառլամենտական ակտերի-ստատուտների) դերն ու նշանակությունը ավելի է բարձրանում, և նախադեպային որոշումները չեն կարող հակասել գործող ստատուտային իրավունքին:

**ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**

ՀՀ հաշվեքննիչ պալատի 2-րդ վարչության գլխավոր մասնագետ,  
 ՀՀ ԱԻՆ Ճգնաժամային կառավարման ակադեմիայի  
 բնական գիտությունների ամբիոնի վարիչ,  
 մանկավարժական գիտությունների թեկնածու

**ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ. ԷՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ  
 ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ**

Ներկա ժամանակաշրջանում Հայաստանում շարունակում է կազմավորվել պետականության նոր տեսակ: Հայկական տնտեսության հաջող բարեփոխումը, մնացյալ ամեն ինչից բացի, ենթադրում է նաև պետական կառավարման համակարգի հիմնական գործառույթների տեսության ու պրակտիկայի համարժեք փոփոխություններ բոլոր մակարդակներում:

Պետական կառավարման հիմնական գործառույթներից մեկը ֆինանսական արդյունավետ համակարգի ստեղծումն է ու ամրապնդումը և, համապատասխանաբար, ֆինանսական վերահսկողության համակարգի ստեղծումը [տես 1]:

Սոցիալ-տնտեսական ոչ մի հիմնախնդիր չի կարող բարեհաջող լուծում ստանալ, եթե չի կատարվում անհրաժեշտ կարգավորում ֆինանսաբյուջետային ոլորտում, եթե պետական վերահսկողության համակարգին հատուկ չէ պատշաճ կայունությունը: Ահա թե ինչու արդյունավետ և գործուն ֆինանսական վերահսկողությունը ուժեղ իշխանության պայման է:

ՀՀ Սահմանադրության 111-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն.

«Ազգային ժողովը վերահսկողություն է իրականացնում պետական բյուջեի կատարման, ինչպես նաև օտարերկրյա պետություններից և միջազգային կազմակերպություններից ստացված փոխառությունների և վարկերի օգտագործման նկատմամբ», իսկ 198-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն. «Հաշվեքննիչ պալատն անկախ պետական մարմին է, որը հանրային ֆինանսների և սեփականության ոլորտում հաշվեքննություն է իրականացնում պետական բյուջեի և համայնքային բյուջեների միջոցների, ստացած փոխառությունների ու վարկերի, պետական և համայնքային սեփականության օգ-

տագործման օրինականության և արդյունավետության նկատմամբ» [տես 2]:

Պետական բյուջետային վերահսկողությունը պետության ֆինանսական քաղաքականության անբաժանելի մասն է: Պետական բյուջետային վերահսկողության ուսումնասիրության հրատապությունը բացատրվում է այն հանգամանքով, որ պետական ֆինանսական վերահսկողության արդյունավետ համակարգի ստեղծումն ամբողջությամբ վերցրած տնտեսության կառավարման գործընթացի վերափոխումների, նրա զարգացման և կայունացման կարևորագույն նախադրյալներից մեկն է:

Միանգամայն ակներև է, որ մարդիկ միշտ կհարգեն և կսատարեն իշխանությանը, եթե համոզված լինեն, որ այն միջոցները, որոնք իրենք՝ որպես օրինավոր քաղաքացիներ, հարկերի տեսքով դնում են նրա տրամադրության տակ, ծախսվում են հօգուտ հանրային շահերի և օգտագործվում են արդյունավետորեն:

Տնտեսության և ֆինանսական համակարգի բնականոն գործունեության անառարկելի պայմանը ֆինանսական վերահսկողությունն է, որը պետական վրահսկողության բաղկացուցիչ մասն է կազմում [տես 3, 33]:

Մասնագիտական գրականության մեջ միասնական կարծիք չկա պետական ֆինանսական վերահսկողության սահմանման մասին՝ ընդհանրապես, և պետական բյուջետային վերահսկողության սահմանման մասին՝ մասնավորապես [4, 298]:

Այսպիսով՝ վերահսկողության հետ առավելապես առնչվում է պետական մարմինների այնպիսի գործառույթ, ինչպիսին հսկողությունն է:

«Վերահսկողություն» և «հսկողություն» հասկացությունները տեսության, ինչպես նաև օրենսդրական գործունեության մեջ օգտագործ-

վում են հաճախ, սակայն դրանք միմյանցից տարբերակելու միանշանակ չափորոշիչներ առայսօր դեռևս չկան:

Գիտնականների մի խումբ պնդում է, որ վերահսկողությունը և հսկողությունը գործունեության ինքնուրույն տեսակներ են: Առավել տարածված է այն տեսակետը, թե վերահսկողությունը և հսկողությունը միմյանց հարաբերակցում են՝ ինչպես ամբողջի երկու մաս: Սակայն այս տեսակետի կողմնակիցներից մի քանիսը հսկողությունը սահմանում են իբրև վերահսկողության մաս, մյուսները, ընդհակառակն՝ վերահսկողությունն իբրև հսկողության մաս: «Վերոնշյալ հասկացությունների միանշանակ ըմբռնում չկա: Նորմատիվային որոշակի տերմին օգտագործվում է միայն «վերահսկողություն» տերմինը, մյուսներում՝ «հսկողություն» տերմինը: Մի շարք նորմատիվային ակտերում էլ օգտագործվում են այդ երկու տերմինը միաժամանակ» [5, 9]:

Այսպիսով՝ հսկողության էությունը կազմում է օրինականության և իրավակարգի ապահովումը՝ օրինախախտումների բացահայտման ու վերացման, ինչպես նաև դրանց վերաբերյալ նախագրուշացումների ճանապարհով:

Հսկողությունը, ի տարբերություն վերահսկողության, չի պարունակում վարչական գործառույթներ [տես 5, 9]:

Լեհ գիտնական Ե. Ստարոսցյակոն գրում է. «Վերահսկողությունը գործերի իրական վիճակի հսկողությունն է, ձևակերպումը և բացահայտումը, փաստացի վիճակի և նախանշված նպատակների համադրությունը, ապօրինի երևույթների դեմ հանդես գալը, ահազանգը պատկան մարմիններին՝ առանց, սակայն, ստուգող մարմինների գործունեության ուղղության փոփոխությունների վերաբերյալ որոշումներ ընդունելու իրավունքի» [4, 199]:

Մեկ այլ պնդման համաձայն. «Վերահսկողությունը հսկողական և ստուգիչ աշխատանքն է՝ ընդունված կառավարչական որոշումներին, օրենքներին, պլաններին, նորմերին, չափանիշներին, կանոններին, հրամաններին օբյեկտի գործառնության գործընթացի համապատասխանության վերաբերյալ. դա նաև օբյեկտի վրա սուբյեկտի ազդեցության արդյունքների բացահայտման աշխատանքն է, որը թույլ է տվել շեղումներ կառավարչական որոշումների պա-

հանջներից, կազմակերպման և կարգավորման ընդունված սկզբունքներից» [6, 125]:

Ֆինանսական վերահսկողության մասին խոսելիս նախ պետք է սահմանել «ֆինանսներ» հասկացությունը: Ֆինանսները տնտեսական հարաբերություններ են, որոնք կապված են դրամական միջոցների կենտրոնացված և ապակենտրոնացված ֆոնդերի ձևավորման, ծավալման և օգտագործման հետ՝ պետության կամ տեղական ինքնակառավարման մարմնի գործառույթներն իրականացնելու, ինչպես նաև պետությանը պատգամված լիազորություններն իրականացնելու և ընդլայնված վերարտադրության պայմաններ ապահովելու նպատակով, այդ ընթացքում իրականանում են ներքին համախառն արտադրանքի բաշխումն ու վերաբաշխումը և վերահսկողությունը հասարակական պահանջարկի բավարարման համար [7, 199]:

Նյութական տեսանկյունից՝ ֆինանսները ներկայացնում են պետության, համայնքների, ձեռնարկությունների, հաստատությունների, կազմակերպությունների դրամական ֆոնդերը, որոնք օգտագործվում են հասարակության պահանջմունքները նյութապես բավարարելու և արտադրությունը զարգացնելու համար: Այդպիսի մի ֆոնդ է բյուջեն: Դրամական միջոցների թվարկված ֆոնդերի ամբողջությունը պետության ֆինանսական ռեսուրսներն են [8, 18]:

Պետական վերահսկողությունը պետական կառուցվածքի պարտադիր մասն է, երկրի կառավարման առաջնային գործառույթներից մեկը, ֆինանսավարկային համակարգի բնականոն գործառնության պարտադիր պայմանը: Դա մեծ չափով պայմանավորված է այն հանգամանքով, որ հատկապես պետական մարմինների վրա է դրվում հասարակության անդամների ֆինանսական իրավունքի և շահերի պաշտպանության, չարաշահումների և գողությունների կանխման ու նախագրուշացման տարբեր միջոցների օգտագործման գործառույթների գերակշիռ մասը [9, 337]: Պետական և համայնքային ֆինանսական վերահսկողությունն իրականացվում է ֆինանսական քաղաքականության շրջանակներում և ունի մի քանի ասպեկտ.

- Պետական կառավարման գործառույթ է: Ապահովում է ֆինանսաիրավական



հարաբերությունների մասնակիցների ֆինանսական գործունեության ստուգումը՝ իրավունքի նորմերի խախտումների վերացման կամ բացահայտման նպատակով:

- Պետության կառավարչական որոշակի գործունեության փուլերից մեկն է:
- Ֆինանսաիրավական կարգավորման համակարգում հետադարձ կապի ձևերից մեկն է:
- Ֆինանսական ոլորտում օրինականության և իրավակարգի պահպանման միջոց է:

Վերահսկողությունն իրականացվում է երեք փուլով.

- Հաշվառում: Սա օբյեկտի դրությունը և դինամիկան արտացոլող տեղեկատվության հավաքագրումն է, պահպանումը և նախնական մշակումը:
- Ըստ էության վերահսկողություն: Արտահայտվում է հաշվառման փաստական տվյալների՝ պլանավորված կամ նորմատիվային տվյալների հետ համեմատության, օբյեկտի ունեցվածքի (դրության) կամ ընթացող գործընթացների մեջ շեղումների բացահայտման մեջ:
- Վերլուծություն: Բացահայտված շեղումների պատճառների որոշում և դրանց վերացման միջոցառումների մշակում [տես 14]:

«ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն. «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգն իրավունքի նորմերով կարգավորող Հայաստանի Հանրապետության տնտեսական հարաբերությունների և Հայաստանի Հանրապետության պետական կառուցվածքի վրա հիմնված հետևյալ երկու մակարդակի բյուջեների ամբողջությունն է՝

ա) առաջին մակարդակ՝ պետական բյուջե.

բ) երկրորդ մակարդակ՝ համայնքների բյուջեներ»:

24-րդ հոդվածի համաձայն. «Պետական բյուջեի կատարման վերահսկողությունն իրականացնում է Ազգային ժողովը, իսկ 34-րդ հոդվածի համաձայն՝ Համայնքների բյուջեների կատարման վերահսկողությունն իրակա-

նացնում են համայնքի ավագանին, Ազգային ժողովը և կառավարությունը՝ օրենքով իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում [տես 10]:

Ֆինանսական վերահսկողության համակարգում հատուկ առանձնացվում է բյուջետային վերահսկողությունը, որը «պետական ֆինանսական վերահսկողության տեսակ է և իրականացվում է բյուջետային վերահսկողության ոլորտում՝ ուղղված բյուջետային կարգավորմանն ու բյուջետային գործընթացի մասնակիցների գործունեության տնտեսական արդյունավետությանը և օրինականությանը [տես 11, 120]:

Մասնագիտական գրականության մեջ կա բյուջետային վերահսկողության հետևյալ սահմանումը. «Դա պետական ֆինանսական վերահսկողության բաղկացուցիչ մասն է, որը պետական լիազոր մարմինների գործունեություն է՝ պետության և իշխանության տեղական մարմինների կենտրոնացված դրամական միջոցների ձևավորման, բաշխման և օգտագործման ստուգման ուղղությամբ» [9, 338]: Վերոնշյալին բավական մոտ է հետևյալ սահմանումը. «Բյուջետային վերահսկողությունը ֆինանսատնտեսական վերահսկողության բաղկացուցիչ մասերից մեկն է և դիտարկվում է որպես միջոցառումների ամբողջություն, որոնք անցկացվում են պետական մարմինների կողմից՝ դրամական ֆոնդերի ձևավորման, բաշխման և օգտագործման մեջ օրինականության, նպատակահարմարության ու արդյունավետության ստուգման, ինչպես նաև բյուջե եկամուտների մուտքի մեծացման, բյուջետային կարգապահության բարելավման ուղղությամբ» [12, 576]:

Այսպիսով՝ բյուջետային վերահսկողությունը ֆինանսական վերահսկողության ինքնուրույն տեսակ է և գործունեություն՝ տարբեր սուբյեկտների այն գործողությունների օրինականության, արդյունավետության, նպատակահարմարության և արժանահավատության ստուգման ուղղությամբ, որոնք ուղղված են կենտրոնացված դրամական միջոցների ձևավորմանը, բաշխմանը և օգտագործմանը:

Այդպիսի հիմնարար նորմատիվ-իրավական ակտ, որն ամրագրել է ֆինանսական, ինչպես նաև բյուջետային վերահսկողության

սկզբունքները, վերահսկողության ղեկավար սկզբունքների Լիմայի հռչակագիրն է: Միջազգային իրավունքի տեսանկյունից Լիմայի հռչակագիրը չունի պարտադիր բնույթ, այնուամենայնիվ, պետական ֆինանսական վերահսկողության կազմակերպությունների միջազգային փորձի ամփոփումն է: Պետությունը, որը որպես հիմք է ընդունել Լիմայի հռչակագիրը, արտահայտում է իր համաձայնությունն այն կանխադրույթներին, որոնք ընդունվել են միջազգային հանրության կողմից՝ պետական ֆինանսական վերահսկողության ստեղծման և իրականացման պատմական փորձն ընդհանրացնելու ընթացքում, որոնցից էլ ածանցվում են Լիմայի սկզբունքները.

- բարձրագույն վերահսկիչ մարմնի (խորհրդարանական վերահսկողության մարմնի) անկախություն.
- նախնական վերահսկողության և փաստացի վերահսկողության զուգակցում.
- արտաքին և ներքին վերահսկողության զուգակցում [տե՛ս 14]:

Բացի այս՝ ընդունվում են ֆինանսական վերահսկողության հետևյալ **սկզբունքները**.

- պլանայնություն,
- անընդհատություն,
- օրինականություն,
- անկախություն.

Ֆինանսական անկախությունը ենթադրում է՝

- օբյեկտիվություն,
- հրապարակայնություն,
- պատասխանատվություն,
- գործառույթների և լիազորությունների սահմանափակում,
- համակարգայնություն,
- արդյունավետություն:

Բյուջետային վերահսկողության գլխավոր **խնդիրը** համարվում է աջակցությունը պետության ֆինանսական քաղաքականության հաջող իրականացմանը՝ ֆինանսական օրենսդրության, ֆինանսական կարգապահության ապահովման միջոցով: Բյուջետային վերահսկողությունը նպաստում է ֆինանսական արդյունավետ քաղաքականության մշակմանը և իրագործմանը, ապահովում է պետական բյուջե մուտքերի առավելագույն աճ և տնտեսության զարգացում [տե՛ս 13, 85]:

Բյուջետային վերահսկողության **խնդիրներ** են համարվում նաև.

- գործող բյուջետային և հարկային օրենսդրության պահպանության վերահսկողությունը,
- բյուջեի և արտաբյուջետային ֆոնդերի կազմման ու կատարման ճշտության ապահովումը,
- պետական բյուջեի հանդեպ քաղաքացիների և տնտեսվարող սուբյեկտների պարտավորությունների ժամանակին և լիակատար կատարման ապահովումը,
- բյուջետային և արտաբյուջետային ֆոնդերի միջոցների արդյունավետության և օգտագործման ստուգումը,
- բանկերում և այլ վարկային հաստատություններում բյուջետային միջոցների ու արտաբյուջետային ֆոնդերի շրջանառության ստուգումը,
- միջբյուջետային հարաբերությունների մեխանիզմների իրականացման վրա վերահսկողությունը,
- զանազան մակարդակների բյուջեներ եկամուտների աճի ռեսուրսների բացահայտումը, պետական սեփականության պահպանման ապահովումը:

Բյուջետային վերահսկողության հիմնական դրույթն արտահայտվում է իր գործառույթներում: Համարվելով այնպիսի գործոն, որի օգնությամբ ապահովվում է սոցիալական համակարգի բնականոն գործառնությունը, վերահսկողական գործունեությունը հասարակական հարաբերությունների վրա կիրառում է ներգործության իրավական միջոցներ հետևյալ **գործառույթների** օժանդակությամբ՝ շեղումների բացահայտում, շեղումների պատճառների վերլուծություն, վերահսկողության օբյեկտի գործունեության շտկում, կանխում:

- Շեղումների բացահայտումը ներառում է գործունեության լայն շրջանակ:
- Հայտնաբերված շեղումների պատճառների վերլուծություն:
- Գործունեության շտկման կամ ուղղման գործառույթը այնպիսի առաջարկների մշակում է, որոնք օգնում են բյուջեի ձևավորման և կատարման ընթացքում հայտնաբերված շեղումների վերացմանը, այդ թվում՝ նաև հիմնարկություններ:

րի ու ձեռնարկությունների ֆինանսատնտեսական գործունեության ընթացքում:

- Կանխման գործառույթը վերահսկողական գործունեության արդյունավետության ամրապնդման կարևորագույն տարրերից մեկն է կանխարգելիչ աշխատանքն իրավախախտումների կանխման ուղղությամբ:

Այսպիսով՝ բյուջետային վերահսկողությու-

նը բյուջետային գործընթացի կարևորագույն տարր է և ապահովում է պետական ֆինանսական համակարգի գործառնության արդյունավետությունը:

Այս առումով՝ հրատապ նշանակություն է ստանում պետական բյուջետային վերահսկողության դերի մեծացումը, ինչպես նաև դրա հետազոտությունը և արդյունավետության բարձրացման ուղիների հայտնաբերումը:



**ՀՈՎՍԵՓ ՔՈՉԱՐՅԱՆ**

Հայ-ռուսական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի երկրորդ կուրսի մագիստրանտ

**ՀԱՐՔԱԾՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿՈՒՄ ՀԱՆՑԱՆՔ ԿԱՏԱՐԱԾ ԱՆՁԱՆՑ ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ**

Հոդվածում ուսումնասիրվում են հարբածության վիճակում հանցանք կատարած անձի քրեական պատասխանատվության խնդիրները: Հեղինակը, ուսումնասիրելով արտասահմանյան պետությունների օրենսդրական փորձը, հանգել է այն եզրակացության, որ նշված ինստիտուտի պատշաճ իրավակարգավորումն ապահովելու նպատակով անհրաժեշտ է ՀՀ քրեական օրենսգրքում ներառել նոր իրավական նորմ, որը հնարավորություն կընձեռնի ակոհոլի, թմրամիջոցների կամ թմրեցնող այլ նյութերի ակամա օգտագործման հետևանքով հարբած վիճակում հանցանք կատարելը դիտարկելու որպես արարքի հանցավորությունը բացառող հանգամանք:

**Բանալի բառեր.** կամավոր հարբածություն, ակամա հարբածություն, անմեղսունակություն, քրեական պատասխանատվություն

**ОВСЕП КОЧАРЯН**

Магистрант второго курса  
Юрфака Российско-Армянского университета

**НЕКОТОРЫЕ ПРОБЛЕМЫ УГОЛОВНОЙ ОТВЕТСТВЕННОСТИ ЛИЦ, СОВЕРШИВШИХ ПРЕСТУПЛЕНИЕ В СОСТОЯНИИ ОПЬЯНЕНИЯ**

В статье рассматриваются правовые проблемы уголовной ответственности лиц, совершивших преступление в состоянии опьянения. Автор, исследуя законодательную практику зарубежных государств, приходит к выводу о необходимости имплементации в УК РА новой правовой нормы, которая предоставит возможность рассмотрения недобровольного алкогольного, наркотического или иного опьянения в качестве обстоятельства, исключающего преступность деяния.

**Ключевые слова:** добровольное опьянение, недобровольное опьянение, невменяемость, уголовная ответственность.

**HOWSEP KOCHARYAN**

Russian-Armenian university, Faculty of law LLM,  
2-nd year student

**SOME PROBLEMS OF CRIMINAL LIABILITY OF PERSONS WHO COMMITTED A CRIME WHILE INTOXICATED**

The article deals with the legal problems of criminal liability of persons who have committed a crime while intoxicated. The author, investigating the legislative practice of foreign states, comes to the conclusion that it is necessary to implement a new legal norm in the criminal code of Republic of Armenia, which will provide an opportunity to consider involuntary alcohol, drug or other intoxication as a circumstance precluding crime.

**Keywords:** voluntary intoxication, involuntary intoxication, insanity, criminal liability.

\* \* \*

**ԱՇԽԵՆ ԳԱԼՍՏՅԱՆ**

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժնի քննիչ, արդարադատության երրորդ դասի խորհրդական, ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի հայցորդ

**ԳՐԱՎԸ ՈՐՊԵՍ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԽԱՓԱՆՄԱՆ ՄԻՋՈՑ**

Հոդվածում հեղինակը քննարկում է ՀՀ քրեական դատավարությունում ներկայումս կալանավորման այլընտրանքային խափանման միջոց հանդիսացող գրավը որպես ինքնուրույն խափանման միջոց կիրառելու անհրաժեշտության հարցը:

Անդրադարձ է կատարված հայ իրավունքի համակարգում գրավի ինստիտուտի առաջացմանը, զարգացմանը և

ազգային իրավահամակարգում սույն դրույթի վերաբերյալ միջազգային փորձի ներդրման նպատակահարմարությամբ:

Ներկայացվել են գրավը որպես ինքնուրույն խափանման միջոց կիրառելու նախադրյալները, իրավասու անձանց շրջանակը, պայմաններն ու ակնկալվող դրական արդյունքները:

**Բանալի բառեր.** գրավ, ինքնուրույն խափանման միջոց, կալանավորում, մինչդատական վարույթ, պայմանագիր, երաշխիք:

**АШХЕН ГАЛСТЯН**

Следователь следственного отдела по административным районам Эребуни и Нубарашен Следственного управления города Ереван Следственного комитета РА, советник юстиции третьего класса, соискатель Института философии, социологии и права НАН РА

**ЗАЛОГ В КАЧЕСТВЕ САМОСТОЯТЕЛЬНОЙ МЕРЫ ПРЕСЕЧЕНИЯ**

В статье автор рассматривает вопрос о необходимости применения залога в качестве самостоятельной меры пресечения в уголовном судопроизводстве РА, ныне являющейся альтернативной мерой пресечения ареста.

Затронуты происхождение института залога в системе армянского права, его развитие и обоснованная целесообразность внедрения в национальной правовой системе международного опыта этого положения.

Представлены предварительные условия применения залога в качестве самостоятельной меры пресечения, круг правомочных лиц, критерии и ожидаемые положительные результаты.

**Ключевые слова:** залог, самостоятельная мера пресечения, арест, досудебное производство, договор, гарантия.

**ASHKHEN GALSTYAN**

Investigator of the Investigative Division of Erebuni and Nubarashen administrative districts of Yerevan Investigative Department of the RA Investigative Committee, third class justice counselor, PhD student of The Institute of Philosophy, Sociology and Law of NAS RA

**PLEDGE AS A SUBSTANTIVE MEASURE OF RESTRAINT**

In the Article the author considers the necessity of applying the pledge as a substantive measure of restraint in the Criminal Procedure of the RA, which is now an alternative measure of restraint to arrest.

The origins of the institute of pledge in the system of Armenian laws, its development and justified convenience of implementation of the international experience of this clause in national law system have been concerned.

The preconditions for the use of pledge as a substantive measure of restraint, the circle of competent authorities, criteria and the expected positive results are represented.

**Keywords:** pledge, substantive measure of restraint, detention, pre-trial proceedings, contract, guarantee.

\* \* \*

**ԱՐՓԻ ԼԱԶԱՐՅԱՆ**

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մագիստրանտ

**ՆԱԽԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՏՎԱԾ ՑՈՒՑՄ ՈՒՆՔՆԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՓՈՒԼՈՒՄ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Դատավարական բարեփոխումների այս փուլում մի շարք ինստիտուտներ ենթարկվել են արմատական փոփոխության, սակայն դատական պրակտիկան, այնուամենայնիվ, զերծ չի մնացել հիմնախնդիրներից: Տվյալ աշխատանքում անդրադարձ է կատարվել դատաքննության փուլում առաջացող մի խնդրի, որը կապված է դատարանում նախաքննության ընթացքում հավաքված ցուցմունքների հրապարակման հետ՝ վերլուծվել են առաջացող խնդիրները, և փորձ է արվել ցույց տալ Նախագծով տրված լուծումները:

**Բանալի բառեր.** դատաքննություն, հրապարակում, ցուցմունք, վկա:

**АРПИ ЛАЗАРЯН**

Магистрант Ереванского государственного университета

**ОГЛАШЕНИЕ ПОКАЗАНИЙ РАНЕЕ ДАННЫХ ПРИ ПРОИЗВОДСТВЕ ПРЕДВАРИТЕЛЬНОГО РАССЛЕДОВАНИЯ В ХОДЕ СУДЕБНОГО РАЗБИРАТЕЛЬСТВА В УГОЛОВНО-ПРОЦЕССУАЛЬНОМ КОДЕКСЕ РА**

На данном этапе судебно-правовых реформ многие процессуальные институты подверглись радикальным изменениям. В данной работе мы проанализировали институт публикации свидетельских показаний, собранных во время предварительного расследования в ходе судебного разбирательства. Мы попытались проанализировать возникающие проблемы и показать, как они нашли решение в Проекте нового Уголовно-процессуального кодекса.

**Ключевые слова:** судебное производство, публикация, показания, свидетель.

**ARPI LAZARYAN**

PHD State University of the Yerevan

**THE ANNOUNCEMENT OF THE PRE-TRIAL TESTIMONIES DURING THE TRIAL IN THE SCOPE OF CRIMINAL PROCEDURE OF THE RA**

A number of institutes were subjected to radical changes in the scope of judicial reforms, but anyway, judicial practice still has some problems. An issue related to the announcement of the pre-trial testimonies during the trial is discussed within the framework of the article and solutions given by the draft of law were analyzed.

**Keywords:** trial, announcement, testimony, witness.

\* \* \*

**ԹԱՄԱՐԱ ՇԱՔԱՐՅԱՆ**

ԵՄ և ԵՄ Երևանյան գրասենյակի ազգային փորձագետ,  
 ՀՀ կառավարման ակադեմիայի և  
 Արդարադատության ակադեմիայի դասախոս,  
 իրավաբանական գիտությունների թեկնածու,  
 դոցենտ, արդարադատության առաջին դասի խորհրդական

**ԱՐՏԱԿ ԽԱՆԱՄԻՐՅԱՆ**

ՀՀ պետական կառավարման  
 ակադեմիայի մագիստրանտ

**ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԱՉԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԲԱՐԵՓՈՒՎԱԾ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ**

Հոդվածում ներկայացվում են հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման առանձնահատկությունները 2015թ. սահմանադրական բարեփոխումների համատեքստում՝ իրավահամեմատական վերլուծության ենթարկելով նախորդ երկու խմբագրությամբ սահմանադրական նորմերի հետ: Որպես ուսումնասիրության արդյունք՝ վեր են հանվել հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման առանցքային դրույթները, որոնք կդառնան երաշխիք հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության իրականացման համար:

**Բանալի բառեր.** հիմնական իրավունքներ և ազատություններ, իրավունքի սահմանափակում, սահմանափակվող իրավունք, չսահմանափակվող իրավունք, ժամանակավորապես սահմանափակվող իրավունք, համաչափության սկզբունք, որոշակիության սկզբունք:

**ТАМАРА ШАКАРЯН**

Национальный эксперт по программам Совета Европы и Евросоюза в Ереване, преподаватель Академии государственного управления и Академии юстиции РА, кандидат юридических наук, доцент, советник юстиции первого класса

**АРТАК ХАНАМИРЯН**

Магистр Академии государственного управления РА

**ОСОБЕННОСТИ ОГРАНИЧЕНИЙ ОСНОВНЫХ ПРАВ И СВОБОД В КОНТЕКСТЕ РЕФОРМИРОВАННОЙ КОНСТИТУЦИИ**

В статье представлены особенности ограничения основных прав и свобод в контексте конституционных реформы 2015 г., подвергая анализу правовых сравнений прежних двух конституционных норм. В результате обследования были подняты ключевые тезисы ограничения основных прав и свобод, которые станут гарантом для защиты и реализации основных прав и свобод.

**Ключевые слова:** основные права и свободы, ограничение прав, ограниченное право, абсолютное право, временно ограниченное право, принцип пропорциональности, принцип определенности.

**TAMARA SHAKARYAN**

Council of Europe and European Union legal expert,  
Lecturer at the Justice Academy of RA and  
at the Public Administration Academy of the RA,  
First Class Councilor of Justice; PhD in Laws,  
associate professor in law

**ARTAK KHANAMIRYAN**

Master of Public Administration  
Academy of the RA

**FEATURES OF LIMITATION ON FUNDAMENTAL RIGHTS AND FREEDOMS IN THE CONTEXT OF A REFORMED CONSTITUTION**

The article presents the features of limitation on fundamental rights and freedoms in the context of constitutional reforms 2015 by comparative legal analysis with twice edited previous constitutional norms. As a result of the study, the main provisions limitation on fundamental rights and freedoms were revealed of, which will become a guarantee to provide protection of fundamental rights and freedoms.

**Keywords:** fundamental rights and freedoms, limitation of the right, limited right, absolute right, temporary limited right, principle of proportionality, principle of certainty.

\* \* \*

**ԼԻԼԻԹ ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ**

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ասպիրանտ

**ՏԵՂԱԿԱՆ ՀԱՆՐԱՔՎԵԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԵՎ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԷՎՈԼՅՈՒՑԻԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐՐՈՐԴ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

ՀՀ գոյության առաջին կեսին տեղական հանրաքվեն, որպես ժողովրդահիշխանության անմիջական ձև, անտեսված էր: Միայն 2002 թվականից՝ սկզբում օրենսդրական, իսկ այնուհետև՝ սահմանադրական մակարդակներում ամրագրվեց տեղական հանրաքվեի իրավական ինստիտուտը: Օրենքով ամրագրված իրական մոդելին իդեալական մոդելի արդյունավետության և գործունեության 20 միավորից բնորոշ էր միայն 10 միավորը: 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրությունը և դրանից հետո ընդունված օրենսդրական փոփոխությունները որոշակիորեն բարելավեցին տեղական հանրաքվեի ինստիտուտը մի քանի ուղղությամբ՝ բարձրացնելով դրա արդյունավետության և գործունեության միավորները մինչև 15-ի: 2015 թ. սահմանադրական բարեփոխումներից հետո տեղական հանրաքվեի իրական մոդելի արդյունավետության և գործունեության միավորների ամփոփումը ցույց է տալիս, որ աճ չի գրանցվել: Սահմանադրությունը կատարելագործեց միայն տեղական հանրաքվեի հոչակագրային-հայեցակարգային որոշ հիմքեր: Հետևաբար՝ այդ իրավական ինստիտուտն ունի բարելավման տեղ, հատկապես՝ անցկացման մակարդակների, պարտադիրության, առարկայի, որոշման ընդունման ծայների քանակի, հիմնական որոշ չափանիշների հարցում սահմանադրական կարգավորման որոշակիության ապահովման ուղղությամբ:

**Բանալի բառեր.** տեղական հանրաքվե, չափանիշ, ցուցանիշ, արդյունավետություն, որոշակիություն, իդեալական և իրական մոդել, բարելավում, համայնք, համայնքի բնակիչ:

**ЛИЛИТ МЕЛИКСЕТЯН**

Аспирант академии государственного управления РА

**ЭВОЛЮЦИЯ КОНСТИТУЦИОННОГО И ЗАКОНОДАТЕЛЬНОГО РЕГУЛИРОВАНИЯ МЕСТНОГО РЕФЕРЕНДУМА В ТРЕТЬЕЙ РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ**

В статье исследуются особенности становления правового института местного референдума с точки зрения его существенных критериев и их качественных показателей. Институт местного референдума законодательно был закреплён только в 2002 г. По сравнению с идеальной моделью, реальному, законодательно закреплённому показателю эффективности и действенности были присущи наполовину. Если конституционная реформа 2005 г. перестроила институт местного референдума по нескольким направлениям, доведя показатели эффективности и действенности до 75 процентов, то реформа 2015 г. в этом вопросе не зарегистрировала роста. Были усовершенствованы только некоторые декларативные концептуальные основы местного референдума. Следовательно, реальная модель местного референдума в РА имеет место усовершенствования, в особенности по уровню, обязательности, предмету проведения, количеству голосов принимаемого решения, обеспечению определенности конституционного регулирования содержательных критериев.

**Ключевые слова:** местный референдум, критерии, показатель, эффективность, определенность, идеальная и реальная модель, усовершенствование, житель общины.

LILIT MELIKSETYAN

Aspirant of Legal Administration Academy of the Republic of Armenia

**THE EVOLUTION OF CONSTITUTIONAL-LEGISLATIVE APPROACH OF LOCAL REFERENDUM IN THE THIRD REPUBLIC OF ARMENIA**

By studying the establishment features of local referendum from the prespective of essential criteries and qualitative indicators the author comes to conclusion that local referendum was ignored on the first half of existence of RA. By law of 2002 only half of ideal model's effectiveness amd activity indicators were typical to real model. After the constitutional reforms of 2005 the institution of local referendum is improved and the indicators of effectiveness and efficacy increased up to 75%, but during the similarly reforms of 2015 no increase recorded. Only some declarative-conceptual foundations improved. Therefore the real model has to be improved, especially holding levels, mandatory, subject, decision-making votes quantity, to provide the certainty of constitutional regulation of content criteries.

**Keywords:** local referendum, criterion, indicator, effectiveness, certainty, ideal and real models, improvement, community, community residence.

\* \* \*

**ՄԱՐԻԱՄ ԷՎՈՅԱՆ**

Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանի  
Իրավունքի և քաղաքագիտության ինստիտուտի ասպիրանտ,  
«ԷԿԵՆԳ» ՓԲԸ Իրավաբանական բաժնի պետ

**ԳՆԵՆՈՒ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ**

Սույն հոդվածը նվիրված է Հայաստանի Հանրապետության ընդհանուր բաժնային սեփականության իրավունքի շրջանակներում գնելու նախապատվության իրավունքի իրավական կարգավորման և կիրարկման մեջ տարաբնույթ հակասությունների վերծանմանը և ուսումնասիրմանը: Մասնավորապես՝ աշխատության մեջ հեղինակն ուսումնասիրել է հին հռոմեական կարգավորումները, ինչպես նաև վերծանել Խորհրդային Միության ժամանակաշրջանում այս իրավական ինստիտուտի օրենսդրական կարգավորման փորձը: Ավելին՝ հեղինակը հատուկ ուշադրության է արժանացրել Ռուսաստանի, Գերմանիայի և Ֆրանսիայի արտասահմանյան փորձի ուսումնասիրությանը և դիտարկել է որոշակի իրավական նորմերի ռեցեպցիայի հնարավորությունը:

Որպես սույն ուսումնասիրության արդյունք՝ հեղինակը, ուսումնասիրելով նաև գնելու նախապատվության իրավունքին առնչվող որոշակի հարցերի շուրջ տարբեր գիտնականների դիրքորոշումները, ներկայացրել է իր դիրքորոշումն ու մի շարք առաջարկություններ Հայաստանի Հանրապետությունում նշված ոլորտի օրենսդրության կատարելագործման ուղղությամբ:

**Բանալի բառեր.** ընդհանուր բաժնային սեփականություն, նախապատվության իրավունք, գնել, բաժին, Հայաստանի Հանրապետություն, իրավական բնույթ, էություն, տեղեկացում, համասեփականատեր:

**МАРИАМ ЭВОЯН**

Российско-Армянский (Славянский) Университет,  
аспирант Института права и политики,  
заведующая юридического отдела ЗАО «ЭКЕНГ»

**ПРЕИМУЩЕСТВЕННОЕ ПРАВО ПОКУПКИ ДОЛИ В РАМКАХ ПРАВА ОБЩЕЙ СОБСТВЕННОСТИ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ**

Статья посвящена выявлению и исследованию различных противоречий в законодательном регулировании и применении преимущественного права покупки доли в рамках права общей собственности в Республике Армения. В частности, в настоящей работе автором были рассмотрены древнеримские регулирования, а также выявлен опыт законодательного закрепления данного правового института в период Советского Союза. Более того, автор уделила особое внимание изучению зарубежного опыта России, Германии и Франции и рассмотрела возможность осуществления рецепции некоторых правовых норм.

В результате исследования автор, изучая также позиции различных ученых по конкретным вопросам преимущественной покупки доли, поделилась своим мнением и вывела ряд предложений по усовершенствованию законодательства данной сферы в Республике Армения.

**Ключевые слова:** общая долевая собственность, преимущественное право, покупка, доля, Республика Армения, юридическая природа, сущность, извещение, сособственник.

ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 107 2018



**MARIAM EVOYAN**

Russian- Armenian (Slavonic) University,  
PhD student at the Institute of Law and Politics,  
Head of Legal Department at “EKENG” CJSC

**THE PREEMPTIVE RIGHT OF PURCHASE IN THE SCOPES OF THE RIGHT OF COMMON OWNERSHIP  
IN THE REPUBLIC OF ARMENIA**

This Article is devoted to revealing and research of the various contradictions in the legislation and practice of implementation of right to preemptive purchase in the scopes of common ownership in the Republic of Armenia. In particular, in this study, the author examined the ancient Roman regulations, and revealed the experience of legal regulation of the subject in the period of Soviet Union. Moreover, the author payed special attention to studying the foreign legislation of Russia, Germany and France, and considered the possibility of performing reception of their certain legal norms.

As a result of this research, the author studied also the positions of various scholars on specific issues of the right of preemptive purchase, shared her opinion, and made a number of proposals for improving the legislation of the Republic of Armenia in the relevant field.

**Keywords:** common ownership, preemptive right, purchase, share, the Republic of Armenia, legal nature, essence, information, co-owner.

\* \* \*

**ԱՐԹՈՒՐ ՆԱԶԱՐԵԹՅԱՆ**

Հայ-ռուսական համալսարանի քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական դատավարության իրավունքի ամբիոնի հայցորդ

**ՎՃՈՒՐԵԿ ՎԱՐՈՒՅԹԻ ՆՊԱՏԱՎՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԸՍՏ ՀՀ ՆՈՐ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ  
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԱԳՐՔԻ**

Սույն հոդվածը նվիրված է 2018թ. ապրիլի 9-ից գործողության մեջ դրված ՀՀ քաղաքացիական դատավարության նոր օրենսգրքի վճռաբեկ վարույթում կատարված փոփոխություններին, մասնավորապես՝ այդ վարույթի նպատակներին և խնդիրներին: Հեղինակը փորձ է կատարել իրավական համեմատություններ անցկացնել ՀՀ նախկին և նոր քաղաքացիական դատավարության օրենսգրքի նորմերի միջև:

**Բանալի բառեր.** վճռաբեկ վարույթ, դատավարության նպատակ, դատավարության խնդիր, արդար դատաքննություն, դատական ակտեր, սահմանադրական դատարան, որոշումներ:

**АРТУР НАЗАРЕТЯН**

Соискатель кафедры гражданского права и гражданско-процессуального права Российско-Армянского университета

**ЦЕЛИ И ЗАДАЧИ КАССАЦИОННОГО ПРОИЗВОДСТВА ПО НОВОМУ ГРАЖДАНСКОМУ ПРОЦЕССУАЛЬНОМУ  
КОДЕКСУ РА**

Настоящая статья посвящена изменениям, выполненным в кассационном производстве нового Гражданского процессуального кодекса РА, вошедшего в действие с 9-ого апреля 2018 г., в частности целям и задачам этого производства. Автор попробовал провести правовые сравнения между нормами прошлого и настоящего Гражданского процессуального кодекса РА.

**Ключевые слова:** Кассационное производство, цель судопроизводства, задача судопроизводства, справедливое рассмотрение, судебные акты, конституционный суд, решения.

**ARTUR NAZARETYAN**

Post-graduate student at the department of Civil Law and Civil Procedure Law of Russian-Armenian university

**GOALS AND PROBLEMS OF CASSATION PROCEEDINGS ACCORDING TO THE NEW CIVIL PROCEDURE CODE RA**

This article refers to the changes made to the cassation proceedings of the new Civil Procedure Code of RA on April 9, 2018, particularly it refers to the purposes and problems of that proceedings. The author has tried to make legal comparisons between the standards of the former and the new Civil Procedure Code of Armenia.

**Keywords:** cassation proceedings, purpose of trial, proceedings problems, fair trial, juridical acts, constitutional court, decisions.

**ԱՆՆԱ ՀԱՎՈՐՅԱԼ**

ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի հայցորդ

**ԴԱՏԱԿԱՆ ՆԱԽԱԴԵՊԸ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ**

Սույն գիտական հոդվածում դատական նախադեպը դիտարկվում է Անգլիայի իրավունքի տեսության սահմաններում: Ներկայացվում են որոշ անգլիացի հեղինակների հայտնի հայեցակարգերը, այդ թվում նաև նրանց կողմից տրված սահմանումները, ուսումնասիրությունների օգտակար արդյունքները:

Մանրամասն բնութագրվում է դատարանների գործունեությունը, որտեղ հատուկ առանձնացվում է վերջիններիս իրավաստեղծ գործառույթը: Ներկայացվում են դատական որոշումների որոշ օրինակներ: Միաժամանակ անդրադարձ է կատարվում Անգլիայի իրավական համակարգում սահմանադրական բարեփոխումներին: Քննարկվում է նախադեպի օրենսգրքի ներքո սահմանելու հնարավորությունն ու դրա անհրաժեշտության հարցը:

**Բանալի բառեր.** նախադեպ, ratio decidendi, իրավական համակարգ, իրավունքի հայեցակարգեր, իրավունքի տեսություն, օրենսդրություն, դատական որոշում:

**АННА АКОБЯН**

Соискатель НАН РА, Института философии, социологии и права

**СУДЕБНЫЙ ПРЕЦЕДЕНТ С ТОЧКИ ЗРЕНИЯ ТЕОРИИ ПРАВА**

В данной научной статье рассматривается судебный прецедент в пределах английской правовой теории. Представлены известные концепции некоторых английских авторов, в том числе данные ими определения, а также плодотворные результаты исследований.

Детально рассматривается судебная деятельность, где особо выделяется судебная правотворческая функция. Представлены некоторые примеры судебных решений. Одновременно рассматриваются конституционные реформы в английской правовой системе. Обсуждается возможность включения прецедента в правовой кодекс и вопрос необходимости этого.

**Ключевые слова:** прецедент, ratio decidendi, правовая система, концепции права, теория права, законодательство, судебное решение.

**ANNA HAKOBYAN**

An applicant of the Institute of Philosophy, Sociology and Law of NAS RA

**THE JUDICIAL PRECEDENT FROM THE POINT OF VIEW OF THE THEORY OF LAW**

In the following scientific article the judicial precedent is considered within the limits of the theory of law of England. The famous concepts of some English authors are presented, including the definitions given by them, and the useful results of the studies.

The activities of the courts where the law-making function of the latter is specially separated are described in detail. Some examples of judicial decisions are presented. In the mean time, the constitutional reforms in the legal system of England are introduced. There is also discussed the possibility of establishing a precedent under the code and the issue of its need.

**Keywords:** precedent, ratio decidendi, legal system, concepts of law, theory of law, legislation, judicial decision.

**ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**

ՀՀ հաշվեքննիչ պալատի 2-րդ վարչության գլխավոր մասնագետ,  
 ՀՀ ԱԻՆ Ճգնաժամային կառավարման ակադեմիայի  
 բնական գիտությունների ամբիոնի վարիչ,  
 մանկավարժական գիտությունների թեկնածու

**ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ. ԷՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ  
 ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ**

Հոդվածում ներկայացվում են պետական բյուջետային վերահսկողության իրավական սկզբունքները, խնդիրները, գործառույթները, տրվում են դրանց սեղմ բնութագրերը: Հոդվածում փորձ է արվում տարանջատելու և բնութագրելու «վերահսկողություն» և «հսկողություն» հասկացությունները:

**Բանալի բառեր.** վերահսկողություն, հսկողություն, պետական մարմիններ, ֆինանսական միջոցներ, կառավարում, պետական ֆինանսական վերահսկողություն:

**ГРИГОР НЕРСИСЯН**

Главный специалист 2-го управления Аудиторской палаты РА,  
 заведующий кафедрой естественных наук  
 Государственной академии кризисного управления МЧС РА,  
 кандидат педагогических наук.

**БЮДЖЕТНЫЙ КОНТРОЛЬ. СУЩНОСТЬ И ОБОЗНАЧЕНИЕ В СИСТЕМЕ  
 ГОСУДАРСТВЕННОГО УПРАВЛЕНИЯ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ**

В статье представлены правовые принципы, задачи, функции государственного бюджетного контроля, даются их краткие характеристики. В статье делается попытка дифференцировать понятия «контроль» и «надзор».

**Ключевые слова:** контроль, надзор, государственные органы, финансовые ресурсы, управление, государственный финансовый контроль.

**GRIGOR NERSISYAN**

The chief specialist of the 2-nd board of the Audit chamber of R.A.  
 The chairman of natural sciences of the Crises management State academy,  
 candidate of pedagogical sciences

**BUDGETARY CONTROL. ESSENCE AND SIGNIFICANCE IN THE SYSTEM OF STATE  
 GOVERNANCE OF THE REPUBLIC OF ARMENIA**

The article includes legal principals of state budget control, issues functions, their summary characteristics are also given. The article attempts to distinguish between “supervision” and “control” concepts.

**Keywords:** supervision, control, state bodies, financial means, management, state financial supervision.

**ՀՀ ԳՍՏԱՆՏԱՅՈՒԹՅԱՆ «ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՀԱՆԳԵՍՈՒՄ ՏՊԱԳՐՎՈՂ ՀՈՂՎԱԾՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՅՎՈՂ ԴԱՀԱՆՑՆԵՐԸ**

Հանդեսում տպագրվող հոդվածները պետք է ունենան գիտագործնական կամ ուսումնամեթոդական բնույթ: Հոդվածը պետք է վերաբերի իրավագիտության ոլորտին, իսկ բացառիկ դեպքերում՝ մեծ հետաքրքրություն վայելող, գիտագործնական մեծ արժեք ներկայացնող ուսումնասիրություններին:

Սույն պահանջները բավարարող հոդվածները երաշխավորվում են տպագրության համար Հանդեսի գլխավոր խմբագրի կողմից: Իսկ դրանք չբավարարելու դեպքում հոդվածները վերադարձվում են հեղինակին:

Հոդվածը ներկայացվում է թղթային՝ տպագիր, և էլեկտրոնային (Microsoft Word) տարբերակներով: Թղթային տարբերակը պետք է ներկայացնել Հանդեսի խմբագրություն՝ ՀՀ, ք. Երևան, Վ.Սարգսյան 5 հասցեով, իսկ էլեկտրոնային տարբերակն ուղարկել orinakanutyun@prosecutor.am հասցեով:

Հոդվածը պետք է պարունակի վերնագիր (մինչև 20 բառ) և շարադրվի 8-10 էջի սահմաններում: Հոդվածին կից պետք է նաև երեք լեզվով (հայերեն, ռուսերեն և անգլերեն) ներկայացնել.

ա) Սեղմագիր (Абстракт, Abstract), բ) Բանալի բառեր (Ключевые слова, Keywords), գ) Հեղինակի մասին հակիրճ տեղեկություն:

Սեղմագիրը 300-500 բառի սահմաններում պետք է պարունակի հոդվածի համառոտ շարադրանքը: Բանալի բառերի քանակը յուրաքանչյուր լեզվով չպետք է հինգից պակաս լինի:

Եթե հոդվածի հեղինակը գիտական աստիճան չունի, ապա հոդվածի հետ պետք է ներկայացնի կարծիք (այսուհետ՝ Կարծիք)՝ տվյալ հոդվածի՝ գիտականորեն հիմնավորված լինելու, գիտական նորույթի, հոդվածում բարձրացված խնդրի ու դրա արդիականության մասին:

Իրավագիտության ոլորտին վերաբերող հոդվածների դեպքում Կարծիք կարող է տալ իրավաբանական գիտությունների թեկնածուի կամ դոկտորի գիտական աստիճան ունեցող անձը կամ իրավագիտության ոլորտում մեծ հեղինակություն վայելող իրավաբանը: Գիտության այլ ոլորտներին վերաբերող հոդվածների դեպքում Կարծիք կարող է տալ այդ գիտության թեկնածուի կամ դոկտորի գիտական աստիճան ունեցող անձը, ինչպես նաև այդ գիտության ոլորտում մեծ հեղինակություն վայելող մասնագետը: Կարծիքը պետք է ստորագրվի տվողի կողմից և/կամ կնքվի իր աշխատավայրի կնիքով:

Հոդվածի հայերեն տեքստը պետք է շարադրել GHEA Grapalat, ռուսերեն տեքստը՝ Baltica Cyrillic, իսկ անգլերեն տեքստը՝ Times New Roman տառատեսակներով: Հոդվածի յուրաքանչյուր էջ պետք է լինի A4 (201x297 մմ) չափի և ունենա լուսանցքներ. ձախից՝ 30 մմ, աջից՝ 10 մմ, վերևից՝ 20 մմ, ներքևից՝ 25 մմ: Հոդվածի հիմնական տեքստը շարադրվում է 12 տառաչափով, միջտողային հեռավորությունը՝ 1,5, իսկ վերնագրերը՝ 14 տառաչափով և մուգ (Bold):

Այն դեպքում, երբ հեղինակն օգտվում է այլ անձանց, գիտնականների աշխատանքներից և այլ աղբյուրներից, այդ մասին պետք է պատշաճ ձևով նշում կատարվի տեքստում, և/կամ հղումը տրվի ծանոթագրության միջոցով՝ յուրաքանչյուր էջում: Ծանոթագրության մեջ պետք է ներառել հետևյալ տվյալները՝ հեղինակ(ներ)ի ազգանուն(ներ)ը, անուն(ներ)ը, նյութի լրիվ անվանումը, հրատարակության տեղը, հրատարակչությունը, քաղաքը, տարեթիվը, հատորը, էջը: Օտարալեզու աղբյուրները չեն թարգմանվում: Ինտերնետային աղբյուրներից օգտվելու դեպքում ծանոթագրության մեջ պետք է նշվեն ինտերնետային հասցեն և հղում կատարելու վերջին ամսաթիվը: Արգելվում է այլ հեղինակների կարծիքը, միտքը, աշխատանքը ներկայացնել իբրև սեփական, օգտագործել ուրիշի գաղափարը, միտքը, վերլուծությունը՝ առանց հղում կատարելու: Արգելվում է նաև այլ աղբյուրից վերցվածը թարգմանել կամ նախադասությունը ձևափոխել՝ առանց հղում և/կամ ինքնուրույն վերլուծություն կատարելու:

**Հանդեսում տպագրվող հոդվածներն ամբողջությամբ արտահայտում են հեղինակների դիրքորոշումներն ու վերլուծությունները և, հնարավոր է, չհամընկնեն ՀՀ դատախազության դիրքորոշման հետ: ՀՀ դատախազությունը պատասխանատվություն չի կրում հոդվածի հեղինակի արտահայտած կարծիքի համար:**

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 107 2018